



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





2456

84  


---

U-40

Am. 14  
US 967

~~0210 - 10/11/78~~  
L.S.S.  
5/21/78

2011





№ 4409.

ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻ

• PUPP n

2003





Արդիւնքս և արտօժէր նստիլ սն արջիս րին քով :



ԳՕՂՈՍ  
ՈՒ  
Վերջին Գիրք



Վ. Ե. Ե. Տ. Կ  
Առաջը Զագար  
1860

1870

1870

1870

1870

1870

1870

40  
45

ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՊԵՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ-ԲԻԷՌԻ

ԳԱՂՂԻԱՅԻՈՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ՄԱՆՈՒԿ ՊԷՅ

ՄԱՀՏԵՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

1002  
5852

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Публичная Библиотека \*  
7/11--1922  
Имяна, Мясникова  
\*Ս. ՄՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶՄՐՈՒ

1859

37561 web.

9

2001  
1111

21282-60

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՍԻՐԵԼԻՈՅ ՄՕՐ ԻԻՐՈՅ

ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ

ԽՈՏԻԿԵԱՆ ՔԱԹՈՒՆՔՕ ՏԻԿՆՈՋ

ԿՈՂԱԿՅԻ

ՆԱԶԱՐԷԹ ԱՄԻՐԱՅԻ

ՄԱՀՏԵՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

Bl. 5. 6. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100.

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
540 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637  
TEL. 773-936-3200  
WWW.CHICAGO.EDU

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Անցեալ դարուն անուանի մատենա-  
գիրներէն մէկն եղաւ Յակոբոս Հենրիկոս  
Պեռնարտէն ալ Սէն-Բիէռ գաղղիացին ,  
որ սղտիկուց բարի կրթութիւն առնե-  
լով իր ծնողքէն՝ ինչուան իր սքանչելի  
գրուածքներուն մէջ ալ յայտնի երևցուց  
առաքինութեան վրայ ունեցած սէրը :  
ՊՅՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻ ըսուած գորովաշարժ  
վիպասանութիւնը իր ամենէն երևելի ու  
անուանն անմահացընող գործքն է , որ ա-  
մէն ազգ թարգմանած են :

Այնպէս մեծ է ամենուն՝ բայց մանա-  
ւանդ վշտացեալ անձանց վրայ աս գրքիս  
ըրած տպաւորութիւնն, որ ինչուան լալ  
կու տայ. կը ստորագրէ երկու թշուառ  
ու առաքինի մայրեր մարդկանց զրկանք-  
ներէն հեռացած օտար կղզւոյ մը մէջ՝  
կեանքերնին առաքինութեամբ անցընե-  
լով, ու երկու նորաբոյս բողբոջներու  
վրայ գուրգուրալով, որ իրենց միայնիկ  
մխիթարութիւնն էին այնքան դառն վիշ-  
տերնուն մէջ: Պօղի և Վիրգինեայ որ-  
դիական գութն, իրարու ունեցած ան-  
մեղ ու բնական սէրն, անկեղծութիւն-  
նին ու բարեգործութիւննին կը զմայլե-  
ցընեն ու կը խրատեն զմարդ, ու ամենէն  
ետքը իրենց աղէտալի վախճանը տխրու-  
թեամբ կը պատէ սրտերնիս, ցուցընելով  
աշխարհիս ունայնութիւնը: Տըլագուր  
տիկինն ու Մարգարիտան օրինակ ըլլան  
մայրերու, Վիրգինի՝ դեռահաս օրիոր-  
դաց, Պօղ ալ՝ երկտասարդներու:



Աս սիրուն ու տխուր պատմութիւնն՝  
արթնցընելով իմ սրտիս մէջ ալ հին յի-  
շատակներ, թարգմանելու փափաք եկաւ  
ինծի: Հիմա կ'ընծայեմ Ազգիս իմ գրա-  
ւոր աշխատութեանս աս նուաստ երա-  
խայրեքը, ոչ այնչափ մատենագրին ար-  
ժանի թարգմանութիւն մը սեպելով զաս,  
որչափ իբրև գրգիռ մը ինծի հասակակից  
երիտասարդաց. որպէս զի վառուին ի-  
րենք ալ ուրիշ բարոյական պատմութիւն-  
ներու աւելի գերազանց ու ընտիր թարգ-  
մանութիւններովը զարդարել իրենց Ազ-  
գը:

Ահա աս դիտմամբ միայն համարձակե-  
ցայ հրատարակել աս գործքս ու խնդրել  
ընթերցողաց ներողամտութիւնն անոր  
անկատարութեանը համար:



## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ

Այս համառօտ գրուածքիս մէջ մեծ զխամունքներ ունեցեր եմ. ջանացի նկարագրել անանկ երկիր մը ու այնպիսի բոյսեր, որ բոլորովին տարբեր են Եւրոպայէն: Մեր բանաստեղծները բաւական հանգչեցուցեր են իրենց տարփածուները վտակներու եզերքը, մարգագետիններու մէջ ու տերևախիտ կազամասներու տակ: Իսկ ես ուղեցի զանոնք նստեցընել ծովափունքը, ժայռերու ստորոտը, գոգոյ ծա-

ուերու՝ սպանեաններու ու ծաղկեալ կի-  
արոնենիներու շուքերուն տակը: Աշխար-  
հիս միւս մասին մէջ Թէոկրիտէաներ ու  
Վիրգիլիոսներ կը պակսին՝ որ գէթ նոյն-  
չափ գեղեցիկ սպասկերներ առջնիս գը-  
նէին, որչափ մեր երկիրն ստորագրեցին:  
Գիտեմ որ ընտիր ճաշակ ունեցող շատ  
ճամբորդներ՝ հիանալի նկարագրութիւն-  
ներ ըրած են հարաւային ծովուն շատ  
կղզիներուն վրայօք. բայց մէջի բնակիչ-  
ներուն բարքն, և առաւելապէս հոն եղող  
Եւրոպացւոց կենցաղը՝ շատ հեղ կ'աւրեն  
այն երկիրները: Ես ուղեցի միացնել այ-  
րեցած գօուռոյն մէջ եղած բնութեան գե-  
ղեցկութիւնը՝ պզտի ընկերութեան մը  
բարոյական վայելչութեանը հետ. նաև ու-  
ղեցի հոս յայտնել շատ մեծ ճշմարտու-  
թիւններ, որոնց մէջ աս ալ՝ Թէ մեր եր-  
ջանկութիւնը բնութեան ու առաքինու-  
թեան հետևելով ապրելուն վրայ է: Սա-

կայն երջանիկ տնուորներ նկարագրելու համար՝ հարկ չեղաւ ինծի սուտ պատմութիւն մը հնարել: Կրնամ հաստատել որ անոնք՝ որոնց վըայ որ պիտի խօսիմ, ստոյգ եղած են, և թէ իրենց պատմութեան գլխաւոր դիպուածները ճշմարիտ են: Գաղղիոյ Կղզւոյն ինծի ծանօթ բնակիչներէն շատը վկայած են աս բաներուս. ես միայն քանի մը թեթեւ պարագաներ աւելցուցած եմ, որոնք իմ գլուխս եկած ըլլալով՝ նաև անոնք ալ ստոյգ կը սեպուին: Քանի մը տարի առաջ՝ երբ խիստ անկատար ստուերագիր մը շիներ էի աս հովուական նկարագրութեանս, աղաչեցի աղնիւ տիկնոջ մը (որ մեծամեծներու հետ միշտ կը կենակցէր), նմանապէս ծանրաբարոյ մարդիկներու (որ ընդհակառակն անոնցմէ հեռու կը կենային՝) լսելու իմ գրուածքիս ընթերցմունքը, որպէս զի առաջուց իմանամ թէ ինչ տը-

պաւորութիւն պիտի ընէր տարբեր բնաւորութեամբ ընթերցողներու վրայ • և գոհ եղայ անոնց ամենուն արտասուելը տեսնելով: Ասիկայ մի միայն դատաստանն եղաւ որ անոնցմէ ընդունեցայ • իմ ուղածս ալ այսչափ էր: Բայց ինչպէս որ շատ անգամ՝ քիչ տաղանդ ունեցողի վրայ կը միանայ մեծ պակասութիւն մը, ասանկ ալ աս յաջողութիւնը իմ փառասիրութիւնս շարժեց՝ որ այս իմ գըրուածքիս անունը ՆԿԱՐԱԳԻՒՐ ԲՆՈՒԹԵԱՆ գնեմ: Բարեբաղդաբար յիշեցի որ ծնած երկրիս կլիմային բնութիւնն ալ դեռ որչափ անծանօթ էր ինծի, և թէ ան երկիրներուն մէջ՝ որոնց բերքերը ճամբորդի մը պէս միայն տեսեր էի՝ որչափ ճոխ, բազմատեսակ, սիրուն, փառաւոր ու խորհրդական էր անիկայ • և թէ ընդ հակառակն ես որչափ զուրկ էի յաջողակութենէ, կիրթ ախորժակէ ու բացատրու-

Թե՛նէ, զան ճանչնալու և նկարագրելու  
համար : Ան ատեն խելքս գլուխս եկաւ .  
ուստի աս պզտի ճաշակը իմ ԶՆՆՈՒԹԻԻՆ  
ԲՆՈՒԹԵՄՆ անուանեալ գրուածքիս հետ  
ընծայեցի (որն որ այնքան սիրով ամէնքը  
ընդունեցան), որպէս զի աս անունս յի-  
շեցընէ կարգացողին իմ անկարողութիւնս  
ու մոռնալ չտայ իր ներողամտութիւնը :



1875

1. The first part of the report is devoted to a general description of the country, its position, extent, and population. It also contains a list of the principal towns and villages, and a description of the principal occupations of the people.

2. The second part of the report is devoted to a description of the principal rivers and streams of the country, and to a description of the principal lakes and ponds. It also contains a list of the principal fisheries and a description of the principal fisheries.

3. The third part of the report is devoted to a description of the principal mountains and hills of the country, and to a description of the principal valleys and plains. It also contains a list of the principal mountains and hills, and a description of the principal mountains and hills.

4. The fourth part of the report is devoted to a description of the principal forests of the country, and to a description of the principal forests and woods. It also contains a list of the principal forests and woods, and a description of the principal forests and woods.

5. The fifth part of the report is devoted to a description of the principal minerals of the country, and to a description of the principal minerals and metals. It also contains a list of the principal minerals and metals, and a description of the principal minerals and metals.

6. The sixth part of the report is devoted to a description of the principal animals of the country, and to a description of the principal animals and birds. It also contains a list of the principal animals and birds, and a description of the principal animals and birds.

7. The seventh part of the report is devoted to a description of the principal plants of the country, and to a description of the principal plants and flowers. It also contains a list of the principal plants and flowers, and a description of the principal plants and flowers.

8. The eighth part of the report is devoted to a description of the principal diseases of the country, and to a description of the principal diseases and ailments. It also contains a list of the principal diseases and ailments, and a description of the principal diseases and ailments.

9. The ninth part of the report is devoted to a description of the principal customs and manners of the country, and to a description of the principal customs and manners. It also contains a list of the principal customs and manners, and a description of the principal customs and manners.

10. The tenth part of the report is devoted to a description of the principal laws and regulations of the country, and to a description of the principal laws and regulations. It also contains a list of the principal laws and regulations, and a description of the principal laws and regulations.





## ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻ

Գաղղիոյ Կղզւոյն<sup>1</sup> մէջ Բոր-Լուի քաղաքին ետեւ լեռ մը կայ, որուն արևելեան կողմը կը տեսնուին ատենով մշակուած երկրի մը վրայ երկու պզտի խոր ճիւղերու աւերակներ: Ասոնք խոշոր ժայռերէ ձևացած հովտի մը գրեթէ մէջ տեղը կ'իյնան, որն որ մի միայն ելք ունի հիւսիսային կողմէն: Չախ դին է ԼըՄոան տը լա Տէգուվէրդ կամ Սար Գիւտի ըսուած լեռը, ուսկից կը տեսնուին կղզին մտնող նաւերը, ու լեռան ստորոտն է Բոր-Լուի քաղաքը՝ իսկ աջակողմն ան ճամ-

<sup>1</sup> Գաղղիոյ կղզին Մատակասգարի մօտ է Անգղիացոց իշխանութեան տակը. գլխաւոր քաղաքն է Բոր-Լուի:

1002  
5852

21282-60

բան՝ որ քաղքէն Բամբըլմուսներու թա-  
ղը կը հանէ. անկէ ալ նոյն անուշտով է-  
կեղեցին կ'երթըցուի, որ մեծ դաշտի մը  
մէջ կը հանգչի իր պամպու<sup>1</sup> ծառերով  
զարդարուած ճամբաներովը, ու քիչ մը  
հեռուն ընդարձակ անտառ մըն ալ կայ,  
որ ինչուան կղզւոյն ծայրը կը տարածուի:  
Առջևդ կը տեսնես ծովեզերքին վրայ Գե-  
րեզմանի ըսուած ծոցը, և քիչ մը դէպ  
'ի աջակողմը Թշուառութեան հրուան-  
դանը. իսկ անկէ ալ հեռու լայնածաւալ  
ծովուն մէջ քանի մը անբնակ կղզեակ-  
ներ կան, որոնցմէ մէկն է Գօէն տը Միր  
ըսուածն որ պատնէշի մը կը նմանի:

Աս հովտիս մուտքին մէջ (ուր որ այս-  
չափ բան կը տեսնուի) անդադար կը լը-  
սուին լերան արձագանգներէն կրկնուած  
հովերուն շառաչմունքը՝ որոնք մօտաւոր  
անտառները կը խռովեն, ու ալիքներուն  
ճայթմունքը՝ որ հեռուէն ժայռերուն

<sup>1</sup> Պամպուն Հնդկաստանի ծովեզերեայ կող-  
մերը բուսնող եղէգի պէս բոյս մըն է:

զարնուէլով կը վիշխն : Բայց խրճիթնե-  
րուն քովը ձայն մը չլսուիր , ու ահաւոր  
առապար ժայռերէ զատ ուրիշ բան չե-  
րևար , որոնք պարսպի մը պէս չորս գին  
պաշարած են : Աս ժայռերուն ստորտան  
ու ճեղքերուն մէջ և ինչուան բարձր ու  
ամպապատ գագաթմանցը վրայ խիտ խիտ  
ծառեր բուսած են : Շատ հեղ այս լեռ-  
ներուն կանաչ ու մթնագոյն կողերը ան-  
ձրեներէ ծիածանի գոյներով կը ներկուին ,  
և ասոնց ստորտը աղբիւրներ կը բխեն ,  
որոնցմէ կը ձևանայ Լադանիէ անունով  
պզտի գետը : Այս շրջապատիս մէջ ամէն  
բան անգորրու թեան մէջ է , օգնալ , ջուրն  
ալ , լոյսն ալ , և լուսթիւն մը կը տիրէ  
հոն : Հաղիւ թէ արձագանգը կը կնուե-  
լով տափարակ բլուրներու վրայ տըն-  
կուած արմաւենիներուն քաղցր շնչիւնը  
կը լսուի , քանի որ անոնց գագաթները  
հովերէն կ'երերան : Աս հովիտս մեզմ'  
լուսով մը լուսաւորուած է , որովհետև  
արևը կէսօրը միայն կ'երևայ հոս . բայց  
արշալուսոյն՝ իր ճառագայթները մէկէն

կը զարնեն կատարքին վրայ ու բարձրաբերձ ժայռերն ալ լերան ստուերներէն վեր խնալով ոսկեգոյն կ'երևան կապոյտ երկնքին վրայ :

Ախորժանօք կ'երթայի աս տեղը , ուր չէ թէ միայն գեղեցիկ տեսարանովը կը զմայլի մարդ , այլ նաև այն խորին առանձնութեամբն որ հոն տիրած է : Օր մը աս խրճիթներուն ստորոտը նստած՝ երբոր անոնց աւերակները կը զննէի , տեսայ որ հոն տեղէն ծերունի մարդ մը կ'անցնէր . կարճ բաձկոն ու երկայն անդրավարտիք մը հագած էր տեղւոյն հին բնակչացն ու ճովը . ոտքը մերկ , ձեռքն ալ եբենոսէ գաւազան մը բռնած : Մազերը ճերմրկեր էին , կերպարանքը պարզ ու ազնուական . յարգութեամբ ողջունեցի զինքը . ինքն ալ բարևս առաւ : Քիչ մը ատեն ուշադրութեամբ երեսս նայելէն վերջը , մօտեցաւ ու եկաւ քովս գետնին վրայ նստաւ : Այս ինձի ցուցուցած ընտանութենէն շարժելով , սկսայ հետը խօսիլ . « Հայր իմ , ըսի , գիտես արդեօք թէ որուն էին աս

խրճիթները: — Որդեակ իմ, ըսաւ, քը-  
սան տարի կայ որ այս խեղճ խրճիթնե-  
րուն ու այս չմշակուած երկիրներուն  
մէջ երկու տնուորներ կը բնակէին, և  
երկուքն ալ իրենց վիճակին վրայ շատ  
գոհ էին: Իրենց պատմութիւնը սրտա-  
շարժ է. բայց այս կղզւոյս մէջ՝ թէ և  
հնդկաստանի ճամբուն վրայ է, ո՞ր եւրո-  
պացւոյն հետաքրքրութիւնը կրնայ շար-  
ժիլ քանի մը խեղճ անձանց վիճակն իմա-  
նալու: Ո՞վ կ'ուզէ դարձեալ հոս երջա-  
նիկ կեանք անցընելու համար՝ աղքատ ու  
ամենուն անձանօթ մնալ: Մարդիկ մե-  
ծամեծներու ու թագաւորաց պատմու-  
թիւնները միայն կ'ուզեն լսել, որ բանի  
մըն ալ չգար: — Հայր իմ, ըսի, քու ե-  
րեսէդ ու խօսքերէդ կ'երևայ թէ գլխէդ  
շատ բան անցած է. կ'աղաչեմ, թէ որ  
ժամանակ ունիս, պատմէ ինձի ինչ որ  
գիտես աս անսպատացեալ տեղւոյն մէջ  
ատենով բնակողներուն վրայ. գիտցիր որ  
աշխարհիս նախապաշարմունքներովը չա-  
րաչար ապականած մարդն ալ ախորժա-

նօք մտիկ կը դնէ, երբոր բնութեան ու առաքինութեան տուած երջանկութեանը վրայ խօսք կը բացուի » : Ան ատեն ծերունին քիչ մը ատեն ձեռուրները ճակտին վրայ դրած կեցաւ, նման այն մարդուն՝ որ միտքը բերել կը ջանայ անցած բանի մը այլ և այլ պարագաները • Ետքը ասանկ սկսաւ պատմել :

Նորմանտիացի երիտասարդ մը Պ • Տըլադուր անուամբ, պարապ տեղ Գաղղիոյ մէջ պաշտօն մը ու իր ընտանիքէն ալ ստակի օգնութիւն խնդրելէն ետե՛ ուրոշեց 1726 տարւոյն որ ելլէ աս կղզիս դայ ապրուստ մը ճարելու համար • Հետն առաւ իր դեռահասակ ընկերը, զոր խանդաղանօք կը սիրէր, ինչպէս ինքն ալ հաւասարապէս կը սիրուէր : Այս կիներ Նորմանտիոյ հին և հարուստ տներէն էր • Բայց գաղտուկ ու առանց օժտի կարգուած էր հեար • որովհետեւ երիտասարդն աղնուահան ցեղէ չըլլալով աղջկան ծնողքը դէմ կեցած էին աս բանիս : Ուստի



բերաւ իր կլինը այս կղզւոյս Բոր-Լուի  
քաղաքը, և ինքը նաւ մտաւ Մատակաս-  
գար երթալու, յուսով որ հոն քանի մը  
հնգիկ գերիներ գնէ ու նորէն դառնայ  
գայ, ու հոսաեղս տեղաւորուի: Մատա-  
կասգար հասաւ այն գէշ եղանակին՝ որ  
հոկտեմբերի կէսէն կը սկսի, ու հասնե-  
լէն քիչ ատեն ետքը ծանր ջերմէ մը բըռ-  
նուելով մեռաւ. աս ջերմը տարւոյն մէջ  
վեց ամիս կը տևէ հոն, և ասոր համար  
Եւրոպացիք ոչ երբէք պիտի կարենան  
այն կղզւոյն մէջ տեղաւորուիլ: Այս Ե-  
րիտասարդին հետը տարած ապրանքնե-  
րը իր մահուընէն ետքը ասդիս անդին  
ցրուեցան, ինչպէս որ սովորաբար կը պա-  
տահի իրենց հայրենիքէն դուրս մեռնող-  
ներուն: Իր կլինը Գաղղիոյ Վղզւոյն պէս  
տեղ մը՝ ուր ոչ ապրուստ ունէր և ոչ  
մէկու մը վրայ յանձնարարութիւն, որ-  
բեւարի ու յղի մնաց, հնգիկ աղախնէ մը  
զատ ուրիշ ստացուածք մը չունենալով:  
Եւ ալ չուզէրով մարդու մը ձեռք տալ՝  
իբր միակ սիրելի ամուսինը կորսնցընէ-

լէն ետքը, թշուառութիւնը սիրտ աը-  
լաւ իրեն, միտքը դրաւ որ սկսի գերիին  
հետ կտոր մը երկիր մշակել, որպէս զե  
կարենայ գոնէ անով ապրիլ:

Ասանկ ամայի կղզւոյ մը մէջ, ուր եր-  
կիրներն ամենուն ընտրութեանը թո-  
ղուած են, աս կնիկը չընտրեց չառաւ բա-  
րեբեր ու առուտուրի յարմար երկիր-  
ներ, հասա լերան կիրճ մը ու ծածուկ  
բնակարան մը փնտրուեց, ուր առանձին  
ու անձանօթ կերպով կարենար ապրիլ.  
հեռացաւ քաղաքէն ու եկաւ քաշուեցաւ  
այս ժայռերուն մէջ, ինչպէս թռչուն մը  
իր բունիկը: Որովհետև խիստ բնական է  
ամէն վշտակիր ու զգայուն եղող մարդիկ-  
ներու վայրենի ու անբնակ տեղեր քա-  
շուիլ, ինչպէս թէ ժայռերը դժբաղդու-  
թեանց դէմ պարիսպներ ըլլային, կամ  
թէ բնութեան անդորրութիւնը կարե-  
նար հանդարտել թշուառութենէ յու-  
զեալ հոգւոյ մը խռովութիւնը: Բայց  
Աստուծոյ նախախնամութիւնը, որ մեզի  
օգնութեան կը հասնի՝ երբոր մենք պէտք



եղած ապրուստը միայն կը խնդրենք, Տը-  
լադուր տիկնոջն ալ այնպիսի մէկ ստա-  
ցուածք մը պատրաստեր էր, որ ոչ հա-  
րըստութեամբ, ոչ ալ մեծութեամբ կըր-  
նայ մարդս ձեռք բերել. և աս էր բարե-  
կամուհի մը:

Տարիէ մը 'ի վեր այս տեղուանքս աչ-  
խոյժ, բարի ու գթած կիին մը կը բնակէր՝  
Մարգարիտա անուամբ: Պրըդաներ ծնած  
էր հասարակ գեղացւոյ տնէ մը. սիրելի  
էր իր ընտանեաց, և երջանիկ եղած կ'ըլ-  
լար՝ թէ որ դրացի աղնուական երիտա-  
սարդի մը սիրոյն հաւտացած չըլլար, որ  
խօսք տալով թէ հետը կարգուի՝ իր փա-  
փաքը կատարելէն ետքը քովէն հեռացեր  
էր, ու ինչուան նաև չէր ուզած անկէ ու-  
նենալու տղուն ապրուստ մը կապել: Ա-  
սիկայ ալ ան ատեն որոշեր էր որ բոլո-  
րովին իր ծնած գեղը թողու ու երթայ  
իր սխալանքը գաղթականներուն մէջ  
ծածկէ, հեռու իր հայրենիքէն՝ ուր կոր-  
սընցուցեր էր աղքատ և պարկեշտ օրիոր-  
դի մը մէկ հատիկ օժիտն, որ է բարի ա-

նունը : Ծեր հնդկի մը հետ, զոր ուրիշէ  
քիչ մը փոխ ստակ առնելով գներ էր,  
կը մշակէր աս երկրիս մէկ ծայրը : Իրեն  
երջանկութիւնը քանի մը ամսէ 'ի վեր  
ծնած տղան էր :

Տըլադուր տիկինն իր աղախինը հետը  
առած՝ եկաւ գտաւ հոս Մարգարիտան  
որ զակկին կաթ կու տար : Ուրախացաւ  
այնախիտ կնկան մը հանդիպելուն վրայ,  
և շուտով հասկըցաւ թէ անոր վիճակն  
ալ նման էր իր վիճակին : Մարգարիտա  
երբոր Տըլադուր տիկինէն լսեց իր պատ-  
մութիւնը՝ գութը շարժեցաւ, և աւելի  
ուզելով անոր վստահութիւնը շահիլ քան  
թէ համարմունքը՝ առանց բան մը ծած-  
կելու խոստովանեցաւ ըրած անխոհեմու-  
թիւնը : « Ես, ըսաւ, իմ յանցանքիս պա-  
տիժը գտայ, բայց դու, տիկին . . . , դու  
խելացի ու թշուառ » • և լալով իր խոր-  
ճիթն ու իր բարեկամութիւնը հրամցուց  
անոր : Այս սիրալիւր ընդունելութենէն  
Տըլադուր տիկնոջ սիրան ելլելով, պլուե-  
ցաւ գրկեց զան ու ըսաւ . « Ա՛հ, Աս .

տուած կ'ուզէ վիշտերս դադրեցընել, քու սիրտդ շարժելով ինծի պէս անծանօթի մը այնպիսի մարդասիրութիւն ցուցընելու, որ ծնողքէս ալ չեմ տեսած երբէք »:

Ես կը ճանչնայի Մարգարիտան . և թէ պէտ միջոնուկէս տեղ ասկէց հեռու կը բնակիմ Երկայն լերան ետևը, այսու ամենայնիւ զիս անոր դրացին կը սեպէի: Եւրոսայի քաղաքներուն մէջ՝ փողոց մը, նոյն խիստ պատ մը տարիներով արդէլք կ'ըլլան մի և նոյն ազգատոհմի անձանց իրարու հետ տեսնուելուն: Բայց գաղթականաց մէջ դրացւոյ պէս կը նային անոնց, որ լեռներով ու անտառներով զատուած են: Մանաւանդ ան միջոցին՝ որ այս կղզիս քիչ առուտուր ունէր Հընդկաստանի հետ, պարզ դրացութիւնն ալ բարեկամութեան դրաւ մըն էր, օտարականաց հիւրասիրութիւն ընէլն ալ պարտք ու զուարճութիւն: Երբոր լսեցի թէ դրացիս ընկեր մը ունեցեր է, գնացի տեսնելու, որպէս զի թէ մէկին և թէ մէկալին կարենամ ծառայութիւն ընել: Տըլագուր

տիկինը սիրելի, ազնուական ու մեղա-  
մաղձիկ կերպարանք մը ունէր, և նոյն ա-  
տենները զաւակ բերելու մօտ էր: Չուր-  
ցեցի աս երկու տիկիներուն թէ պէտք  
էր իրենց տղոցը օգտին համար, և մանա-  
ւանդ որպէս զի օտար մարդ չգայ ու չբնա-  
կի հոն, աս հովիտը մէջերնին բաժնեն, որ  
գրեթէ քսան արտավար տեղ էր: Ա-  
նոնք մէկէն ինծի յանձնեցին բաժինն ո-  
րոշելը:

Երկու հաւասար մասն բաժնեցի. մէկ  
մասը կը պարունակէր այս շրջապատին  
վերին կողմը, սկսեալ այս բարձր ու ամ-  
պապատ ժայռին գլխէն ինչուան ան սե-  
պացեալ պատառուածը՝ որ կը տեսնես  
լերան ծայրը, ու անոր համար է որ այն  
ծակին Անպրազիւր կ'ըսեն (որ բերդի մը  
վրայ թնդանօթ նետելու համար բա-  
ցուած ծակը կը նշանակէ), որովհետև  
խիստ կը նմանի անոր: Այս երկիրս այն-  
պէս լցուած է ժայռերով ու վախերով,  
որ մարդ հազիւ թէ կրնայ քալել. այսու  
ամենայնիւ մէջը մեծամեծ ծառեր կը բուս-

նին , և անհամար աղբիւրներով առու-  
ներով ոռոգուած է : Մէկալ մասին մէջ  
է ամբողջ վարի կողմը որ կը տարածուի  
Լադանիէ գետին բոլոր եզերքը , ինչուան  
այս մուտքս՝ ուր մենք կեցած ենք , և  
ահա ասկէց կը սկսի վազել գետը , ու եր-  
կու բլուրներու մէջ տեղէն անցնելով՝  
կ'երթայ կը թափի ինչուան ծով : Կը  
տեսնես որ աս մասիս մէջ քանի մը կտոր  
գալարագեղ տեղուանք կան , ու գետինն  
ալ բուսական հարթ է : Բայց մէկալէն ա-  
ղէկ չէ , որովհետև անձրեային ժամանակ  
Ճախճախուտ կ'ըլլայ ու ցամաքութեան  
ատեն կապարի սէս կը կարծրանայ . և  
երբոր ուզեն ջրանցք մը փորել՝ հարկ  
կ'ըլլայ որ կացիններով սլառուեն հողը :

Այս երկու բաժիններն որոշելէն ետ-  
քը , խորհուրդ տուի տիկիններուն որ  
մէջերնին վիճակ ձգեն : Վերի մասը Տը-  
լադուր տիկնոջ ինկաւ ու վարի մասը  
Մարգարիտայի . երկուքն ալ գոհ եղան  
իրենց բաժնին . միայն աղաչեցին զիս բնա-  
կարաննին իրարմէ չզատելու , « Որպէս

զի, ըսին, կարենանք միշտ մէկզմէկ տեսնել ու իրարու հետ խօսիլ և մէկմէկուօգնել » : Սակայն մէյմէկ առանձին բնակարան պէտք էր իրենց : Մարգարիտայի տնակը հովտին մէջ տեղը կ'ընար՝ անմիջապէս իր երկրին սահմանագլուխը. ուստի անոր քովը Տըլադուր տիկնոջ երկրին սահմանագլուխը՝ ուրիշ տնակ մ'ալ չինեցի, անանկ որ աս երկու բարեկամոհները իրարու դրացի եղան ու միանգամայն բուն իրենց կալուածքին մէջ էին : Ես անձամբ լեռը գացի, պատնէշի ցիցեր կտրեցի, ծովեզերքէն ալ լադան<sup>1</sup> ծառի տերեւներ բերի աս երկու խրճիթները շինելու համար, որոնց հիմա ոչ դուռը կը տեսնես և ոչ ծածքը : Աւաղ. մնացածն ալ բաւական է մտքիս առջև բերելու անոնց յիշատակը : Ժամանակը՝ որ այնպէս արագութեամբ կը կործանէ թադաւո-

<sup>1</sup> Լադան ըսուած ծառը արմաւենույ տեսակ մըն է եռանկիւն բնով, որ Անդիլէան կղզիներուն մէջ կը բուսնի :



րութեանց յիշատակարանները, կարծես  
թէ այս անապատիս մէջ խնայել կ'ուզէ  
բարեկամութեան յիշատակարաններուն,  
և քանի որ կ'ապրիմ իմ կսկիծս ալ մըշ-  
տատե ընելու:

Այս երկրորդ խրճիթին շինուելէն ան-  
միջապէս ետքը՝ Տըլադուր տիկինը աղ-  
ջիկ զաւակ մը ծնաւ. և որովհետեւ Մար-  
գարիտայի տղուն, որ Պօլ կը կոչուէր,  
ես կնքահայր եղեր էի, Տըլադուր տիկի-  
նը աղաչեց զիս որ իր աղջիկն ալ ես բըռ-  
նեմ սուրբ աւազանին վրայ իր բարեկա-  
մուհւոյն հետ մեկտեղ, որ Աիրգինի ա-  
նունը դրաւ նոր ծնած աղջկանը: « Այս  
աղջիկն առաքինի ու երջանիկ պիտի ըլ-  
լայ, ըսաւ: Ես թշուառ չէի ըլլար, թէ  
որ առաքինութենէ չհեռանայի »:

Երբոր Տըլադուր տիկինն իր քառսուն-  
քէն ելաւ, այս երկու պզտիկ կալուած-  
ները իմ ատեն ատեն հոգ տանելովս և  
մանաւանդ իրենց գերիներուն ժրաջան  
աշխատութիւններովը սկսան բաւակա-  
նապէս պողաբերել: Մարգարիտայի գե-

ըին, որ Գոմինիկոս կ'անուանէր, սև ափրիկեցի մըն էր. Թէպէտ տարիքը առած, բայց դեռ ուժը վրան էր. բաւական փորձ ու բնական ճարտարամտութիւն ալ ունէր: Հաւասար սիրով կ'երթար կը մշակէր երկու տնուորներուն այն երկիրները, որոնք որ իրեն աւելի պարարտ կ'երևային, ու կը նայէր որ իւրաքանչիւր երկրի իրեն պատշաճ ու յարմար բանը ցանէ: Միջակ կարգի երկիրները կորեակ ու եգիպտացորեան կը ցանէր. աղէկ երկիրներուն մէջ՝ քիչ մը ցորեն. ճախճախուտ տեղուանք՝ բրինձ. ժայռերուն ստորոտն ալ՝ Ամերիկայի ու Եւրոպայի դդումներ ու վարունգներ, որոնք կ'ախորժին այնպիսի տեղեր պլլուելով վեր ելլել: Չոր տեղուանքը գետնախնձոր կը տնկէր, որ խիստ անոյշ կ'ըլլային. բարձր տեղուանքը՝ բամբակենիներ, ուժով երկրի մէջ ալ՝ շաքարի եղէգ: Բլուրներու վրայ խահուէի տունկ, ուր Թէպէտ հատերը պզտիկ կ'ըլլան՝ բայց ազնիւ: Գետին երկայնութեան վրայ







S. Berrascotti. Inc.

ու խրճիթներուն բոլորտիքը՝ պանեանի ծառեր<sup>1</sup>, որոնք բոլոր տարին երկայն ճիւղեր կու տան պտուղներով ծանրացած ու աղէկ շուք կը ձգեն. վերջապէս, քանի մը արմատ ալ ծխախոտ՝ թէ իր և թէ տանտիկիներուն վիշտերն սփռփռու համար : Երբեմն լեռը կ'երթար վանելու համար հարկաւոր եղած փայտը կտրելու, ու երբեմն կ'երթար քնակարաններուն մէջ ասղիս անդին ցցուած ժայռերը կը կոտորտէր, որպէս զի ճամբաները շտկուին : Բոլոր աս գործքերը խելքով ու արագութեամբ կ'ընէր, որովհետեւ սրտանց կ'աշխատէր : Խիստ հաւատարիմ էր Մարգարիտայի, նմանապէս Տըլադուր Թիկնոյը, որուն աղախնոյն հետ կարգուէր էր Վիրգինեայ ծնած օրը : Շատ սէր ունէր իր կնիկանը վրայ, որ Մարիամ կը կոչուէր. ասիկայ Մա-

<sup>1</sup> Պանեան ծառը Հնդկաստանցիք կը պաշտեն. ասոր ճիւղերը ինչուան գետին հասնելուն պէս արմատ կը ձգեն ու նոր ծառ կը ձևանան :

տակասագար ծնած էր, և անկէջ հետը  
քանի մը արուեստներ բերեր էր, ինչ  
պէս անտառային խոտերով կողովներ՝ և  
մանաւանդ Հնդկաց սփածանելիներ հիւ  
սելը: Խիստ ճարպիկ, քաղաքավար ու  
հաւատարիմ էր. իր վրայ էր կերակուր  
եփելու, հաւեր մեծցընելու հողը. նաև  
երբեմն երբեմն կ'երթար Բոր-Ղուի քա  
ղաքը՝ այս երկու տնուորներուն աւելորդ  
բերքերը ծախելու համար, որ խիստ քիչ  
բան էր: Թէ որ ասոնց վրայ աւելցընելու  
ըլլատ երկու այծերն որ տղոց քովը մեծ  
ցած էին, ու ան մեծ շունն որ դիշեր ա  
տեն պահպանութիւն կ'ընէր զուրսը,  
ճիշդ տեղեկութիւն մը կ'ունենաս այս  
երկու պղախի կալուածներուն եկամտին  
ու տնուորներուն թուոյն վրայ:

Երկու բարեկամուհիներն առտուրնէ  
ինչուան իրիկուն բամբակ կը մանէին:  
Այս աշխատութիւնը բաւական էր ի  
րենց ու ընտանեացն ապրուստը ճարե  
լու: Բայց ուրիշ կողմանէ այնպէս զոր  
կուած էին ամէն տեսակ արտաքին հան

գրատու թիւններէ, որ իրենց տանը մէջ  
մերի ոտքով կը քաշին, ու միայն կիրա-  
կի օրերը ոտուրնին կօշիկ կը հագնէին  
առտուանց կանուխ պատարագի երթա-  
լու համար Բաժըլմուսներու եկեղեցին,  
որ դէպ ՚ի հեռուն կը տեսնես: Այս է-  
կեղեցին քան զԲոր-Ղուի շատ աւելի հե-  
ռու է հաստեղէն, բայց իրենք խիստ քիչ  
անգամ քաղաքը կ'երթային՝ արհամար-  
հուելու վախէն, որովհետև հագուստնին  
գերիններու հագածին պէս Պենկալայի  
հաստ ու կապոյտ կտաւէն էր: Սակայն  
միթէ հասարակաց կարծիքը վեր է առ-  
տնին երջանկութենէն: Թէ որ այս տիկ-  
նայք քիչ մը վերտ ալ քաշին դուրսը,  
երբոր կու գային կը մտնէին իրենց բնա-  
կարանը՝ ինչ մեծ ուրախութիւն կը  
զգային: Մարիամն ու Դոմինիկոսը երբոր  
բարձր լեռնէն կը տեսնէին զանոնք Բաժը-  
լմուսներու ճամբուն վրայ որ դարձած  
կու գան, մէկէն վազելով կ'իջնէին ին-  
չուան լերան ոտքն ու անոնց կ'օգնէին որ  
դիւրաւ վեր ելլեն: Անոնք ալ իրենց գե-

րիներուն աչքերէն կ'իմանային՝ զիրենք նորէն տեսնելուն համար ունեցած ուրախութիւննին: Իրենց բնակութեան մէջ կը գտնէին մաքրութիւն, ազատութիւն, և այնպիսի բարիքներ՝ զորոնք իրենց ու հաւատարիմ ծառաներուն աշխատութեամբ կը ստանային: Իրենք ալ մի և նոյն պիտոյքներն ունենալով, գրեթէ մի և նոյն վիշտերը կրած ըլլալով ու իրար բարեկամութիւն հի, ընկերակից ու քոյր կու չելով, մէկ կամք, մէկ շահ ու մէկ սեղան ունէին: Ամէն բան իրենց մէջ հասարակաց էր: Միայն՝ թէ որ սրտերնուն մէջ բարեկամութեան կայծերէն աւելի հին ու աւելի կենդանի կայծեր երբեմն արծարծելու ըլլային նէ, իրենց սուրբ կրօնքն և մաքուր բարքերնին դէսլ 'ի ուրիշ կեանքի մը կ'առաջնորդէր զիրենք, ինչպէս ան բոցն որուն սնունդը հասնելով երկրիս վրայ՝ դէսլ 'ի երկինք կը թռչի կ'երթայ:

Բնութեան պարտքերը իրենց ընկերութեան երջանկութիւնը կ'աւելցընէին,



ու փոխադարձ մտերմութիւննին աւելի  
կը շատնար իրենց տղաքը տեսնելով, ու  
րոնք երկուքն ալ հաւասարապէս դըժ-  
բազց սիրոյ մը պտուղներ էին: Ա՛տխոր-  
ժէին զանոնք մէկտեղ բաղնիքը խոթել  
ու մի և նոյն օրօրոցին մէջ պառկեցընել:  
շատ հեղ ալ իրարու տղոցը կաթ կու  
տային. « Սիրելի, կ'ըսէր Տըլադուր տի-  
կինը, իւրաքանչիւրնիս երկու զաւակ պի-  
տի ունենանք, ու իւրաքանչիւր զաւակ-  
նիս ալ՝ երկու մայր »: Ինչպէս երկու  
բողբոջներ երկու նոյն տեսակ ծառերու  
վրայ գտնուող, որոնց ուրիշ բոլոր ճիւ-  
ղերը փոթորկէ կտարտուած ըլլան, կը  
սկսին աւելի քաղցր պտուղներ տալ, թէ  
որ իւրաքանչիւրը բաժնուելով մայրա-  
կան բունէն մերձաւոր բնոյ մը վրայ պա-  
տուաստուելու ըլլան. այսպէս ալ այս  
երկու պզտիկ տղաքն որ զրկուած էին ի-  
րենց բոլոր ազգականներէն, որդիական  
ու եղբայրական զգացմունքներէ աւելի  
փափուկ զգացմունքներով կը լեցուէին՝  
երբոր երկու բարեկամուհիներն, որ զի-



րենք աշխարհ բերեր էին , անոնց փոփոխակի կաթ կու տային : Արդէն իրենց մարքը՝ դեռ ասոնց օրօրոցն եղած աստնը , կը խօսէին անոնց կարգուելուն վրայ , և աս ամուսնական երջանկութեան մը հեռաւոր յոյսը , որով իրենց յատուկ վիշտերը կը սփոփէին , շատ հեղ աչքերնէն արցունք թափել կու տար . մէկը յիշելով՝ որ իր թշուառութիւններն առաջ եկեր էին պսակուելու անփոյթ կենալէն , ու մէկալը՝ թէ բուն իսկ պսակուելէն . մէկը՝ իր վիճակէն աւելի բարձր վիճակի մը հասնիլ ուզելուն , ու երկրորդը՝ իր վիճակէն խոնարհելուն համար . բայց իրենք զիրենք կը միտթարէին մտածելով որ օր մը տղաքնին իրենցմէ աւելի բարեբաղդ գրանուելով պիտի վայելէին , Եւրոպայի անգութ նախապաշարմունքներէն հեռու , թէ սիրոյ զուարճութիւններն և թէ հաւասարութեան երջանկութիւնը :

Յիրաւի՝ աս տղոց իրարու վրայ ցուցուցած սիրոյն օրինակ չկար : Թէ որ Պօղլալ սկսէր , մէկէն զՎերգինի կը ցուցը-

նէին իրեն. զան տեսներուն պէս ժպտիւ  
կը սկսէր ու կը հանգարտէր: Թէ որ Ա իր  
զինի տկարութիւն մը ունենար, Պօղի  
հանած աղաղակները կ'իմացնէին զայն.  
բայց այս սիրուն աղջիկը շուտով մը ու  
նեցած ցաւը կը ծածկէր, որպէս զի չըւ  
լայ Թէ ան ալ իր հետը վշտանայ: Ան  
գամ մը չէ եղած որ հոս գալուս միատեղ  
չգտնեմ՝ զերենք, հազիւ Թէ կրնալով քա  
լել ու իրարու Թներէն բռնած, ինչպէս  
որ պատկերներու մէջ կը նկարեն երկու  
րեակ համաստեղութիւնը: Գիշերն ալ  
կարող չէր զերենք իրարմէ զատելու. շատ  
հեղ կը պատահէր որ մի և նոյն օրօրոցը  
պառկած, երես երեսի՝ կուրծք կուրծքի՝  
ձեռուրնին մէկմէկու վիզը սլլած իրարու  
գիրկը քուն կ'ըլլային:

Երբոր լեզու ելլել սկսան, մէկէն եղ  
բայր ու քոյր անուանները տուին իրարու:  
Տղայք, որոնց փաղաքշանքները շատ փա  
փուկ են, ասկէ աւելի քաղցր անուաներ  
չունին: Առած դաստիարակութիւննին  
զերենք ալ աւելի սիրով կապեց, զոր 'ի

գործ կը դնէին իրարու օգնելով: Ա իրգի-  
նի քիչ ատենի մէջ սորվեցաւ ինչ որ տըն-  
տեսու թեան, մաքրու թեան կը վերաբե-  
րէր, ու գիւղական կերակուր մը պատ-  
րաստելու կերպը. և ամէն աշխատութիւն  
լմննցնելուն՝ եղբորմէն գովեստներ ու  
համբոյրներ կ'ընդունէր: Պօղ ալ անդա-  
դար բանի գործքի հետ էր, Գոմինիկոսի  
հետ պարտէզը կը փորէր, կամ սղտի  
կացին մը ձեռքը՝ անոր ետևէն անտառնե-  
րը կ'երթար. ու թէ որ ճամբու վրայ  
յանկարծ աղուոր ծաղիկ մը կամ ազնիւ  
ստուղ մը կամ թռչնոյ բոյն մը տեսնելու  
ըլար, թէպէտ ծառին ծայրն ըլլային,  
մէկէն վրան կ'ելէր ու կը ժողվէր զանոնք՝  
քրոջը տանելու համար:

Թէ որ տեղ մը հանգիպէիր անոնցմէ  
մէկուն, ապահով էիր որ մէկաշն ալ հե-  
ռու չէ անկէց: Երբոր օր մը աս լերանը  
գլխէն կ'իջնայի, տեսայ պարտիղին ան-  
դիու ծայրը զԱ իրգինի որ դէպ 'ի տուն  
կը վազէր գլուխը վերարկուովը ծածկած,  
որ ետևի կողմէն վրան դարձուցեր էր սաս

տիկ տարափէ մը զինքը պատասպարելու  
համար. հեռուանց կարծեցի թէ մինակ  
է. ու երբոր քովը մօտեցայ որպէս զի օգ-  
նեմ, տեսայ որ Պօղի թևէն բռնեց էր, որ  
գրեթէ բոլորովին ծածկուած էր նոյն  
ծածկոցով, ու երկուքն ալ կը խնտային  
մէկտեղ գտնուելուն համար աս նորա-  
տեսակ հովանոցին տակը, որուն հնարողն  
իրենք էին: Այս կրկին գեղեցիկ գլուխ-  
ները հովով ուռած վերարկուին տակը  
պահուրտած որ տեսայ, մի և նոյն խե-  
ցիկն մէջ փակուած Վտովայ տղաքը  
միտքս եկան:

Բոլոր ջանքերնին իրարու կամքը կա-  
տարել ու մէկմէկու օգնել էր. բայց Ա-  
մերիկա ծնած Եւրոպացւոց պէս բոլորո-  
վին տգէտ էին, ոչ գրեւ գիտէին, և ոչ  
կարդալ: Ամենեկն փոյթերնին չէր ըլլար  
հին ու իրենցմէ հեռու անցած գացած  
բաները քննելու: Այս լեռնէն անդին ե-  
ղած բաներուն հետաքրքրութիւն չէին  
ըներ. կարծէին թէ իրենց կողոյն լմն-  
ցած տեղը՝ աշխարհս ալ կը լմնայ. և ուր

որ իրենք չէին գացած՝ կարծէին թէ անտեղն ակորթելի բան մը չկայ. եղբայրական ու որդիական սէրը գրաւած էր իրենց սիրտը: Անպէտ գիտութիւններու վրայ աչքերնին չէին յոգնեցուցած, և ոչ երբէք ծանր բարոյական խրատներու դասերը ձանձրացուցած էին զիրենք. չէին գիտեր թէ պէտք չէ գողնալ, որովհետև ամէն բան իրենց մէջ հասարակաց էր. թէ պէտք չէ անբարեխառն ըլլալ, որովհետև առջնին իրենց ուզած չափովը պարզ կերակուրներ միայն ունէին. թէ պէտք չէ ստախօս ըլլալ, որովհետև ծածկելու ճշմարտութիւն մը չունէին: Ոչ երբէք վախցուցած էին զիրենք. ըսելով թէ Աստուած ահաւոր պատիժներ կը խրկէ ապերախտ տղոց վրայ, վասն զի անոնց որդիական սէրը մայրական գութէն առաջ եկած էր: Սորվեցուցած էին անոնց հաւատոյ միայն այն բաները, որ կրնային սիրելի ընել զայն. ու թէ որ եկեղեցին երկայն աղօթքներ չէին ըներ, ուրիշ որ և իցէ տեղ որ գանուէին՝ թէ իրենց տանը

և թէ դաշտերու ու անտառներու մէջ, դէպ  
'ի երկինք կը բարձրացընէին իրենց անմեղ  
ձեռքերն ու սրտերնին՝ որ ծնողքներնուն  
վրայ ունեցած սիրովը լցուած էր :

Ասանկ ահա անցաւ իրենց առաջին ման-  
կու թիւնը , գեղեցիկ արշալուսոյ նման որ  
պայծառ օր մը կ'աւետէ : Արդէն իրենց  
մօրը հետ ամէն տեսակ անական աշխա-  
տու թեանց կը պարապէին : Երբոր պա-  
ղաղը իր սուր ձայնովն առաւօտուն դար-  
ձը երգել կը սկսէր , Վ իրգինի մէկէն  
կ'արժըննար , կ'երթար մօտակայ աղբիւ-  
րէն ջուր կը լեցընէր ու տուն կը դառնար  
նախաճաշիկը պատրաստելու : Քիչ մը  
ետքը երբոր արևն իր ոսկեգոյն ճառա-  
գայթներովը գունաւորել կը սկսէր չորս  
կողմի ժայռերուն կատարները , Մարգա-  
րիտա զաւկին հետ մէկտեղ Տըլադուր  
տիկնոջ բնակարանը կու գար , ու ան ա-  
տեն ամէնքը միաբերան աղօթք մը կը  
սկսէին ընել . անմիջապէս ետքը նախա-  
ճաշիկնին կ'ընէին դրան առջին կանաչնե-  
րուն վրայ նստած պանեանի ծառերէ հո-



վանոցի մը տակ, որոնց սննդարար սը-  
տուղը պատրաստ կերակուր կ'ըլլար ի-  
րենց, իսկ լայն, երկայն ու փայլուն տե-  
րևները՝ սեղանի փուոց: Առողջարար ու  
առատ կերակրով աս երկու պատանինե-  
րուն հասակը շուտով մեծցաւ, ու քաղցր  
գաստիարակութեամբ մը դէմքերնուն վը-  
րայ նկարուած էր իրենց սրտին պարզու-  
թիւնն ու խնդութիւնը: Ախրգինի դեռ  
տասուերկու տարեկան եղած ատենը հա-  
սակը չափաւորապէս բարձրացած էր .  
երկայն ոսկեթել մազերը գլխին վրայ շուք  
կը ձգէին. կապոյտ աչքերն ու ծիրանա-  
փայլ շրթունքներն անոյշ պայծառու-  
թեամբ մը կը փալտուէին իր լուսափայլ  
դէմքին վրայ. խօսելու ատենը աչքերը միշտ  
կը ծիծաղէին, բայց երբոր լուռ կը կենար,  
անոնց դէպ 'ի երկինք բնական նայուածքն  
իր ներքին սաստիկ զգացմունքը ու նաև  
թեթև տխրութիւն մը կը յայտնէր: Իսկ  
Պօլ պատանեկութեան վայելչութեանը  
մէջ օրէ օր կը ցուցնէր իր վրայ չափա-  
հաս մարդու մը կատարելութիւնները:



Հասակաւ բարձր էր քան զՎիրգինի,  
երեսին գոյնը աւելի թուխ, քիթը աւելի  
արժուունքն, սև աչքերն ալ քիչ մը կա-  
տաղի կրնային սեպուիլ, բայց երկայն ար-  
տևանունքներն որ ճառագայթաձև անոնց  
բոլորակքը կը շողային՝ շատ անուշուժիւն  
տուած էին նայուածքին: Թէպէտ միշտ  
շարժման մէջ էր, այսու ամենայնիւ քոյ-  
րը տեսնելուն պէս կ'երթար քովը կը  
նստէր: Շատ հեղ կերակուրնին առանց  
իրարու հետ բան մը խօսելու կը ըմբնցը-  
նէին. իրենց լուծենէն, շարժմունքնե-  
րուն պարզութենէն, ու մերկ օտուրնե-  
րուն գեղեցկութենէն մարդ կարծէր թէ  
ճերմակ մարմարիոնէ հին արձանակոյտ  
մը կը տեսնար՝ Նիոբէին տղոցմէ մէկ քա-  
նին ներկայացընող: Բայց թէ որ տեսնէիր  
անոնց նայուածքն որ իրար կը փնտրուէին  
ու անոնց ժպիտն որ փոփոխակի մէկմէ-  
կու կու տային կ'առնէին, իրարմէ ալ ա-  
ւելի անոյշ կերպերով, կարծէիր որ եր-  
կընքին հրեշտակներն ու երանեալ հո-  
գիներն են որոնց բնութիւնն է իրար սի-

բել, և որոնք հարկաւորութիւնն չունին իրենց զգացմունքը մտքով իրարու իմացընէ ու բարեկամութիւնը խօսքով յայտնել:

Բայց Տըլադուր տիկինը տեսնելով իր աղջկանը օրէ օր մեծնալն այսպիսի ազուրուժեան մէջ, սիրոյն հետ մէկտեղ մտամոռեքը կ'աւելնար: Երբեմն կը զուրկէր ինձի. « Թէ որ ես մեռնելու ըլլամ, Ա իրզինի առանց հարստութեան ինչ պիտի ըլլայ »:

Այս տիկինը հօրաքոյր մը ունէր Գաղղիա, որ ազնուական ցեղէ հարուստ ու խղճահար պառաւ մըն էր. ասիկայ այնպիսի խստութեամբ օգնութիւն զլացեր էր իրեն, որ միտքը զրած էր թէ որ և իցէ աստիճանն չքաւորութեան մէջ ալ կ'յնալու ըլլայ՝ ամենեւին չդիմէ անոր: Բայց երբոր զաւակ ունեցաւ, աչքը առաւ նորէն մերժուիլն ու ամօթով մնալը. գրեց հօրաքրոջը իր էրկանը անսակնկալ մահը, իրեն աղջիկ մը ծնանիլը, ինչպիսի նեղութեան մէջ ըլլալը իր հայրենիքէն հեռու,

և անօգնական ու զաւկի տէր ըլլալը :  
Բայց այս թղթին սրատասխան չընդունե-  
ցաւ : Ինքն ալ որ ազնուական բնութիւն  
մը ունէր , բնաւ հոգ չըրաւ նուաստանա-  
լուն , և իր ազգականէն յանդիմանու-  
թիւններ լսելուն վրայ , որ շատ նեղացած  
էր իրեն՝ հասարակ աստիճանի , թէպէտ  
առաքինի , մարդու մը հետ կարգուելուն  
համար . ուստի ամէն առթով թուղթ կը  
գրէր որպէս զի սիրաւ շարժէ որ Ա. Խրչի-  
նեայ վրայ խղճայ : Բայց շատ տարիներ  
այսպէս անցան առանց անկէց յիշատա-  
կութեան նշան մը ընդունելու :

Վերջապէս , 1738 ին , Պ . Տըլապուր-  
տոնէի աս կղզիս գալէն իրեք տարի ետ-  
քը , Տըլադուր տիկինն խմացաւ որ այս  
քաղաքապետը թուղթ մը ունէր իրեն  
տալու հօրաքրոջը կողմանէ . մէկէն Բոր-  
լուի վազեց , աս հեղու փոյթ չընելով  
խեղճ՝ զգեստներով երևալու . մայրական  
ուրախութիւնն իրեն մոռցրնել տուեր  
էր մարդկային նկատմունքը : Պ . Տըլա-  
պուրտոնէ հօրաքրոջը թուղթը առաւ

իրեն, որ կը գրէր՝ թէ « Աննշանի մը հետ  
կարգուելուդ արժանի պատիժը ահա հի-  
մա գտեր ես: Ամէն կիրք իրեն պատիժն  
ալ մէկտեղ ունի: Էրկանդ կանխահաս  
մահն աստուածային արդար պատուհաս  
մըն է. շատ աղէկ ըրեր ես որ, կ'ըսէր,  
կղզիները քաշուեր ես, քան թէ Գաղ-  
ղիա կենալովդ քու տանդ անունը պիտի  
աւրէիր: Վերջապէս՝ կեցած երկիրդ պա-  
տուական տեղ մըն է, ուր ծոյլերէն զատ  
ամէն մարդ կրնայ հարստնալ »: Այս  
կերպով զանիկայ պախարակելէն ետքը,  
Թուղթը կը ըմբոսնէր ինքզինքը գովելով.  
« Ամուսնու թեան գէշ հետեանքներէն (որ  
խիստ շատ կը պատահի) փախչելու հա-  
մար է որ, կ'ըսէր, ես միշտ յանձն չեմ  
տուած աշխարհ մտնելը »: Բայց բուն  
պատճառը փառասէր ըլլալն էր, որ միայն  
մեծ ցեղէ մարդու հետ կարգուիլ ուղե-  
լով, թէպէտ շատ հարուստ էր, ու պա-  
լատականներն ալ ամէն բանի անտարբեր  
են՝ բայց ՚ի հարստութենէ, սակայն այ-  
սու ամենայնիւ մարդ մը չէր գտնուած որ

ամուսնանալ ուզէ անանկ տգեղ ու անանկ քարասիրտ օրիորդի մը հետ :

Ետքը Յետ Գրութեան մը ընելով կը գրէր թէ շատ մտածելէն վերջը, զինքը Պ. Տըլապուրտոնէի խնամոցն յանձնէր էր : Եւ իրաւցընէ յանձնած էր, բայց հիմակուան ատենին սովորութեանը կերպով, որ պաշտպանէ մը աւելի վախնալու է քան յայտնի թշնամիէ մը . և որպէս զի քաղաքապետին առջև արգարացընէ իր եղբօր աղջկանը վրայ ցուցուցած խըտուութիւնը, վրան կարեկցիլ ձեւացընելով խել մը զրպարտութիւններ ըրած էր :

Պ. Տըլապուրտոնէ, որ ծուռ կարծիքներով նախապաշարուած էր, շատ պաղ կերպով ընդունեցաւ Տըլադուր տիկինը, որուն վրայ նայողը թէպէտ խիստ ու անզգայ մարդ մըն ալ ըլլար՝ չէր կրնար առանց վրան խղճալու և իրմէ պատկառելու երեսը նայիլ : Կտրուկ խօսքերով բաւական սեպեց պատասխանել խեղճ կրնկանը, որ իր ու աղջկանը վիճակին պատմութիւնը կը պատմէր . « Տեսնեմ, կ'ը-

սէր, նայինք . . . . Ժամանակ պէտք է . . . .  
ուրիշ շատ խեղճեր կան . . . . Ինչո՞ւ սա-  
տուական հօրաքոյրդ անհանգիստ ըրիր . . . .  
դու էս յանցաւոր » :

Տըլադուր տիկինը սիրտը ցաւով ու  
դառնութեամբ վերաւորուած տուն դար-  
ձաւ : Հասնելուն պէս նստաւ, նետեց սե-  
ղանին վրայ իր հօրաքրոջը թուղթն ըսե-  
լով իր բարեկամուհւոյն . « Ահա տանը-  
մէկ տարուան համբերութեան պտուղը » :  
Բայց որովհետեւ անոնց մէջ Տըլադուր  
տիկինէն զատ ուրիշ կարդալ գիտցող  
չկար, ուստի նորէն ձեռքն առաւ թուղթն  
ու բարձր ձայնով կարդաց բոլոր ընտա-  
նեաց առջև որ հոն ժողվուեր էին : Լմըն-  
նալէն ետքը՝ Մարգարիտա դարձաւ տա-  
քութեամբ ըսաւ . « Ի՞նչ կարօտութիւն  
ունինք աղգահաններուդ . միթէ Աստուած  
թողուցեր է զմեզ . ինչուան աս օրս եր-  
ջանկութեամբ չասրեցանք . ինքն է միայն  
մեր հայրը . ինչո՞ւ ուրեմն այսչափ սիրտդ  
կը կոտրես . վրադ ոյժ չէ մնացած » : Ետ-  
քը տեսնելով Տըլադուր տիկնոջ լալը ,



վազեց վեզը պլլուեցաւ ու թևերուն մէջ  
գրկելով զինքը, « Ո՛վ սիրելի բարեկամու-  
հիս, կանչեց, սիրելի՛ բարեկամուհիս » :  
Բայց իր լալախառն հառաչանքները ձայ-  
նը մարեցին ու չկրցաւ խօսքն առաջ տա-  
նիլ : Այս տեսարանիս Վիրգիլինի արցունք  
թափելով՝ փոփոխակի իր մօրն ու Մար-  
գարիտայի ձեռքերը բռնելով կը պագնէր  
ու սրտին վրայ կը գնէր . իսկ Պօղ՝ աչքե-  
րը բարկութեամբ վառած կ'աղաղակէր ,  
ձեռքերն իրարու անցուցած՝ ոտքերը գե-  
տին կը զարնէր , ինքն ալ չգիտնալով թէ  
որո՞ւն նեղանայ : Այս աղաղակին՝ նայիս  
Դոմինիկոսն ու Մարիամն ալ վազեցին  
հասան , և ա՛լ տնակին մէջ ողբի ձայնէ  
զատ բան չէր լսուեր . « Ա՛հ , տիկին . . .  
իմ՝ բարի տիրուհիս . . . ո՛վ մայր իմ . . .  
մի լար » : Ասանկ բարեկամութեան սրը-  
տաշարժ նշանները փարատեցին Տըլագուր  
տիկնոջ տրամուլթիւնը . Պօղն ու Վիրգի-  
լին թևերուն մէջ սխմեց , ու խնտուով ե-  
րեսով մը ըսաւ անոնց . « Ո՛վ իմ զաւկը-  
ներս , դուք էք վիշտերուս սպտճառը ,



բայց միանգամայն դուք էք զիս ուրախա-  
ցընողը. Թշուառութիւնը հեռու տեղէն  
ինծի եկաւ, բայց երջանկութիւնը իմ  
չորս կողմն է » : Պօղ ու Վիրգինի չհաս-  
կըցան այս խօսքիս իմաստը. բայց երբոր  
զինքը հանդարտ տեսան, իրենք ալ ժրպ-  
տիչ սկսան ու կը փայփայէին զինքը : Ա-  
սանկով նորէն ամէնքն ալ իրենց երջան-  
կութիւնը գտան, ու այս դիպուածս նմա-  
նեցաւ փոթորկի մը, որ աղուոր եղանա-  
կի մը մէջ յանկարծ կու գայ կ'անցնի :

Այս տղոց սրտին բնական աղէկութիւ-  
նը օրէ օր յայտնիլ կը սկսէր : Վիրակի օր  
մը արշալուսոյն ատենը, երբոր իրենց  
ծնողքն առջի պատարագը տեսնելու հա-  
մար Բամբըլմուններուն եկեղեցին գա-  
ցեր էին, տղաքը լեռննցի հնդիկ աղախին  
մը տեսան իրենց բնակարաններուն բո-  
լորտիքն եղած պանեաններուն տակը .  
խեղճը հալած մաշած կմախք դարձեր էր,  
ու բոլոր հագուստը մէջքը պլած ձորձի  
կտոր մըն էր . մէկէն Վիրգինեայ ոտքն  
ինկաւ, որ տնեցոց նախաճաշիկ կը պատ-

րաստէր, ու ըսաւ. « Ո՛վ դեռահասակ օ-  
րիորդ, գլթա ինծի պէս խեղճ ու փախստա-  
կան գերւոյ մը վրայ. ամիս մըն է որ անօթի  
կէս մեռածի պէս այս լեռներուս մէջ փա-  
խըստահան կը շրջիմ. որսորդներն ալ ի-  
րենց շներովը ետեւէս ինկած զիս կը հա-  
լածեն: Տիրոջս ձեռքէն փախայ, որ Սև  
գետին հարուստ բնակիչներէն է. հետս  
ինչ խստուլթեամբ վարուած ըլլալը՝ վրայ-  
էս ալ կրնաս հասկընալ »: Այս ըսելով  
խեղճ մինիկը ցուցուց Վիրգինեայ իր մար-  
մինը, որուն վրայ խարազանի հարուած-  
ներէն խոր վէրքեր բացուած էին: « Կ՛ու-  
զէի, ըսաւ, երթալ գետը նետել զիս ու  
խղզուիլ. բայց գիտնալով որ դուք հոս  
կը բնակիք, ըսի թէ որովհետև դեռ բա-  
րեսիրտ ձերմականեր կան աս կղզւոյս մէջ,  
պէտք չէ այնպէս շուտով մեռնիլ »: Վիր-  
գինեայ սիրտը շարժելով պատասխանեց.  
« Սիրտդ հանգիստ բռնէ, դժբաղդ կնիկ,  
կեր ու խմէ »: Շուտով տանը համար  
պատրաստած նախաճաշիկը անոր առջևը  
դրաւ. գերին քիչ ատենի մէջ բոլորը կե-

րաւ լափեց : Աիրգինի տեսնելով որ քիչ մը հոգի առաւ , « Խեղճ կնիկ , ըսաւ , կը ցանկամ երթալ քեզի համար ներուժն խնդրել տիրոջմէդ , քեզ տեսնելով անտարակոյս գուժը կը շարժի . զես իրեն կը տանիս : — Գու իմ պահապան հրեշտակս ես , ըսաւ գերի կնիկը , ուր որ ուզես պատրաստ եմ հետդ գալու » : Աիրգինի կանչեց իր եղբայրն ու աղաչեց որ ինքն ալ հետը գայ : Գերին զիրենք անտառներու ու բարձր լեռներու մէջէն անցնելով կը տանէր , որոնց վրայ ճանկըռտելով ու շատ աշխատանքով կ'ելլէին . երբեմն ալ լայն գետեր կը պատահէր առջևնին , զորոնք ոտքով կ'անցնէին : Աերջապէս՝ կէսօրուան ատեն հասան Սև գետին եզերքը , որ լեռան մը տակ էր : Տեսան հոն վայելուչ տուն մը , ու աղէկ մը շակած ու վարած արտեր . ծառաներն ալ զանազան աշխատութիւններու զբաղած էին : Ասոնց տէրը մէջերնին կը պտըտէր բերանը ծխափայտ մը առած , իսկ ձեռքը հնդիկ եղէդ մը : Երկայն ու նի-

հար մարդ մըն էր, գոյնը թուխ, խորունկ աչուըններով, սև ու իրարու կպած ընփուխներով: Վիրգինի Պօղի ձեռքէն բռնած մօտեցաւ, ու աղաչեց անոր որ Աստուծոյ սիրոյն համար իր գերւոյն ներէ, որ քանի մը քայլ հեռու իրենց ետևը կեցեր էր: Առջի բերանը տէրը բանի տեղ չգրաւ աս խեղճ հագուած երկու տղաքները. բայց երբոր քիչ մը ուշադրութիւն ընելով տեսաւ Վիրգինեայ վայելուչ հասակն ու աղուոր գեղին մազերով ծածկուած գլուխը, և լսեց անոր քաղցր ձայնը որ ներուամն խնդրելու ատեն մարմնոյն հետ կը դողար, հանեց բերնէն ծխափայտն, ու դէպ 'ի երկինք վերցընելով եղէգնեայ գաւազանը, սարսափելի երգում մը ըրաւ ու ըսաւ. « Կը ներեմ գերիիս, չէ՛ թէ Աստուծոյ սիրոյն, հապա սոսկ ձեր սիրոյն համար »: Վիրգինի մէկէն աչք ըրաւ գերւոյն որ տիրոջն առջևը երթայ. ետքը փախաւ գնաց, Պօղ ալ ետևէն վազեց:

Մէկտեղ ելլել սկսան ան ընոր, ուսկից

որ իջած էին : Երբոր ծայրը հասան , չարաչար յոգնած ըլլալով նստան ծառի մը տակ անօթի ծարաւ : Արևուն ծագելէն ՚ի վեր անսուաղ հինգ փարսախէ աւելի տեղ քալեր էին : Պող ըսաւ ցԱ իրգինի . « Քոյր իմ , կէսօրը անցեր է , անօթի ու ծարուած ես . հոս կերակուր չենք կըրնար գտնել . նորէն լեռնէն վար իջնանք ու երթանք գերւոյն տիրոջմէն ուտելու բան մը ուզենք : — Ո՛հ , չըլլար , եղբայր , ըսաւ Ա իրգինի . ան մարդը շատ վախցուց զիս : Միտքդ բեր մէյ մը մօրս զուրցածը՝ թէ Անօրէնին հացը՝ ուտողին բերանը խճով կը լեցընէ : — Հապա ի՞նչ ընենք , ըսաւ Պող . աս ծառերուն տուած պրտուղներն անհամ են . և ոչ դամարինի <sup>1</sup> կամ լեմոնի ծառ մը կը գտնուի հոս որ ու-

<sup>1</sup> Դամարինը տաք երկիրներու ծառ է , որ կը բուսնի Հնդկաստան , Եգիպտոս , Անդիլեան կղզեաց մէջ . իր պտուղը , որ պատիճ պատիճ է եղջիւրի (+եղէ պս-յոս-զս-) նման , աւելի դեղերու մէջ կը գործածուի , բայց պտղոյ պէս ալ կրնայ ուտուիլ :

տես ու պաղըշտըկիս : — Աստուած մեզի  
կ'ողորմի, ըսաւ Վ. Խրզինի : Ինքը կը լսէ  
նաև խիստ պզտի Թռչուններուն ձայնին  
որ իրմէ կերակուր կը խնդրեն » : Հազիւ  
աս խօսքերս լմնցուց, մէյ մ'ալ ջրի մը  
ձայն լսեցին որ մօտակայ Ժայռի մը վը-  
րայէն վար կը Թափէր : Վազեցին հոն ու  
ծարաւնին անցընելէն ետքը ան յստակ  
ջրով որ բիւրեղի մը պէս կը փայլէր, քիչ  
մ'ալ ջրին եզերքը բուսած ջրկոտեմէն  
փրցուցին կերան : Երբոր ասդիս անդին  
կը նայէին աւելի յագեցուցիչ բան մը  
դանելու համար, Վ. Խրզինի անտառին  
ծառերուն մէջ արմաւենի մը տեսաւ : Աս  
ծառին ծայրի տերևներուն մէջ կաղամբի  
պէս պտուղ մը կայ որ պատուական ու-  
տելիք է : Թէպէտ բունը սրունքէ մը ա-  
ւելի հաստ չէր, բայց երկայնութիւնը 60  
ոտքէն աւելի էր . Թէպէտ երեսը Թել  
Թել նիւթով մը ձևացած է, սակայն ներ-  
քին ճերմակ փայտը այնպէս կարծր է,  
որ սուր կացիններն իսկ չեն բանիր . իսկ  
Պօղ դանակ մ'ալ չունէր քովը : Միտքը



եկաւ թէ արմաւենւոյն բունին կրակ տայ .  
հոն ալ ուրիշ դժուարութիւն մը առջին  
ելաւ, կայծահան չունէր . ան ալ թո-  
ղունք, այս ապառաժուտ կղզւոյս մէջ չեմ  
կարծեր որ գայլախազ մը գտնուի : Սա-  
կայն հարկը մարդուս գիւտեր հնարել  
կու տայ, ու շատ հեղ ամենէն օգտակար  
գիւտերը ամենէն ողորմելի մարդիկը գտեր  
են : Պօղ ուզեց հնդիկներու կերպով կրակ  
վառել : Չոր ծառի ճիւղ մը ոտքին տակն  
առնելով քարի մը սուր անկիւնովը ծակ  
մը բացաւ վրան . ետքը նոյն քարին բեր-  
նովը ուրիշ տարբեր տեսակ փայտէ չոր  
ճիւղի մը ծայրը սրցուց : Ետքը ան սրա-  
ծայր փայտին կտորը ոտքին տակն եղած  
ճիւղին ծակն անցընելով երկու ձեռքովը  
սկսաւ դարձընել սաստիկ արագութեամբ,  
ինչպէս որ ՂԻՕԼԿԵԿ Եփողը փրփրեցընելու  
ատեն երկու ափին մէջ տեղը սահեցընե-  
լով կը պտըտցընէ պզտի փայտի կտորը :  
Շատ չքէց տեսաւ որ շփուած ծակէն  
մուխ ու կայծեր սկսան ելլել : Շուտով  
չորցած խոտ ու ծառի ճիւղերու կտու-







J. Barnard sculp. inc.

րուանք ժողովեց, ու արմաւենւոյն բունը  
բունկցուց, որ քիչ ատենէն ինկաւ ա-  
հաւոր թնդմամբ: Վաղամբին վրայի պա-  
տած երկայն, փայտային ու խայթող  
տերւներն էրելով Վիրգինեայ հետ մի-  
ջուկը կերաւ, մէկ կտորը հում, իսկ մե-  
կալ կտորը մոխրի մէջ եփած. երկուքն  
ալ համով եկաւ իրենց: Ուրախ սրտով  
կ'ուտէին այս պարզ կերակուրը, առ-  
տուան ըրած բարեգործութիւննին մըտ-  
քերնին բերելով. բայց ուրախութիւննին  
տրտմութեան հետ կը խառնուէր՝ երբ կը  
մտածէին թէ իրենց այսչափ ատեն ուշա-  
նալովն անշուշտ իրենց մայրերը հոգերու  
ու զանազան մտմտութի մէջ ինկած պիտի  
ըլլան: Վիրգինի շարունակ աս կը զրու-  
ցէր. իսկ Պօղ որ կշտանալովն իր առջի  
ոյժը բաւականապէս առած էր, ապա-  
հովցուց զանիկայ թէ շուտով կ'երթան  
իրենց ծնողաց սիրտը կը հանդարտեցը-  
նեն:

Վերակուրը լմննալէն ետքը շատ մեծ  
շփոթութեան մէջ ինկան, որովհետեւ ալ

առաջնորդ չունէին զիրենք տուներնին  
տանելու : Պօղ, որ բանէ մը չէր վախեր,  
ըսաւ Վիրգինեայ . « Մեր բնակարանը  
կէսօրուան արևուն շտկութեամբն է,  
պէտք է որ աս առտուան պէս սա եռա-  
բլուր լերան վրայէն անցնինք, որ հեռուն  
կը տեսնես . հապա, քալենք, սիրելի » :  
Աս ցուցուցած լեռը Երեք Ստեանց ը-  
սուած լեռն էր, որուն այսպէս կոչուե-  
լուն պատճառն իր իրեք գագաթներուն  
ստեան նմանելուն համար էր : Իջան Սև  
գետին լերանը հիւսիսային կողմէն, ու  
Ժամ մը քալելէն ետքը հասան մէկ լայն  
գետի մը եզերքն, որ իրենց ճամբան կը  
կտրէր . կղզւոյն այս ընդարձակ կողմը  
անառոներով բոլոր ծածկուած է ու  
խիստ քիչ մարդու ծանօթ է, անանկ որ  
ինչուան այսօր մէջի գետերուն ու լեռնե-  
րուն շատը անուն չունին : Այն գետը՝ ո-  
րուն եզերքը հասեր էին, Ժայռերու վը-  
րայէն եռալով մը կը գլորէր կ'երթար :  
Չրերուն ահաւոր ձայնը սոսկացուց ըզ-  
Վիրգինի . սիրտ չըրաւ ոտքով անդիի

կողմն անցնիլ : Այն ատեն Պօղ շալկեց  
զանիկայ, ու բեռը կռնակը՝ անցաւ գե-  
տին սահուն ժայռերուն վրայէն, առանց  
վահնալու փրփրած ալեքներուն աղաղա-  
կէն : « Մի վահնար, կ'ըսէր, քեզմով իմ  
ոյժս կը շատնայ : Թէ որ Սև գետին տէրը  
քու աղաչանքդ չուզենար լսել, ու չնե-  
րէր գերւոյն, հեաը պիտի ծեծկուէի :  
— Դո՞ւ պիտի ծեծկուէիր, ըսաւ Վ. իր  
գինի, այն բարձրահասակ ու չար մար-  
դուն հեա : Տես ուրեմն զքեզ ի՞նչ վը-  
տանգներու մէջ ձգելու պատճառ եղեր  
եմ : Ո՛վ Տէր իմ, ի՞նչ դժուար բան է ե-  
ղեր բարեք ընելը . միայն գէշ բան ընելն է  
գիւրին » : Երբոր Պօղ անդիու գետեզերքն  
ելաւ, ուղեց նոյնպէս քոյրը շալկած  
ճամբան շարունակել . ու կը յուսար որ  
ասանկով ելլէ Երեք Ստեանց լեռը, որ  
առջևը կը տեսնէր կէս փարսախ հեռա-  
ւորութեամբ : Բայց շատ չքշեց ոյժը կըր-  
բելով՝ հարկաւորեցաւ զանիկայ գետին  
գնել, ու ինքն ալ քովը նստաւ յողնու-  
թիւն առնելու համար : Ան ատեն Վ. իր

գինի դարձաւ ըսաւ. « Եղբայր իմ, արդէն օրը կը մթըննայ. դուն դեռ բաւական ոյժ ունիս, իսկ իմ վրաս գրեթէ ոյժ չմնաց. հոս ձգէ զիս ու գու մինակ տուն դարձիր մայրերնուս սիրտը հանդարտեցընելու համար : — Ոհ, չէ, ըսաւ Պօղ, ես ղքեզ չեմ թողուր. թէ որ աս անտառներուս մէջ գիշերը մեզ կոխէ, կրակ կը վառեմ, արմաւենի մը կը բուրնկցընեմ, ծայրի կաղամբին միջուկը կ'ուտես ու վերայի տերևներովն ալ ծածք մը կը շինեմ քեզի որ գիշերային ցրտութենէն պաշտպանուիս » : — Եոյն միջոցին վիրգինի քիչ մը յոգնութիւն առած ըլլալով, գետեզերքէն սգոլոբանտրի<sup>1</sup> երկայն տերևներ փրցուց ու անոնցմով տեսակ մը կօշիկ շինեց ոտուրները ճամբաներուն սայրասուր քարերէն պահելու համար, որոնցմէ վերաւորուելով բոլոր արիւնտերէին. վասն զի ուրիշ բարեք ընելու հա-

<sup>1</sup> Սգոլոբանտր ըսուած բոյսը ժայռերու վերայ կը բուսնի ու երկայն բարակ տերևներ ունի :



մար փութալով կօշիկները հագնելու մոտ-  
ցեր էր : Տերևներուն զովուծիւնը քիչ  
մը թեթևցրնելով ոտուղներուն ցաւը ,  
պամպու ծառի ճիւղ մը կտրեց ու ճամ-  
բայ ելաւ , մէկ ձեռքովը դաւազանին կրո-  
ւթնած՝ ու մէկալովն իր եղբօրը :

Ասանկ ծանր ծանր քայլելով անտառ-  
ներու մէջէն առաջ կ'երթային . բայց  
բարձր ու տերևախիտ ծառերը աներևոյթ  
ըրին իրենց աչքերէն թէ Երեք Ստեանց  
լեռն ուր կ'երթային , և թէ արևը՝ որ մա-  
րը մտնելու վրայ էր : Քիչ ետքը , առանց  
խմանալու , բոլորովին խոտորեցան ուղիղ  
ճամբէն որ ինչուան ան ատենը բռնած  
կ'երթային , ու ինկան անել լաբիւրին-  
թոս մը որ ծառերով , լիւս բոյսերով ու  
ժայռերով լցուած էր : Պօղ նստեցուց  
զՎ իրդինի ու ինքը շփոթած սկսաւ աս-  
դիս անդին վազել , ճամբայ մը գտնելու  
համար՝ որ այս մացառուտ տեղէն դուրս ել-  
լէն . սակայն փուճ տեղը յոգնեցաւ : Ծա-  
ռի մը վրայ ելաւ՝ գոնէ Երեք Ստեանց լե-  
ռը տեսնելու համար . բայց չորս կողմը



Ծառերու կատարներէ ուրիշ բան չտեսաւ, որոնցմէ մէկ քանին արևուն ետքի ճառագայթներովը լուսաւորուած էին : Արդէն լեւներուն շուքը հովիտներուն մէջի անտառները ծածկել սկսեր էր : Հովը, ինչպէս որ սովորաբար արևը մտնելու ատեն կը հանդիպի, բոլորովին դադրեր էր . խոր լուսթիւն մը տիրեր էր այս առանձնութեան տեղերուն վրայ, և ուրիշ ձայն չէր լսուեր՝ բաց ՚ի եղջերուներու ձայնէն, որոնք իրենց որջը փնտրուելու կու գային այս մենաւոր տեղուանքը : Պօղ յուսալով որ որսորդ մը կրնար իր ձայնը լսել, բոլոր ուժովը սկսաւ աղաղակել . « Ձեզն կ'ըսեմ, եկէք հասէք, օգնեցէք Վիրգինեայ » . բայց անտառին արձագանգը միայն պատասխանեց իր ձայնին և քանի մը անգամ կրկնեց « Վիրգինեայ . . . Վիրգինեայ » :

Ան ատեն Պօղ յոգնած ու արամուսթեամբ լցուած՝ ծառէն վար իջաւ, սկսաւ գիշերը հոն անցընելու ճարը մտածել . բայց դժբաղդաբար ոչ աղբիւր կար, ոչ

արմաւենի և ոչ ալ վառելու համար պէտք  
եղած չոր փայտի կտորուանք : Ան ատե-  
նը փորձով իմացաւ իր հնարքներուն պա-  
րաս ըլլալն ու սկսաւ լալ : Վիրգինի կ'ը-  
սէր իրեն . « Մի լար , սիրելի , թէ որ չես  
ուզէր զիս ալ վշտացնել : Բոլոր քու ցա-  
ւերուդ ու նաև մեր ծնողացը հիմա քա-  
շածներուն պատճառն ես եմ . առանց  
ծնողաց հրամանի բան մը պէտք չէ ընել՝  
թէ և բարեգործութիւն ըլլայ : Ա՛հ , ի՛նչ  
անխոհեմութիւն ըրի » : Այս ըսելով  
ինքն ալ սկսաւ արցունք թափել . ետքը  
նորէն Պօղի դառնալով ըսաւ . « Եղբայր  
իմ , աղօթք ընենք Աստուծոյ , ինքը մեզի  
կ'ողորմի » :

Հազիւ թէ աղօթքնին լմնցուցեր էին ,  
մէյ մ'ալ նայիս շան հաջելու ձայն մը  
լսեցին : « Անշուշտ որսորդի շուն է , ըսաւ  
Պօղ , որ գիշեր ատեն կու գայ մութ տե-  
ղք եղջերուներ զարնելու » : Քիչ ատե-  
նէն շան հաջիւնը սաստկացաւ : « Կար-  
ծեմ թէ , ըսաւ Վիրգինի , մեր հաւա-  
տարիմ շունն է . այո , անոր ձայնն է . ար-

դեօք մօտ տեղ մըն ենք, կամ մեր լերան ստորոտը »: — Իրաւցընէ՛ վայրկեան մը ետքը տեսան չաւատարիմը իրենց ոտուըներուն պլուած որ կը հաջէր կը հառաչէր անբաւ սիրոյ նշաններ ցուցնելով երբոր ասանկ զարմացած կեցեր կը նայէին, տեսան նաև Գոմինիկոսն որ վազելով կու գար: Այս բարի մարդը քովէր նին հասնելով երբոր սրտին ուրախութենէն արցունք կը թափէր, իրենք ալ չգիմացան ու սկսան լալ: Գոմինիկոս հանդարտելէն ետքը, ըսաւ իրենց. « Ո՛վ իմ պզտի տիրուըտիքս, ի՛նչ հոգերու մէջ ձգեցիք ձեր մայրերը. որչափ զարմացան երբոր ինձի հետ պատարագէն գառնալով, ձեզ հոն չգտան. Մարիամը որ տանը մէկ կողմը կ'աշխատէր, չկրցաւ զրուցել թէ ո՛ւր գացեր էիք. մէյ մը մէկ կողմը կ'երթայի, մէյ մը մէկալ կողմը. ես ալ չէի գիտեր թէ ձեզ որ զին փնտրուեմ: Աերջասպէս ձեռքս առի երկուքիդ ալ հին լաթերը ու հոտուըտացուցի չաւատարմին. կենդանին մէկէն կարծես թէ միտքս

հասկըցաւ ու հոտուըտալով առաջ կ'եր-  
թար այն ճամբաներէն, ուսկից որ ան-  
տարակոյս դուք ալ անցեր էիք: Առաւ  
տարաւ զիս ինչուան Սև գետը, անգադար  
պոչը շարժելով. հոն մէկէ մը իմացայ թէ  
դուք գերի մը տարեր էք եղեր իրեն ու  
ինքն ալ ներեր է անոր. բայց ինչպիսի  
ներուսն. ցուցուց ինձի այն խեղճ կնիկը  
ծառի մը բունին կապած, ոտքը շղթայա-  
կապ ու երկրթէ իրէք ճանկով անուր մը  
վիզն անցուցած: Անկէց սկսեալ, հաւա-  
տարիմը միշտ գետինը հոտուըտալով բե-  
րաւ զիս Սև գետին լեւը, ուր նորէն կանկ  
առաւ ու բոլոր ուժովը կը հաջէր. կեցած  
տեղը աղբիւրի մը քով էր, ուր արմա-  
ւենի մը կար ինկած ու քիչ մ' ալ կրակ  
որ գեռ կը մխար. համառօտ ըսեմ՝ վեր-  
ջապէս զիս հոս առաւ բերաւ: Հիմա Ե-  
րէք Ստեանց լեւանը ստորոտն ենք, մեր  
բնակուածէնէն չորս փարսախ հեռու. ձեզ  
տեսնեմ, կերէք որ ոյժ առնէք »:

Այս ըսելով հանեց տուաւ անոնց կար-  
կանգակ, պտուղ, ու չոր գդուսէ մեծ

անօթով մը տեսակ մը ըմպելիք ջրախառն  
գինիով, լեմօնի ջրով, շաքարով ու մըշ-  
կահոտ ընկուզով բաղադրուած, որ ի-  
րենց մարքը շինած էին որպէս զի ոյժ առ-  
նեն ու ստղծաբերին: Ա իրգինի հառաչեց  
միտքը բերելով խեղճ գերին, ու իրենց  
ծնողացը մտմտուէք: Շատ հեղ կրկնեց  
աս խօսքս. « Ա՛հ, ի՛նչ դժուար բան է ե-  
զեր ուրիշէ բարիք ընելը »: Այն զօրա-  
ցուցիչ ըմպելիքը խամած առեանին, Դո-  
մինիկոս կրակ վառեց ու ժայռերուն մէջ  
փնտռեց այն խորտուբորտ փայտն, որ  
կանաչ եղած առեանն ալ մեծ բոց հանե-  
լով կը բռննի, անկէ ջահ մը շինեց ու  
վառեց, որովհետև գիշեր էր: Բայց ճամ-  
բայ ելլելու ժամանակը մեծ շփոթութեան  
մէջ ինկաւ. Պօլի ու Ա իրգինեայ վրայ ալ  
ոյժ չէր մնացած քալելու. վասն զի ոտ-  
քերնին ուռեր ու բոլորովին կարմրեցր  
էին: Դոմինիկոս ինչ ընելիքը չէր գիտեր.  
արդեօք ելլէ երթայ անոնց օգնութիւն  
մը գտնելու համար, թէ չէ՞ գիշերը հե-  
տերնին հօն անցընէ: « Ո՛ւր է, կ'ըսէր

անոնց, ան ժամանակն որ երկուքդ ալ մէկտեղ գիրկս կ'առնէի. բայց հիմա դուք մեծցաք ու ես ծերացայ » :

Երբոր այսպիսի տարակուսանաց մէջ էր, մէյ մ' ալ յանկարծ գունդ մը լեռնաբնակ հնդիկներ երեցան քսան քայլ հեռուէն : Ասոնց գլխաւորը Պօղն ու Աիրգինեայ մօտենալով, ըսաւ անոնց. « Պզաի ու բարի ձերմակներ, մի վախէք : Մենք աս առտու ձեզ տեսանք որ Սև գետէն կ'անցնէիք հնդիկ աղախնոյ մը հետ, ու կ'երթայիք անոր համար թողութիւն խնդրելու իր չար տիրոջմէն : Մենք ալ հիմա ձեր բարեգործութեանը փոխարէն ուսերնիս կ'առնենք զձեզ ու ինչուան տեղերնիդ կը տանինք » : Այս ըսելով աչք մը ըրաւ, ու հնդիկներուն ուժովներէն չորս հոգի ծառերու ճիւղերէ ու տունկերէ գահաւորակ մը շինեցին. նստեցուցին վրան Պօղն ու Աիրգինի և ուսերնին առին. Դոմինիկոս ալ ջահը ձեռքը առջնէն սկսաւ քալել. իսկ հնդիկներն ուրախութեան ձայներով անդադար կ'օր-



հնէին զանոնք ու առաջ կ'երթային : Աիր-  
գինեայ սիրտը շարժելով կ'ըսէր Պօղի .  
« Տես, սիրելի, Աստուած բարեգործու-  
թիւնը ոչ երբէք անվարձ կը թողու » :

Կէս գիշերուան ատեն հասան իրենց  
լերան ստորոտը, որուն գագաթը շատ  
կրակներով լուսաւորուած էր : Հազիւ  
թէ վեր ելլել կը սկըսէին, ձայն մը լսե-  
ցին որ կ'ըսէր . « Միթէ գո՞ւք էք, զաւ-  
կըներս » : Ասոնք ալ հնգիկներուն հետ  
միաբերան սպտասխանեցին . « Այո, մենք  
ենք » : Քիչ մը անցաւ տեսան մայրեր-  
նին ու Մարիամն որ վառած փայտեր ձե-  
ռուրնին բռնած ընդ առաջ կու գային :  
« Խեղճ տղաք, ըսաւ Տըլադուր տիկինը,  
ուսկից կու գաք . ի՞նչ մեծ ցաւերու մէջ  
ձգեցիք զմեզ : — Սև գետէն կու գանք,  
ըսաւ Աիրգինի . գացինք որ խեղճ հնգիկ  
աղախնոյ մը համար ներուժն ինզրենք .  
այս առտու տանը նախաճաշիկն անոր տը-  
ւինք, որովհետև ողորմելի կնիկը անօթու-  
թենէն կը մեռնէր, և ահա հիմա ալ բա-  
րերար հնգիկներ զմեզ դարձեալ տեղեր-

նիս բերին » : Տըլադուր տիկինը պըռուեցաւ իր աղջկանը առանց խօսք մը զուրցելու : Վ իրգինի ալ զգալով մօրը արցունքներն որ իր երեսը կը թըլէին, ըսաւ անոր . « Ո՛վ մայր իմ, բոլոր քաշած վըտերս մոռցընել տուիր ինձի » : Մարգարիտա կարգէ զուրս ուրախացած՝ Պօղը թեւերուն մէջ առաւ, ու կը զուրցէր անոր . « Դու ալ, որդեակ իմ, դու ալ բարեգործութիւն մը ըրիր » : Երբոր հասան իրենց բնակարանը, առատ կերակուր հանեցին հնդիկներուն, որ մեծապէս շնորհակալ ըլլալով դարձան իրենց անտաները :

Ամէն օր այս անուորներուն համար երջանկութեան ու խաղաղութեան օրեր էին . նախանձն ու փառասիրութիւնը իրենց սիրտը չէին խռովեր : Ամենեկին չէին ցանկար սնտախ համբաւ մը ունենալու, որ գաղտուկ հնարքներով կրնայ ձեռք բերուիլ, ու չարախօսութեամբ մը կը կորսուի : Իրենք իրենց վկայ ու գաստաւոր ըլլալը բաւական կը սեպէին : Այս

կողմոյս, ինչպէս նաև Եւրոպայուոց բո-  
լոր դաղթականներուն մէջ, մարդիկ բամ-  
բասողական պատմութիւններ միայն լսե-  
լու հետաքրքիր ըլլալով, ասոնց առաքի-  
նութիւններն ու անունը մոռցուած էր :  
Միայն թէ որ Բամբըլմուսի ճամբէն անց-  
նող մը հարցընելու ըլլար գաշտին բնա-  
կիչներէն ոմանց՝ թէ « Ո՞վ կը բնակի սա-  
վերի տնակներուն մէջ », ասոնք թէ և  
չէին ճանչնար, բայց կը պատասխանէին .  
« Խիստ բարի մարդիկ են հոն տեղ նըս-  
տողները » : Ասանկ ահա մանուշակի կը  
նմանէին, որ փշոտ թուփերու մէջ ծած-  
կուած՝ ինչուան հեռու տեղուանք կը  
սփռէ իր անոյշ հոտը, թէպէտ մէկը զին-  
քը չտեսներ :

Իրենց խօսակցութեանը մէջ բամբա-  
սանք չէր լսուեր ամենեւին, որ ճշմարտու-  
թեան երևոյթ մը ունենալով՝ հարկաւո-  
րապէս շուտով մարդուս սիրաբ ատելու-  
թեան ու ստութեան կը տանի . վասն զի  
անկարելի է որ մարդս չատէ զուրիշը՝ եր-  
բոր անոր չար ըլլալը գիտնայ . նաև ան .

կարելի է որ չար մարդկանց հետ կենա-  
կցի մէկը, առանց արտաքին սուտ սիրոյ  
նշաններով ծածկելու անոնցմէ իր ներ-  
քին ատելութիւնը: Ասանկով բամբա-  
սանքը կը պարտաւորէ զմարդս որ կամ  
ուրիշի հետ, և կամ իր անձին հետ գէշ  
ըլայ: Բայց իրենք ոչ զոք կը դատէին,  
հապա ամենուն բարերարութիւն ընելու  
միջոցներուն վրայ կը խօսէին. և թէպէտ  
այն կարողութիւնը չունէին, բայց ունե-  
ցած հաստատ կամքերնին իրենց սիրտը  
այնպիսի բարեսիրութեամբ մը կը լեցը-  
նէր, որ միշտ պատրաստ էին ուրիշի օգ-  
նելու: Առանձնութեան մէջ ապրելով,  
վայրենի չըլլալէն զատ՝ աւելի մարդասեր  
եղեր էին. և որովհետև դրսի մարդկանց  
գայթակղեցընող պատմութիւններն ի-  
րենց խօսակցութեանը նիւթ չէին ըլլար,  
ուստի իրենք զիրենք բնութեան տեսա-  
րաններովը կը զուարճացընէին: Արսքան  
չանային Աստուծոյ ամենակարողութեա-  
նը վրայ, որ իրենց ձեռքովն այն անջրգի  
ապառաժներուն մէջ՝ առատութիւնը,

գեղեցիութիւնը, և անմեղ ու սլարզ զը-  
լարձութիւնները սփռեր էր ու ստէպ  
կը նորոգէր :

Պօղ էրբօր տասուերկու տարեկան ե-  
ղաւ, տասնըհինգ տարուան եւրոպացի  
տղոցմէ աւելի ուժով ու աչքաբաց էր :  
Գոմինիկոսի մշակած տեղուանքն ինքը կը  
զարդարէր . կ'ելէր անոր հետ մօտ ան-  
տառները կ'երթար, ու զգուշութեամբ  
լէմոնի, նարնջի, ու դամարինի մատղաշ  
տունկեր արմատով կը հանէր, որոնց յե-  
տիններուն գլուխները բոլորածև ու կա-  
նաչագոյն են . նաև արմաւենիներ, որոնց  
պտուղները քաղցր կաթնեղէն հիւթով  
մը լեցուն են, ու նարնջի ծաղկի անու-  
շահոտութիւնը կը բուրեն . ետքը կը բե-  
րէր կը անկէր այս միջակ ծառերը շքա-  
պատին չորս կողմը : Հոն ցանած էր այն-  
պիսի ծառերու հունտեր, որ երկրորդ  
տարին մէկէն կը ծաղկին ու պտուղ կու-  
տան, ինչպէս է «խաթիւն» որուն ճեր-  
մակ ու ողկուղած ծաղկրները բիւրեղէ  
ջահերու նման ամէն դիէն վար կը կա-

խուին. Պարսկաստանի եղբեւանին, որուն ճերմակ բուրդի նման փունջերը շիտակ դէպ'ի վեր կ'երկըննան. բաբէյէ ըստուածը, որուն բունը առանց ճիւղի սեան նման շիտակ վեր կը բարձրանայ՝ սեխի նման կանաչ պտուղ մը տալով, և սիւնապղուխ մը ունի թզոյ տերեւի նման լայն տերեւներով:

Պարսի, ճանի, ալոֆայի, կոյալի, ժաքի ու ժամբուի հունտեր ու կուտեր ալ ցաներ էր: Այս ծառերէն շատը շուտով մը սկսան շուք ձգել իրենց երիտասարդ տիրոջը վրայ: Իր աշխատասիրութեամբը ամենէն անբեր երկիրներն ալ պողաբեր ըրեր էր: Տեսակ տեսակ հալուէներ, հընդիկ թզենոյ դեղին ու կարմիր գծերով ծաղկըներ, փշոտ կեռասենիներ՝ թխագոյն ժայռերուն ծայրերը կը ծածկէին, և կարծես թէ կապտագոյն ու կարմրագոյն ծաղկըներով զարդարուած երկայն լիաններուան կ'ուզէին հասնիլ, որոնք ասդիս անդին լերան ժայռերէն վար կը կախուէին:



Այս տուճակները այնպիսի կարգով մը  
շարեր էր, որ մէկ նայուածքով բոլորը  
մէկէն աչքիդ առջև գալով կը զուարճա-  
նայիր: Հովտին մէջ տեղը այն խոտեղէն-  
ները տնկած էր, որ քիչ կ'աճին. ետքը  
թուփերը, յետոյ միջակ մեծութեամբ  
ծառերը, ու ամենէն ետքը մեծ ծառերը,  
որ տեղւոյն բոլորաիքը կը պատէին. այն-  
պէս որ եթէ մէջտեղը կեցած աչքդ մէյ  
մը ստորացընելով նայէիր, այս ընդարձակ  
հովիտը ամփիթէատրոն մը ձևացեր էր,  
կանաչութեամբ, պտուղներով ու ծաղ-  
կըններով զարդարուած, որուն մէջ կային  
բանջարեղէններ, պղտի մարդագետիկներ  
և բրնձի ու ցորենի դաշտեր: Բայց այս  
տուճակները իր ուղած ձևովը շարելով բնա-  
կանէն չէր հեռացած, և անիկայ իրեն օ-  
րինակ առնելով շատ բարձր տեղուանքը  
պլուտոյ հունտերը ցաներ էր, ջրերու ե-  
զերքը անոնք՝ որ ծփելու յարմար են.  
վերջապէս՝ ամէն տուճակ իրեն յարմար  
եղած տեղը կ'աճէր, ու ամէն տեղ կը  
զարդարուէր իր տուճակին բնական ազու-

ըութեամբը : Ժայռերուն բարձրէն ին-  
կած ջրերը՝ հովտին մէջ տեղ տեղ աղ-  
բիւրներ կը ձևացընէին, տեղ տեղ ալ լը-  
ճակներ որ կանաչներուն մէջ հայլի պէս  
տարածուելով մէջը կը տեսնուէին չորս  
կողմի ծաղկաղպեստ ծառերը, Ժայռերն  
ու կապտագոյն երկինքը :

Թէպէտ երկիրը խորտուբորտ էր, այ-  
սու ամենայնիւ տունկերուն շատը թէ  
աչքի և թէ ձեռքի մօտ էին : Մենք ալ  
կ'օգնէինք իրեն խորհուրդ տալով ու ձեռն-  
տուութեամբ, որպէս զի գործը առաջ  
տանի : Ճամբայ մը բացեր էր, որ աս հով-  
տիս բոլորտիքը կը պարտէր, անկէջ ալ  
ուրիշ պզտի ճամբաներ, որոնք ճիւղ  
ճիւղ բաժնուելով՝ կու գային դարձեալ ի  
կեդրոնը կը միանային : Խիստ անհարթ  
տեղուանքն ալ բանի բերեր էր, ու դիւ-  
րին ճամբաները խորտուբորտ ճամբա-  
ներու հետ, և ընտանի ծառերը վայրենի  
ծառերու հետ խառնելով՝ շատ աղէկ յար-  
մարցուցեր էր : Աս անհամար քարերուն  
կոյտերովը, որոնք հիմա այս ճամբանե-

րը, ինչպէս նաև կողւոյն մեծ մասը, կը  
խաւփանեն, առիս անդին բուրգեր շինե-  
ր, ու քարերուն ամէն մէկ կարգը շա-  
րելու ատեն՝ հողով մէկտեղ վարդենինե-  
րու, սիրամարգածաղիկներու և ուրիշ  
այնպիսի թուփերու արմատներ խառ-  
նած էր, որ ժայռերու մէջ կը բուսնին,  
անանկ որ քիչ ատենէն այս մթնադոյն  
ու անզարդ բուրգերը կանաչութեամբ ու  
գեղեցիկ ծաղկւոյնով ծածկուեցան: Լե-  
րան խոռոչները, ուսկից որ ջրի ուղիներ  
կը վազեն, երկու կողմէն գէպ ՚ի վար ծը-  
ռած հին ծառեր կային, որով կամարածև  
ստորերկրեայ տեղեր կը ձևանար, ուր  
ամենեւին տաքութիւն չմտնելով ցորեկ  
ատեն հոն կ'երթային զովանալու համար:  
Ճամբայ մը կար որ վայրենի անտառ մը  
կը հանէր, որուն մէջ տեղը հովերէ պա-  
տըստարուած կը մեծնար ընտանի ծառ  
մը ստուղներով լեցուն: Առիս հունձեր  
կը տեսնէիր, անդին պտղատու ծառերու  
սրարտէզ մը: Այս ճամբէն նայելուդ  
տուներ կ'երևային, իսկ ուրիշէ մը՝ բար-

ձրածայր լեռներու գլուխներ կը տեսնուէին : Տերեախիտ անտառիկ մը կար Քաթաճաթի ծառերէ, որն որ քիսննէր ոչ աւնանկ մը հիւսուած էր, որ կէսօր ատեն ալ աչքդ բան չէր կրնար որոշել . իսկ մեր ձախայ ժայռին ծայրէն, որ լերան մէկ կողմէն դուրս ցըցուած էր, կը տեսնուէր այս շրջապատիս մէջի ամէն բաները . նաև հեռուանց ծովը, ու երբեմն նաև մըն ալ որ Եւրոպայէն կու գար, կամ հոն կը դառնար : Այն ժայռին վրայ իրիկուան դէմ կը ժողվուէին աս տնուօրնները ու լուռութեամբ կը վայելէին օդուն զովութիւնը, ծաղկըներուն անուշահոտ բուրմունքը, աղբիւրներուն ախորժալուր խոխոջանքը, և լուսոյ ու մթութեան իրարու խառնուելուն տեսարանը :

Ոչ ինչ այնպէս ախորժելի էր, ինչպէս այս բաւղին մէջի զուարճալի բնակարաններուն շատին վրայ յարմարցուցած տնուները : Այն ժայռն՝ որուն վրայով հեռոք խօսեցայ և ուսկից իմ գալս կը տեսնէին, ԳԻԻՏ ԲՍՐԵԿՍՄՈՒԹԵԱՆ կ'ը

սուէր: Պօղ ու Ա իրգինի իրենց խաղալու  
ատենը հոն սրամարտի ծառ մը տնկած  
էին, ու երբոր հեռուէն իմ դալս կը տես-  
նէին, մէկէն ճերմակ թաշկինակ մը կը  
բանային ծայրը՝ գալուստս աւետաւորե-  
լու համար. ինչպէս որ սա մերձակայ  
լէրան վրայ ալ դրօշակ կը քաշեն՝ թէ որ  
ծովուն վրայ նաւ մը տեսնելու ըլլան:  
Միտքս դրի որ արձանագիր մը փորեմ  
այս եղէգիս բնոյն վրայ: Թէպէտ ես ը-  
րած ճամբորդութիւններուս մէջ զուար-  
ճութիւն կ'իմանայի թէ որ հին արձան  
մը կամ յիշատակարան մը տեսնելու ըլ-  
լայի, սակայն ալ աւելի ասորժելի է ին-  
ծի ընտիր արձանագիր մը կարդալը. վասն  
զի ան միջոցին կարծես թէ քարին մէջէն  
մարդու մը ձայն կ'ելլէ ու իր ձայնը կը  
լսեցնէ յաւիտենականութեան դարե-  
րէն, և անապատին մէջ տեղը գտնուող  
մարդուն դառնալով կ'ըսէ՝ թէ հոս ինքը  
մինակ չէ, հապա իրեն նման ուրիշ շա-  
տերն ալ աս տեղուանքս զգացին, մտա-  
ծեցին ու նեղութիւն քաշեցին: Թէ որ

այս արձանագիրը այնպիսի հին ազգի վըրայ է՝ որ աշխարհիս երեսէն անհետացեր է, կ'առնէ կը տանի մեր հոգին անասման յաւիտենականութեան դաշտին մէջ, ու իր անմահութիւնն զգալ կու տայ անոր, ցուցնելով թէ մտածութիւն մը՝ նաև թագաւորութեան մը կործանմանէն ետքը դեռ կը տեւէ :

Աւստի Պօղոս ու Վիրգիլնայ դրօշակին սրտի կայմին վրայ գրեցի Ռբատիոսի այս սողերը .

Ըզբեզ եղբարքն Հեղինայ՝ աստեղբ պայծառք լուսասփիւռ ,

Եւ հայրն հողմոց ուղղեսցէ , միայն շնչեաւ ըզգեփիւռ :

Վիրգիլիոսի հետեւեալ սողն ալ Ռատիոսի ծառի մը կեղևին վրայ փորեցի , որուն շուքին տակը շատ հեղ Պօղ կը նրստէր ալէկոծեալ ծովը հեռուանց դիտելու համար .

Մա եւ այնմ իսկ երանի որ զդաշտային ծանեաւ ըզգիս :



Իսկ ուրիշ տող մ'ալ Տըլադուր տիկ-  
նոյ խրճիթին դրանը վրայ, որ իրենց ժող-  
վուելու տեղն էր .

Այլ հանգիստ յապահով, կեանք անպատիր  
ճոխ ընչաւէա :

Բայց Վիրգինի չէր հաւնած իմ լատին  
տողերուս . կ'ըսէր թէ իր հողմացոյց դրօ-  
շակին տակը գրածս երկայն ու շատ խո-  
րունկ իմաստ ունէր : « Աւելի կ'ախոր-  
ժէի, կ'աւելցընէր, այս խօսքը . ՄԻՇՏ  
ՅՈՒՁԵԱԼ, ԲԱՅՅ ՀԱՍՏԱՏՈՒՆ : — Այդ խոր  
հըրդաւոր խօսքը աւելի առաքինութեան  
յարմար կու գայ », ըսի : Ըրած անդրա-  
դարձութիւնս կարմրցուց զինքը :

Այս երջանիկ անուորները կը հաղոր-  
դէին զգայուն հոգիներն իրենց չորս կողմի  
առարկաներուն : Արտաքուստ անտար-  
բեր երեցած քաներու ալ սիրուն անուն-  
ներ դրեր էին : Բոլորաձև մարդագետին  
մը, զոր նարնջի, պանեանի ու ժամ-բողի  
ծառեր կը պատէին, և ուր Պօղն ու Վիր-  
գինի երբեմն կ'երթային պարելու, կ'ը-  
սուէր ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ : Այն հին ծառն,

որուն շուքին թակը Տըլադուր տիկինն ու  
Մարգարիտան նստած՝ սրտմեր էին ի-  
րարու իրենց խեղճուածիւններուն պատ-  
մուծիւնը, կ'ըսուէր ՍՐԲԵԱԼ ԱՐՏԱՍՈՒԲ :  
Այն պզտի կտոր երկիրները, ուր ցորեն,  
եղակ ու սիսեռն ցաներ էին՝ ՊՐԸԴԱՆԵԸ ու  
ՆՈՐՄԱՆՏԻՍ, կը կոչուէին : Դոմինիկոսն ու  
Մարիամը ուզելով իրենց տիկիններուն  
պէս միշտ միտքերնին բերել Ափրիկէ ծը-  
նած քաղաքնին, ԱՆԿՈԼԱ, ու ՖՈՒԼԹՅՆԻ  
կ'ըսէին այն երկու տեղերուն, ուր կողով  
հիւսելու խոտ մը կը բուսնէր, և ուր  
զգմենի մը անկած էին : Այսպէս ահա  
այս պանդուխտ տնեցիքը կը ջանային ի-  
րենց հայրենի երկրին բերքերովը կենդա-  
նի պահել անոր քաղցր յիշատակը, ու  
օտար երկրի մը մէջ զգացած սրտի կըս-  
կիծնին զովացընէլ : Աւա՛ղ, այս տեղոյս  
ծառերուն, աղբիւրներուն ու ժայռե-  
րուն հազար մէկ գեղեցիկ անուններով  
ծաղկած ատենը տեսայ ես. և հիմա նոյն  
տեղը ասանկ վեր 'ի վայր եղեր է, և Յու-  
նաստանի դաշտերուն նման՝ աւերակնէ :

րէ ու սրտաշարժ անուններէ զատ ուրիշ բան չունի :

Բայց բոլոր աս շրջապատիս մէջ՝ ՀԱՆԳԻՍՏ ՎԻՐԳԻՆԵԱՅ ըսուած տեղէն աւելի զուարճալի տեղ մը չէիր կրնար գտնել : Գիւտ Բարեկամութեան ժայռին ստորոտը քիչ մը դէպ 'ի խորն աղբիւր մը կայ, որուն բլխած տեղը մանր լճակ մը կը ձևանայ՝ բարակ խոտերով ծածկուած մարգագետնի մը մէջտեղը : Երբոր Մարգարիտա ծնաւ զՊօղ, Հնդկի գոգոյ՝<sup>1</sup> մը ընծայեցի իրեն, որ ուրիշները տուած էին ինծի : Այս պտուղը ան լճակին եզերքը տնկեց, որպէս զի անկէջ բուսնելու ծառը օր մը իր աղուն ծննդեանը Թուականն ըլլայ : Տըլադուր տիկինն ալ անկէ օրինակ առնելով ուրիշ մըն ալ ինքը տնկեց հոն՝ եր-

<sup>1</sup> Գոգոն Հնդկաստանի ծառ մըն է, որ ինչուան երեսուն քառասուն ոտք կը բարձրանայ, տասը տասնըհինգ ոտք երկայնութեամբ տերեւներ ունի, որոնցմէ տան ծածք ու հովանոցներ կը շինուին : պտուղը կարծր պատենի մէջ նշի ձևով է :

բոր զՎիրգիների աշխարհ բերաւ : Ան երկու պտուղներէն երկու մեծ գոգոյի ծառեր բուսան , որ այս տնուորններուն ժամանակագրութիւնը կը սեպուէին . մէկին Պօղի ծառ կ'ըսէին ու մէկային ալ Վիրգիների . ասոնք թիչ մը անհաւատար բարձրութեամբ մեծցան՝ իրենց դեռահասակ տերանցն հասակին համեմատ . բայց տասուերկու տարուան մէջ խրճիթներուն բարձրութիւնն անցեր էին : Արդէն սկսած էր ճիւղերնին իրարու խառնուիլ . ու գոգոյի մանր ողկոյզները կը կախուէին աղբիւրին աւազանին վրայ : Այս երկու ծառերէն զտո , ժայռին ծոցը իր բնական զարդերովը թողուած էր . անոր մթնագոյն ու խոնաւ կողերուն վրայ աստղերու նման կը փալիլէին կանաչ ու սև լայն մազատեսակ բոյսեր , ու սփռուեալ փոքր տերևախիտ սատերը փունջ փունջ կը ծածանէին հովէն , ծիրանեգոյն կանաչ երկայն երիզներու պէս կախուած : Հոն մշտադալար բոյսեր կային , որոնց ծաղիլները կարմիր մեխակի ծաղկանց կը

նմանին, ու դարասղպեղներ, որոնց կը-  
ճեպներն արեհագոյն են ու բուստէն ա-  
ւելի կը փայլին: Բաշասանն որ սրտաձև  
տերևներ ունի, ռահանն որ մեխակի հոտ  
ունի, ասդիս անդին անոյշ բուրմունքներ  
կը ծաւալէին օդուն մէջ: Լերան բարձր  
տեղուանքէն կը կախուէին բաղեղի պէս  
փաթթուող բոյսեր չուխաներու պէս  
ծածանուած, որոնք ժայռերը ծածկե-  
լով մեծ կանաչազարդ վարագոյրներ կը  
ձևացընէին: Ծովու թռչունները կը վա-  
զէին կու գային այս խաղաղ մենարաննե-  
րը՝ դիշերն անցընելու համար: Արևուն  
մտնելուն մօտ ծովեզերքէն թռչելով դէպ  
'ի հոն կու գային աղկիոնն ու ծովային  
արտուտը, նաև բարձրաթռիչ սև սուր-  
հանդակն արևադարձին տակի ճերմակ  
թռչնոյն հետ մեկտեղ, որոնք արևուն հետ  
կը թողուին կը փախչէին Հնդկային ու՛-  
կիանոսին միայնութիւններէն:

Արբիլնի կ'ախորժէր նստիլ աս աղ-  
բիւրին քով, որ փառաւոր ու միանգա-  
մայն վայրենի շքեղութեամբ զարդա-

րուած էր : Շատ անգամ՝ աչ կու գար երկու գողոյ ծառերուն շուքին տակը իրենց ճերմակեղէնները լուանալու : Կաև երբեմն իր այծերը հոն արածելու կը բերէր . և անոնց կաթէն պանիր շինելու ժամանակը՝ սիրտը կը բացուէր տեսնելով որ անոնք սեպացեալ ժայռին քուռց մէկուն վրայ իբր 'ի պատուանդան մը օդուն մէջ կայնած՝ անոր կողերուն վրայի պառուու ձարը կ'ուռէին : Պօղ մօտակայ անտառէն բերաւ հոն ամէն տեսակ թռչնոց բոյներէն : Այս թռչուններուն ծնողքը ձագերնուն ետեէն վազելով եկան ասնոր գաղթականին մէջ հաստատուելու : Ա իր գինի ատեն ատեն բրնձի, մսրացորենի ու կորեկի հատերով կը կերակրէր զանոնք : Ինքը երևնալուն պէս՝ սուլող սարեակները, քաղցրաձայն պենիակները<sup>1</sup>, ծիրանաւոր թռչունը՝ որուն փետուրներն

<sup>1</sup> Պէնկալին ըսուած պզտի թռչունները արտուտի տեսակէն կը սեպուին . ասոնք Պենկալայի մէջ շատ կը գտնուին :



հրագոյն են, կ'ելէին իրենց թուփերէն, զմ'ըրխտագոյն թուփակները մօտաւոր լադան ծառերէն վար կ'իջնէին, կաքաւները գալարիներուն տակէն կը վազէին. ասոնք ամէնը խառնիխառն կու գային կը մօտենային իրեն՝ ընտանի հաւերու նման: Պօղ և ինքը կը զբօսնուին դիտելով անոնց խաղերն և ախորժակով ուտեննին:

Սիրուն տղաքներ, այսպէս ձեր մանկութեան օրերը անմեղութեամբ կ'անցընէիք, ինքզինքնիդ վարժելով բարեգործութեանց մէջ: Քանի՛ քանի անգամ հոս այս տեղւոյս վրայ, ձեր մարքը տեսնելով ձեր այսպիսի բարեգուշակ երևոյթներով աշխարհ գալը, գրկելով զձեզ՝ գոհութիւն կու տային Աստուծոյ որ կը պատրաստուէիք ծերութեան ատեննին միսիթարութիւն ըլլալու իրենց: Քանի՛ անգամ այս ժայռերուն շուքին տակը նստած ձեր ծնողացը սեղանակից եղեր եմ գիւղական կերակուրնիդ վայելելով, որոնք ոչ երբէք կենդանւոյ արեամբ խառնուած էին: Կաթով լեցուն գգումէ գաշ

խուրաններ, թարմ հաւկիթներ, բրնձէ կարկանդակներ պանեանի տերևներու վրայ, գետնախնձորով, <sup>Տա՛ն 1</sup>, նարնջով, նուռով, պանեանով, արմաւով ու անանասով բեռնաւորուած կողովներ, ասոնց մէջ ահա կը տեսնէիր ամենէն առողջարար ուտելիքները, ամենէն զուարթ գոյներն և ամենէն համեղ հիւթերը :

Այս խնջոյքներուն պէս՝ իրենց խօսակցութիւնն ալ անոյշ ու անմեղ էր : Պօղ շատ հեղ նոյն օրուան ըրած և երկրորդ օրն ընելիք աշխատութիւններուն վրայ կը խօսէր : Միշտ ընկերութեան օգտակար եղած բանին վրայ կը մտածէր . հոս ճամբաները աղէկ չեն, կ'ըսէր, հոն հանգիստ չնստուիր, սա նորատունկ հովանոցները բաւական չուք չեն ձգեր . անդին՝ վերգիւնի աւելի հանգիստ կրնար ըլլալ :

1 Մանկ ըսուած ծառը Հիւրմիւզի, Պենկալայի ու Մալապարի մէջ կը բուսնի . պտուղը սրտաձև է, և թէ հում կ'ուտուի ու թէ գինւոյ մէջ հարած :

Անձրեային ատեններ ամէնն ալ տէր  
և ծառայ՝ օրերնին տանը մէջ կ'անցը-  
նէին, խոտէ խտիրներ ու պամպուկէ կո-  
ղովներ հիւսելով: Ներսի պատերուն վը-  
րայէն կախուած էին քերիչներ, կացին-  
ներ, բահեր, ու այս երկրագործական  
գործիքներուն քով շարուած էին զանա-  
զան բերքեր, որ անոնց պտուղներն էին .  
ինչպէս բրինձ պարկերու մէջ, ցորենի  
որաններ ու պանեանի ոստեր վըայի պը-  
տուղներովը. այսչափ առատութեան հետ՝  
կարգաւորութեան ազուորութիւնն ալ կը  
փայլէր: Վիրգինի Մարգարիտայէ ու իր  
մօրմէն սորված ըլլալով շաքարեղէգի, լե-  
մոնի ու կիտրոնի հիւթերէն օշարակներ  
ու զօրացուցիչ դեղեր կը շինէր:

Գիշեր ըլլալուն պէս՝ ճրագի մը լու-  
սովն իրենց ընթրիքը կ'ուտէին. ետքը Տը-  
լադուր տիկինը կամ Մարգարիտա քանի  
մը պատմութիւն կը պատմէր, ինչպէս  
ճանապարհորդաց գիշեր ատեն Եւրո-  
պայի աւազակներով լեցուն անտառնե-  
րուն մէջ մոլորիլը, կամ նաւու մը ալէ-

կոծութիւնը, որ սասաիկ փոթորիկով  
մը կու գայ կը զարնուի անբնակ կղզւոյ  
մը ժայռերուն: Այս սլաւոմութիւններս  
լսելով՝ տղոցն զգայուն սիրտը կը վա-  
ռուէր, ու կ'աղօթէին Աստուծոյ իրենց  
չնորհք մը ընելու՝ որ օր մը այնպիսի խեղ-  
ճերու հիւրասիրութիւն կարենան ցու-  
ցնել: Բայց վերջապէս երկու տնուոր-  
ները հանգչելու համար կը բաժնուէին  
իրարմէ, փափաքելով որ առաւօտը դար-  
ձեալ իրար տեսնեն: Երբեմն կը քնա-  
նային անձրեկն շառաչմունքովը, որ հե-  
ղեղի պէս կը թափէր անակներուն ծած-  
քին վրայ. կամ հովուն հանած աղաղա-  
կովն, որ ծովափանց զարնուած ալիքնե-  
րուն հեռաւոր ճայթմունքը իրենց ահան-  
ջը կը հասցընէր: Ստէպ կ'օրհնէին զԱս-  
տուած իրենց անձին ապահովութեանն  
համար, զոր աւելի աղէկ կ'ըմբռնէին՝ հե-  
ռաւոր վտանգները տեսնելով:

Ատեն ատեն Տըլադուր տիկինը ամե-  
նուն առջին չին կամ Նոր Վտակարանէն  
սրտաշարժ սլաւոմութիւն մը կը կարդար:

Քիչ կը վիճաբանէին այս սրբազան գրոց վրայ, որովհետև բոլոր իրենց աստուածաբանական գիտութիւնը բնականին պէս զգացմամբ էր, ու իրենց բարոյականը՝ Աւետարանի բարոյականին պէս գործնական էր: Չբօսանաց համար ամենևին օր որոշած չէին և ոչ ալ տրամութեան համար: Ամէն օր իրենց տօնախմբութիւն էր, ու չորս կողմի տեսարանները տաճար մը՝ ուր հիանալով կը տեսնէին միշտ անհուն Տեսչութիւն մը, ամենազօր և միանգամայն բարեկամ մարդկան: Այս վստահութիւնն որ Աստուծոյ գերազոյն կարողութեանը վրայ ունէին, կը մտիթարէր զիրենք անցելոյն վրայ, կը խրախուսէր ներկային, և յոյս կու տար ապանւոյն համար: Այսպէս ահա այս կանայքս խեղճութիւններէ բնութեան ճամբուն մէջ մտնելու ստիպուելով՝ կը յուցընէին թէ իրենց և թէ զաւկըներնուն վրայ բոլոր այն զգացմունքներն, որ բնութիւնը կու տայ մեզի՝ որպէս զի չը լայ թէ թշուառութեան մէջ իյնանք:

Բայց որովհետև խնամ բարեկարգ հոգւոյն մէջ ալ երբեմն ամպեր կը պատեն, ուստի երբոր մէջերնէն մէկը ախուր երևար, ամէնքը անոր քովը կը ժողովուէին ու անոր ցաւալի մտածմունքները կը փարատէին, աւելի զգացմունքով քան թէ խորհրդածութիւններով: Ամէն մէկը իր յատուկ բնաւորութիւնը կը բանեցընէր այս բանիս մէջ: Մարգարիտա վառ զուարթութիւն մը, Տըլադուր տիկինը՝ անոյշ աստուածաբանութիւն, Վիրգինի՝ քաղցր կերպեր, Պօղ՝ պարզսրտութիւն ու անկեղծ սէր: Նաև Մարիամն ու Գոմինիկոսը անոր օգնութեան կը հասնէին: Ամենուն սիրտը կը կոտրէր՝ թէ որ արամութեան մէջ տեսնէին զան, և երբոր անիկայ լար՝ իրենք ալ կը սկսէին լալ: Ասանկ ահա տկար բոյսերու պէս իրարու կը պլլուէին սաստիկ փոթորիկներու գէմ գնելու համար:

Գարնան՝ կիրակի օրեր ամէնքն ալ պատարագի կ'երթային Բամբըլմուններու եկեղեցին, որուն զանգակատունը դաշ-



տին մէջ կը տեսնես: Հոն կու գային դա-  
հաւորակով նաև հարուստ բնակիչները,  
որոնք շատ անգամ ուղեցին ծանօթա-  
նալ այսպիսի միաբան ընտանիքներու  
հետ, և զբօսանաց ալ հրաւիրեցին զիրենք.  
բայց իրենք՝ քաղաքավարութեամբ ու  
սլարկեշտութեամբ կը հրաժարէին անոնց  
հրաւերքէն. վասն զի աղէկ գիտէին թէ  
մեծ մարդիկ հասարակ մարդիկներն ու-  
րիշ բանի համար չեն փնտրուեր՝ բայց եթէ  
շողոքորթներ ունենալու համար. և թէ  
մէկը շողոքորթ չկրնար ըլլալ, բայց եթէ  
ուրիշի աղէկ կամ գէշ կերբերը գովելով:  
Ուրիշ կողմանէ ալ կը զգուշանային հա-  
սարակ մարդկանց ընկերութենէն, որ սո-  
վորաբար նախանձոտ, բամբաստող ու տը-  
գէտ կ'ըլլան: Առջի բերան ոմանք վախ-  
կոտ սեպեցին զասոնք, ոմանք ալ հպարտ  
կարծեցին. բայց իրենց զգուշաւոր վար-  
մանն հետ այնչափ մարդասիրութիւն ու  
քաղաքավարութիւն կը ցուցնէին, մա-  
նաւանդ խեղճ մարդիկներու, որ քիչ քիչ  
հարուստները զիրենք սկսան յարգել,

ու աղքատները համարձակ իրենց կը դի-  
մէին :

Պատարագէն ետքը շատ հեղ մարդիկ  
իրենց ետևէն կու գային ծառայութիւն  
մը խնդրելու համար. երբեմն վտացեալ  
մարդ մըն էր եկողը՝ խորհուրդ հարցը-  
նելու համար. երբեմն տղայ մը կու գար  
կ'աղաչէր՝ որ շուտով գան տեսնելու իր  
հիւանդ սրահած մայրը՝ մօտաւոր թաղի  
մը մէջ : Միշտ հետերնին կ'առնէին քանի  
մը օգտակար դեղեր տեղացւոց սովորա-  
կան հիւանդութեանցը վերաբերեալ, և  
այնպիսի սէր մը կը ցուցնէին, որ շատ  
մեծ կ'երևցնէ սրտի ծառայութիւն մը :  
Մասնաւոր յաջողութեամբ կը ցրուէին  
սրտի վիշտերը, որոնք անտանելի են ա-  
ռանձնութեան մէջ գտնուողներու և հի-  
ւանդներու համար : Տըլագուր տիկինը  
այնպիսի վստահութեամբ մը կը խօսէր  
Աստուծոյ վրայ, որ հիւանդը մտիկ դրած  
ատենը՝ զԱստուած ներկայ կը կարծէր :  
Վերգինի շատ հեղ տուն կը դառնար ար-  
տասուալից աչուրներով, բայց սիրտը ու-

ըստութեամբ լեցուն, որովհետև բարեգործութիւն ընելու առիթ մը ունեցեր էր: Ինքն էր որ միշտ առաջուց կը ստարաստէր հիւանդներուն պէտք եղած դեղերը, և աննման վայելչութեամբ մը կուտար անոնց ձեռքը:

Այս եղբայրսիրութեան այցելութիւններն ընէլէն ետքը, երբեմն ճամբանին երկնցընելով Բարձր Լէրան քովէն կ'անցնէին ու ինծի կը հանդիպէին, որ իրենց կը սպասէի մէկտեղ կերակուր ուտելու համար պզտի գետին եզերքը, որ իմ բնակութեանս մօտէն կը վազէ: Այսպիսի գիպուածներու համար քանի մը շիշ ազնիւ գինի կը պատրաստէի, Եւրոպայի այս քաղցր և զորացուցիչ բերքերովը մեր հընդկական սեղաններուն խնտումն աւելցընելու համար: Երբեմն ալ ատեն որոշելով իրարու խօսք կու տայինք որ ծովեզերքը ժողվուինք ուրիշ քանի մը պզտի գետերու բերնին մօտ, որոնք հոստեղս ուրիշ բան չեն՝ բայց եթէ մեծ վտակներ: Հոն կը բերէինք աներնէս բուսական ու

անլիքներ, և կը միացընէինք այն ուտե-  
լիքներուն հետ՝ որ ծովը առատու[թեամբ  
կ'ընծայէր մեզն. կ'որսայինք այն եղերք-  
ներէն գլխաձկունք, պողիպոզներ, կար-  
մրաձկունք, տեսակ տեսակ խեցգետին-  
ներ, ծովու շագանակներ, ոստրէներ, ու  
ամէն տեսակ խեցիներ: Երբեմն ժայռի  
մը վրայ [թաւիշենեոյ մը շուքին տակը  
նստած՝ կը տեսնէինք հեռուանց ծովուն  
ալիքները որ կու գային մեր ժայռին ստո-  
րոտը կը զարնուէին ահաւոր ճայթմուն-  
քով: Պօղ, որ ձկան պէս լողալ գիտէր,  
երբեմն ալիքներուն ընդ առաջ կ'երթար  
ծովուն մէջի քարերուն վրայէն քալելով.  
Ետքը անոնց մօտենալուն պէս՝ դէս 'ի ե-  
զերքը կը փախչէր, և այն ուռուցեալ,  
փրփրադէզ և մունչող ալիքներն իր ետեէն  
խել մը տեղ կը վազէին աւազին վրայ:  
Բայց Ա իրգինի աս տեսնելուն պէս՝ սուր  
աղաղակներ կ'արձըկէր, ու կ'ըսէր [թե  
այս խապերը զինքը շատ կը վախցընեն:

Աերակրէն վերջը, այս երկու պատա-  
նիները կը սկսէին երգել ու պարել. Ա իր-

գինի գիւղական կենաց երջանկութիւնը  
կ'երգէր ու նաւաստիներուն թշուառու-  
թիւնները, որոնք ագահութիւնը կը դրո-  
դէ ճանապարհորդելու կատաղի տարեր-  
քի մը վրայ, քան թէ երկիր բանելու՝  
որ աւելի խաղաղ կերպով այնչափ հա-  
րըստութիւններ կու տայ մարդուս: Եր-  
բեմն հնդիկներու կերպովը մնջկատակ  
խաղ կը ձեացընէր Պօղի հետ: Մնջկա-  
տակը մարդուս առաջին լեզուն կը սե-  
պուի. ամէն ազգի ծանօթ է, և անանկ  
բնական և բացայայտ է, որ ճերմակնե-  
րուն տղաքը մէկէն կը սորվին՝ հնդիկնե-  
րուն տղոց ըրած կըթուութիւնները տես-  
նելով: Ա իրգինի միտքը բերելով մօրն ի-  
րեն կարգացած պատմութիւններէն ա-  
նոնք՝ որ աւելի տպաւորութիւն ըրած  
էին իր վրայ, անոնց գլխաւոր դիպուած-  
ները շատ բնական կերպով կը ձեացը-  
նէր: Երբեմն Գոմինիկոսը ծնծղայ զար-  
նելուն միջոց՝ անիկայ մարգագետնին մէջ  
կ'երևար գլուխը սափոր մը առած, և վախ-  
կոտութեամբ մերձակայ աղբիւրին կը մօ-

տենար ջուր առնելու համար: Դոմինիկոսն ու Մարիամն ալ Մադիամու հովիւները կը ձեռնային, ու թող չէին տար որ մօտենայ, և վազնաւել կը կեղծէին: Ան առն Պօղ անոր օգնութեան կը հասնէր, կը վազնաւէր հովիւները, Վիրգինեայ սափորը կը լեցընէր ու նորէն անոր գլխուն վրայ կը դնէր, հետն ալ մշտադաւար բուսոյ մը կարմիր ծաղկըներէն հիւսած պըսակ մը, որ երեսին ճերմակութիւնը աւելի դուրս կը ցատքեցընէր: Ան առնն ես ալ անոնց հետ խառնուելով Հոագուէլ կ'ըլայի, ու Սեփովրա աղջիկս Պօղի կը նութեան կու տայի:

Ուրիշ անգամ ալ Հոութայ դժբաղդութիւնը կը ձեռնցընէր, որ որբեարի ու աղքատ կը դառնայ իր քաղաքը, ուր երկար բացակայութենէ մը ետքը անտէր կը մնայ: Դոմինիկոսն ու Մարիամը հնձողներու կերպարանք կը մտնէին. Վիրգինի կը ձեռնցընէր թէ ասդիս անդին անոնց անցած տեղերէն քանի մը հասկ ցորեն կը ժողվէր: Պօղ նահապետի ծանրու-



Թեամբ մը հարցմունքներ կ'ընէր անոր, որոնց գողալով պատասխան կու տար Ախրգինի. ետքը մէկէն գուժը շարժելով՝ հիւրընկալութիւն կ'ընէր անմեղութեան, և ապաստան մը կը շնորհէր թշուառութեան. կը լեցընէր Ախրգինեայ գոգնոցը ամէն տեսակ բարիքներով, ու մեզի կը բերէր, իբր քաղքին ծերոցն առջևը, յայտնելով որ թէպէտ անիկայ աղքատ էր, բայց ինքը կնուժեան կ'առնու զան: Այս տեսարանիս Տըլագուր տիկնոջ միտքը գալով իր երեսէ ձգուիլը ծընողքէն, իր այրիութիւնը, Մարգարիտայի իրեն ըրած բարի ընդունելութիւնը, և իրենց տղոցն իրարու հետ երջանկութեամբ ամուսնանալուն հիմակուան ունեցած յոյսն ալ մէկտեղ գալով, չէր կրնար արցունքը բռնել. և այս յիշատակը, որ խառն էր յաջողութեամբք և վնասք, ամենուս աչուրներէն տրամութեան և ուրախութեան արցունքներ կը վազընէր:

Այս տեսարաններն այնպէս ճիշդ կը ձևանային, որ մարդ ինքզինքը Ասորես

տանի և Պաղեսախնու դաշտերը փոխա-  
գրուած կը կարծէր : Տեսարանը ձևացը-  
նելու համար պէտք եղած զարդարանքը,  
լուսաւորութիւնն ու նուազարանները  
պակաս չէին : Թատրոնը սովորաբար ան-  
տառի մը մէջ ճամբաներու գլուխ մըն էր,  
ուր ծառերուն բազմութենէն տերևախիս  
կամարներ ձևացած էին, որոնց մէջ տե-  
ղուանքը օրն 'ի բուն կը նստէինք տաբու-  
թենէ պատսպարած : Բայց երբոր արևը  
հորիզոնին կը մօտենար, իր ծիրանագոյն  
ճառագայթները ծառերու բուներէն կո-  
տրրտուելով՝ երկայն լուսեղէն որաներու  
կը բաժնուէին անտառին մթութեանը  
մէջ. որ շատ փառաւոր կ'երևար : Երբեմն  
իւր ամբողջ սկաւառակը ծառազարդ ճամ-  
բու մը միւս ծայրէն երևալով, կարծես  
թէ լուսոյ ծով մը անտառին մէջը կը ծա-  
լալէր, ծառերու տերևներն ալ լուսաւո-  
րուելով անոր քրքրմագոյն շառաւիղնե-  
րէն, տպագլինն ու զմրուխտի գունով  
կը փայլէին. իսկ մամռապատ ու թուխ  
բուները՝ հին պղնձէ սիւներու կը նմա-

նէին, ու թռչուններն որ լուծեամբ քաշուած էին մութ տերևներուն տակը՝ գիշերը հոն անցնելու համար, երկրորդ արշալոյս մը տեսնելնուն վրայ զարմացած՝ ամէնն ալ միաբերան կը բարևէին տուրնջեան աստղը բիւրապատիկ երգերով:

Ըստ հեղ այս գիւղական հանգէսներուն հետ զբաղելով՝ առանց իմանալու գիշերը վրայ կը հասնէր: Բայց օդը անանկ մաքուր ու կլիման այնպէս քաղցր էր, որ անտառներու մէջ «ժոբայի»<sup>1</sup> մը տակ կը քնանայինք, առանց վախ ալ ունենալու գողերէ ոչ մօտանց, և ոչ հեռուանց: Երկրորդ առաւօտ ամէն մարդ իր տնակը կը դառնար, ու ինչպէս որ թողուցած էր՝ այնպէս կը գանէր զայն: Այն ժամանակը այնքան հաւասարմութիւն կար այս անմարդաբնակ կղզւոյս մէջ, որ

<sup>1</sup> Աժոբայի կ'ըսուի գաղթականաց մէջ տեղակ մը հիւղ, որ յանպատրաստից ցիցերու վերայ կը շինուի, և ճիւղերով, տերևներով, յարգով կամ պրաւուով կը ծածկուի:

շատ տներու դռները բանալեալ չէին գոցուեր, ու կղզւանքը հետաքրքրութեան նիւթ մըն էր գրեօնէր<sup>1</sup> շատին համար:

Տարւոյն մէջ այնպիսի օրեր կային, որ Պօլի ու Վիրգինեայ համար աւելի մեծ խնդութիւն կը պատճառէին, և ասոնք իրենց մարցն անուանը օրերն էին: Վիրգինի առջի օրուրնէ ցորենի ալիւրէ կարկանդակներ կը շաղուէր ու կ'եփէր, և կղզին ծնած աղքատ ճերմակներուն տուները կը խրկէր, որ ոչ երբէք Եւրոպայի հաց բերաննին դրած էին, և սևերէն օգնութիւն մը չգտնելով կը ստիպուէին անտառներու մէջ ծանրագ<sup>1</sup> ապրիլ և աղքատութեան համբերելու համար ոչ մտքի ապշութիւն ունէին՝ որ գերութենէ կ'ըլլայ, ոչ ալ արիութիւն՝ որ դաստիարակութենէ առաջ կու գայ: Այս կարկանդակները միայն կրնար տալ անոնց Վիրգինի՝ իրենց տանը կարողու-

<sup>1</sup> Մանիօգը Ամերիկայի բոյս մըն է, ծաղկները զանգակի ձևով են ու գետնախնձորի պէս մեծ արմատ ունի, ուսկից հաց կը շինեն:

Թեանն համեմատ . բայց այնպիսի շնոր-  
հալի կերպով մը կու տար , որ անոնց մեծ  
բան մը կ'երևնար : Պօղ կը տանէր իւրա-  
քանչիւրին այդ կարկանդակները . ընդու-  
նողները՝ խօսք կու տային երկրորդ օրը  
Տըլադուր փիկնոջ ու Մարգարիտայի տե-  
սուԹեան գալու : Ան ատենը նայիս մայր  
մը կու գար երկու իրեք ողորմելի աղջիկ-  
ներով , որոնք վատուժ , դեղնած , և այն-  
պէս երկչրտ կ'ըլլային՝ որ աչուքնին վեր  
վերցընելու չէին համարձակեր : Ա իրգե-  
նի մէկէն կը հանգչեցընէր զանոնք ու զո-  
վացուցիչ ըմպելիքներ կը հրամցընէր , ո-  
րոնց ազնուութիւնը դուրս կը ցատքեցը-  
նէր այնպիսի մասնաւոր սարագայով մը ,  
որով ըստ իւր կարծեացը անոնց յարգը  
կ'աւելնար . Այս ըմպելիքը Մարգարիտա  
չնած է , կ'ըսէր , իսկ մկալը մայրս . աս  
պտուղս ալ եղբայրս իր ձեռօքը քաղեր  
է բարձր ծառի վըայէն : Կը ստիպէր զՊօղ  
որ սլար բռնել տայ անոնց : Քովերնէն  
չէր զատուեր ինչուան որ զանոնք զուարթ  
ու գոհ չտեսնէր : Կ'ուզէր որ ուրախ ըլ-

լան իր ընտանեաց ուրախութեամբը :  
«Մարգս, կ'ըսէր, ուրիշ կերպով ինքզին-  
քը երջանիկ չընէր, բայց եթէ ուրիշի եր-  
ջանկութեանը հոգ տանելով » : Երբոր ի-  
րենց բնակարանը դառնալու ըլլային, կը  
ստիպէր զանոնք որ հետերնին տանին այն  
բանն որ գիտեր էր թէ անոնց ախորժելի  
կու գայ. բայց միշտ ընծաներուն նորու-  
թիւնն ու եզակիանութիւնը պատճառ բե-  
րելով կը ծածկէր անոնց կարօտութիւնը :  
Թէ որ հագուստնին շատ հինցած տես-  
նէր, մօրը հաճութեամբն իր լաթերէն  
մէկ քանին կ'ընտրէր, ու Պօղի կու սար  
որ երթայ գաղտուկ անոնց անակին գրանն  
առջև գնէ : Այսպէս ահա ուրիշի բարիք  
կ'ընէր Աստուծոյ պէս, ծածկելով բա-  
րերարն ու բարեգործութիւնը ցուցնե-  
լով :

Դուք Եւրոպացիքդ, որ պզտիկուց  
մտքերնիդ կը լեցուի երջանկութեան հա-  
կառակ եղած այնքան նախապաշարմունք-  
ներով, դուք չէք կրնար ըմբռնել թէ բը-  
նութիւնը կրնայ այսչափ լուսաւորու-



Թիւն ու զբօսանքներ տալ: Ձեր հոգին մարդկային գիտութեանց սլափ սահմանին մէջ ամփոփուած ըլլալով՝ շուտ կը հասնի արուեստական վայելքներուն վերջի կէտին • բայց բնութիւնն ու սիրտը անսպառելի աղբիւրներ են :

Պօղ և Ալիբախի ոչ ժամացոյց ունէին, ոչ օրացոյց, և ոչ ալ ժամանակագրական, պատմական և իմաստասիրական գրքեր • իրենց կենաց շրջանը՝ բնութեան շրջանին վրայ հաստատուած էր: Օրուան ժամերը ծառերուն շուքէն կը հասկընային, տարւոյն եղանակները՝ անոնց ծաղիկ ու պտուղ տուած ատենէն, տարիներն ալ՝ հնձոց թիւէն: Այս անոյշ մը տաժմունքները մեծ գեղեցկութիւն մը կու տային անոնց խօսակցութեանը: «Ճաշու ժամ է, կ'ըսէր Ալիբախի ընտանեաց, պանեաններուն ստուերները իրենց բուներ լիլած են» • և կամ, «Գիշերը կը մօտենայ, դամարինի ծառերն ահա կը գոցեն իրենց տերևները»: Երբոր իր գրացի բարեկամուհիները կը հարցընէին Ալի-

գինեայ թէ « Ե՞րբ պիտի գաս մեզ տեսնելու », պատասխան կու տար . « Հաքարեղէգներուն ատենը : — Քու այցելութիւնդ մեզի անոնցմէ աւելի քաղցր ու զուարճալի է », կը կրկնէին այն մանկահասակ աղջիկները : Երբոր իրեն հարցուէր իր ու Պօղի տարիքը, « Եղբայրս, կ'ըսէր, աղբիւրին քովի մեծ գոգոյ ծառին հասակակից է, իսկ ես սղտիկին : Քանի որ աշխարհ եկեր եմ, Տանկի ծառերը տասուերկու անգամ պտուղ տուին, ու նարնջենիները քսանըջորս հեղ ծաղիկ բացին » : Կեանքերնին կարծես թէ ծառերու հետ կապուած էր՝ Փաւոնայց և Դրիադներուն պէս : Ուրիշ պատմական թուական չէին գիտեր՝ բաց 'ի իրենց մարցը կեանքէն, ոչ ուրիշ ժամանակագրութիւն՝ իրենց պտղատու ծառերէն զատ, և ոչ ուրիշ իմաստասիրութիւն՝ բաց 'ի ամենուն բարիք ընելէն ու Աստուծոյ կամօցը հնազանդելէն :

Եւ իրօք, ինչ պէտք էր որ այս պատանիները մեզի պէս հարուստ ու գի-

տուն ըլլային : Իրենց աղքատութիւնն ու  
տգիտութիւնը սլ աւելի երջանիկ կ'ը-  
նէին զիրենք : Օր չէր ըլլար որ իրարու  
օգնութիւն մը չմատուցանէին, կամ լոյս  
մը չտային, որուն մէջ թէ և սխալներ ալ  
խառնուած ըլլային, անմեղ մարդու սը-  
խալանքները վախնալու չափ վտանգաւոր  
չէն :

Ասանկ կը մեծնային բնութեան այս  
երկու տղաքը. մտմտութեամբ ամենեկին չէր  
կնճած անոնց ճակատը. ոչ երբէք ան-  
բարեսխառնութիւն մը ըրած ունէին՝ որ  
անով արիւննին ապականի. սրտերնին  
չէր ապականած դժբաղդ կրքով մը. սէ-  
րը, անմեղութիւնն ու աստուածաշատու-  
թիւնը՝ օր ըստ օրէ աւելի կ'երեցնէին  
իրենց հոգւոյն շնորհալի գեղեցկութիւ-  
նը գէմքերնուն, ձևերնուն ու շարժուածք-  
ներնուն վրայ : Իրենց կենացը առաւօտուն  
մէջ ըլլալով անոր պայծառութիւնը կը  
փայլէր վրանին. այսպէս երեցան Եդե-  
մայ գրախտին մէջ մեր նախաստեղծ ծը-  
նողքը, երբոր Աստուծոյ ձեռքէն ստեղ-

ծուէլով տեսան մէկզմէկ, մօտեցան իրա-  
րու, և առջի խօսակցութիւննին եղբօր  
ու քրոջ պէս եղաւ: Ախրգիննի Եւայի  
պէս անոյշ, պարկեշտ ու ընտանի էր. իսկ  
Պօղ՝ Ադամայ նման չափաւոր մարդու  
հասակ մը ունէր՝ հանդերձ տղու մը  
պարզմտութեամբ:

Հազար հեղ պատմած է ինծի թէ աշ-  
խատութիւններէն դառնալու ատենը՝ եր-  
բեմն Ախրգինեայ հետ մինակ գտնուե-  
լով, կ'ըսէր անոր. « Երբոր յոգնած կ'ըլ-  
լամ, քեզ տեսնելուս պէս յոգնութիւնս  
կ'անցնի: Երբոր լերանը վրայէն քեզ այս  
հովտիս մէջը կը տեսնեմ, վարդի մը կոկոն  
կ'երևաս ինծի մեր պողատու ծառոց մէջ  
տեղը: Թէ որ դէպ 'ի մեր ծնողաց տնակը  
երթալու ըլլաս, իր ձագերուն վազող կա-  
քաւէն աւելի գեղեցիկ կ'երևայ հասակդ,  
և աւելի թեթև ընթացքդ: Թէպէտ ծա-  
ռերուն մէջ զքեզ աչքէ կորսնցընեմ,  
հարկ չկայ որ նորէն գտնելու համար ըզ-  
քեզ տեսնեմ. վասն զի այնպիսի բան մը  
կը թողուս նստած կանաչներուդ վրայ ու-

անցած տեղերուդ օդուն լըայ, որ չեմ  
կրնար բերնով բացատրել: Թէ որ քովդ  
մօտենամ, բոլորովին կը յափշտակես  
զիս: Երկիքին կապոյտը այնքան գեղեցիկ  
չէ, որչափ քու աչուըներուդ կապոյտը:  
Պէնկալիններուն գեղգեղն այնչափ քաղցր  
չէ՝ որչափ քու անոյշ ձայնդ. Թէ որ մա-  
տիս ծայրովը սոսկ դպչիմ քեզի, բոլոր  
մարմինս խնդութենէ դողալ կը սկսի:  
Միտքդ բեր ան օրն որ Երէք Ստեանց  
գետին գլորտըկող սուր քարերուն լըայէն  
անցանք: Գետեզերքը հասած միջոցս՝ չա-  
րաչար յոգնած էի. բայց երբ կռնակս ա-  
ռի զքեզ, կարծէի Թէ Թռչնոյ պէս Թևեր  
ունիմ: Ըսէ ինծի տեսնեմ, ինչ բանով  
կախարդած ես զիս: Արդեօք խելքովդ  
բայց մեր մայրերը երկուքէս ալ աւելի  
խելք ունին. — միթէ գգուանքներովդ  
բայց անոնք քեզմէ աւելի ստէպ կը համ-  
բուրեն զիս. — ես կարծեմ Թէ քու բա-  
րեսրտութեամբդ: Ոչ երբէք պիտի մոռ-  
նամ մերկ ոտքով ինչուան Սև գետը քա-  
լելդ, խեղճ փախստական գերւոյ մը նե-

րումն խնդրելու համար : Ահաւասիկ , սիրելիդ իմ , առ սա կիտրոնի ծաղկած ճիւղը՝ որ անտառէն փրցուցի , գիշերը անկողնոյդ քովը դիր . կեր սա մեղրի խորիսխը , որ քեզի համար ժայռի մը վրայէն առի . բայց առաջ հանգչէ գիրկս , որ յոգնածութիւնս անցնի » :

Վիրգինի ալ կը պատասխանէր . « Եղբայր իմ , արևուն առտուան ճառագայթները այս ժայռերուն ետեւէն ցոլացած առտեննին՝ այնչափ ցնծութիւն չեն տար ինծի , ինչպէս քու տեսութիւնդ : Կը սիրեմ իրաւ իմ մայրս , կը սիրեմ նաև քուկդ . բայց երբոր քեզի որդեակ իմ կը կանչեն , ա՛լ աւելի կը սիրեմ զերենք : Քեզի ըրած գգուանքնին ինծի աւելի զգացումն կու տան՝ քան թէ այն գգուանքներն որ ինծի կ'ընեն : Կը հարցընես ինծի թէ զիս սիրելուդ պատճառը ի՞նչ է . այն ամէն բան որ մէկտեղ կը մեծնան , իրար կը սիրեն . տես մեր թռչունները , մի և նոյն բուներու մէջ մեծնալով՝ մեզի պէս անոնք ալ իրար կը սիրեն : Մտիկ ըրէ



Ընչպէս իրար կը կանչեն ու կը խօսին մէկ  
ծառէ մէկալ ծառ: Այսպէս ես իսկ, եր-  
բոր լերանը վրայ սրինգն հնչեցընելուդ  
միջոցը՝ եղանակներուն արձագանքը կը  
լսեմ, ես ալ հովտին ծայրէն անոնց խօս-  
քերը կը կրկնեմ: Սիրելի ես ինձի, մա-  
նաւանդ ան օրուրնէ՛ ՚ի վեր՝ որ կ'ուզէիր  
գերեզն տիրոջը հետ ծեծկուել իմ պատ-  
ճառաւս: Ան ատենէն սկսեալ շատ հեղ  
ինքիրմէս ըսած եմ. Ո՛հ, եղբայրս բա-  
րի սիրտ մը ունի. թէ որ ինքը չըլլար,  
վախէս մեռած կ'ըլլայի: Ամէն օր Աստու-  
ծոյ աղօթք կ'ընեմ իմ ու քու մօրդ հա-  
մար, քեզի ու նաև մեր խեղճ ծառանե-  
րուն համար. բայց երբոր քու անունդ  
կը յիշեմ, կարծես թէ ջերմեռանդու-  
թիւնս կ'աւելնայ, բոլոր սրտանց կը  
խնդրեմ Աստուծմէ որ քեզի չարիք մը  
չպատահի: Ինչո՞ւ այնչափ հեռու ու  
բարձր տեղուանք կ'եղես՝ ինձի պտուղ  
ու ծաղկըներ քաղելու համար: Միթէ  
մեր պարակէղին մէջ եղածները բաւական  
չէն: Տես ինչպէս յոգներ, արիւն քըր-

տինք մտեր ես » : Այս ըսելով իր պզտի ճերմակ թաշկինակովը կը սրբէր անոր ճակատը , ու շատ հեղ երեսը կը համբուրէր :

Բայց սակայն ատենէ մը 'ի վեր Վիրգինի իր վրայ նոր անհանգստութիւն մը կ'իմանար : Աղուոր կապուտակ աչուրները մարմարիտնի բծերուն պէս կը սևնային . երեսին գոյնը կը գեղնէր . ընդհանուր թուլութիւն մը բոլոր մարմինը կը տկարացընէր : Այլ ճակատն առջի պայծառութիւնը չունէր , և շրթունքները առջինին պէս չէին ծիծաղեր : Յանկարծ կը զուարթանար առանց ուրախութեան պատճառի , ու կը տրամէր առանց վշտաց : Կը փախէր իր անմեղ խաղերէն , իր քաղցրը աշխատութիւններէն , ու իր սիրելի ծնողացն ընկերութենէն : Ասդիս անդին մենաւոր տեղուանք կը պաշտէր . որ կողմը երթար՝ հանգստութիւն կը փնտռէր , ու տեղ մ'ալ չէր գտներ ուղածը : Երբեմն Պօղն որ կը տեսնէր , ճխալով գէստ 'ի անոր կը վազէր , բայց մօտեցածին պէս՝

չիոթուծիւն մը մէկէն կը սրաշարէր զինքը • սաստիկ կարմրուծիւն մը լոժգոյն երեսները կը գունաւորէր, ու աչուրները չէին համարձակեր սովորականին սէս աւոր աչուրներուն նայելու: Պօղ կ'ըսէր իրեն • « Կանաչուծիւնը բոլոր աս ժայռերս ծածկած է, մեր թուչունները քեզ տեսներնուն համար կ'երգեն • բոլոր չորս կողմի եղած բաները ուրախ են, դու միայն տխուր ես »: Եւ գրկելով կը ջանար սիրտ տալ անոր • բայց անիկայ գլուխը մէկգի կը գարձընէր, ու գողգողալով դէպի մօրը կը վազէր: Խեղճը իր եղբօրը գգուանքներէն այլայլուծիւն մը կ'իմանար: Իսկ Պօղ ամենեին բան մը չէր հասկընար աս նոր ու կարգէ գուրս փոփոխուծիւններէն: Չախորդուծիւնը միայնակ չգար:

Այն ամառներէն մէկը, որ ատեն ատեն անհնարին նեղուծիւն կու տան արևադարձներուն տակն եղած երկիրներուն, եկաւ հոս ալ տարածելու իր հարուածները: Դեկտեմբեր ամսուն վեր-

ջերն էր, երբոր արևն այժեղ ջիւրը մտած՝  
իր գագաթնահասցեաց շառաւիղներովը  
Քաղցիոյ Աղցին իրեք շաբաթ կը տաքցը-  
նէ: Հարաւային արևելեան հովը, որ գրե-  
թէ բոլոր տարին կը տիրէ հոն, ալ չէր  
փչեր. երկայն փոշոյ ամպեր ճամբանե-  
րուն վրայ կը բարձրանային, ու օդուն մէջ  
կախուած կը կենային. գետինը ամէն կող-  
մէն կը ճաթէր. կանաչները երեր էին.  
տաք արտաշնչութիւններ կ'ելլէին լեռնե-  
րու կողերէն, ու վտակներուն շատը ցամ-  
քեր էին. ծովու կողմէն ամպ մը չէր գար.  
միայն ցորեկ ատեն կարմրագոյն գոլորշի-  
ներ դաշտերէն վեր կ'ելլէին, և արևուն  
մտնելու ատենը հրդեհի բոցերու պէս  
կ'երևային. նաև գիշերը չէր զովացըներ  
բռնկած մթնոլորտը: Լուսնին սկաւա-  
ռակը կարմիր կտրած՝ կ'ելլէր միգասպտ  
հորիզոնի մը վրայ չափազանց մեծութեւ:  
Ոչխարները բլուրներու վրայ ինկած, վի-  
զերնին դէպ ՚ի երկինք երկնցուցած՝ օդը  
չնչելով ձորերը տխուր բառաչմունքնե-  
րով կը ՚նչեցընէին. զիրենք արածող հո-

վիւն ալ գետնին վրայ կը պառկէր, քիչ մը զովուժիւն գտնելու համար. բայց որ կողմն երթայիր՝ գետինը կրակ դարձած էր, ու հեղձուցիչ օդուն մէջ՝ միայն ճճիններու բզզանքը կը լսուէր, որոնք կ'ուզէին ծարաւնին անցընել մարդկանց ու կենդանեաց արիւնը ծծելով:

Այս հրակէզ գիշերներէն մէկուն՝ Վիր գինի խմացաւ որ իր անհանգստութեան նշանները կ'աւելնային. կ'ելլէր, կը նըստէր, դարձեալ կը պառկէր, ու ինչ դիրքով որ կենար, ոչ քուն և ոչ հանգրստութիւն կը գտնէր: Լուսնկայ ժամանակ դէպ 'ի իր աղբիւրն սկսաւ երթալ: Թէպէտ ջրի պակասութիւն կար, բայց սեսաւ որ ակունքէն դեռ բարակ արծաթափայլ ջուր մը կը վազէր ժայռին թուխ կողերուն վրայ: Իր աւազանին մէջ նետուեցաւ. առջի բերան պաղութիւնը կենդանացոյց իր զգայարանքները, և հազար ումէկ ակորթելի յիշատակներ մտքը եկան. յիշեց իր մանկութիւնը, երբ մայրն ու Մարգարիտան զուարճանալով նոյն

տեղը կը լուային զինքը Պօղի հետ, և թէ  
ետքը Պօղ միայն իր գործածութեանն  
համար պահելով աւազակը, մէջը աղէկ  
մը խորցուցեր էր, յատակը աւազով ծած-  
կեր, ու եզերքը անսակ տեսակ հոտաւէտ  
խոտեր ցաներ էր: Նշմարեց ջրին մէջ իր  
թևերուն ու գրկին վրայ երկու արմաւե-  
նիններուն շուքը զարկած, որ եղբօրն ու  
իր ծնած ատենը անկուեր էին, ու հիմա  
իր գլխուն վրայ կանաչ ճիւղերնին ու նո-  
րահաս պտուղնին իրարու կը խառնէին:  
Մտածեց Պօղի բարեկամութիւնն, որ վար-  
դերուն անուշահոտ բուրմունքներէն ա-  
ւելի քաղցր էր իրեն, աղբիւրներու ջրէն  
աւելի յստակ, ու իրարու հետ միացած  
արմաւենիներէն աւելի ուժով, և հառա-  
չանք մը արձըկեց: Միտքը եկաւ գիշեր  
ժամանակ ըլլալն ու իր միայնութիւնը, ու  
լափով կրակ մը առաւ զինքը: Մէկէն եր-  
կիւղալից դուրս ելաւ այն վտանգաւոր  
շուքերէն ու ջրերէն, որ աւելի կիզող էին  
քան այրեցած դօտւոյն արևը: Վազեց  
զնայ մօրը քովն իրեն ասպաւէն մը գտնե-



լու համար: Շատ հեղ ուղեց իր վիշտերը  
պատմել անոր, սխմեց ձեռուրններն իր  
ձեռացը մէջ, շատ հեղ քիչ մնաց որ Պօ-  
ղին անուանը պիտի տար. բայց սիրաւ  
ճմլուելով լեզուն առաջ չգնաց, ու գլու-  
խը մօրը գիրկը կռթնցընելով ուրիշ բան  
չկրցաւ ընել, բայց եթէ աչքին արցուն-  
քովը ուռգանել զանիկայ:

Տըլադուր տիկինը լաւ կը հասկընար  
իր արջկան անհանգստութեան պատճա-  
ռը, բայց ինքն ալ չէր համարձակեր ա-  
նոր վրայօք հետը խօսակցիլ. « Ո՛վ դուստր  
իմ՝ կ'ըսէր, դու զքեզ Աստուծոյ յանձ-  
նէ, որուն ձեռքն է մարդուս առողջու-  
թիւնն ու կեանքը: Այսօր կը փորձէ ըզ-  
քեզ, վաղը վարձատրելու համար: Մը-  
տածէ որ միայն առաքինութիւն գործե-  
լու համար աշխարհ եկեր ենք »:

Սակայն այս չափազանց ջերմութիւնը  
ովկիանոսէն այնպիսի գոլորչիներ հանեց,  
որ ընդարձակ հովանոցի մը պէս բոլոր  
կողմն սպառեցին: Վերանց կատարներն ի-  
րենց կը քաշէին զանոնք, ու կրակէ եր-

կայն ակօսներ երբեմն երբեմն կը բացուէին իրենց միգապատ ծայրերուն վերայ : Աստ չանցաւ ահաւոր որոամօնկներ սկսան ահեղ ձայնով Թնդացրնել անտառները, դաշտերն ու ձորերը, սարսափելի անձրևներ՝ ջրվէժներու պէս երկրնքէն վար Թափեցան : Փրփրադէզ հեղեղներ այս լերան կողերէն սկսան վար Թափիլ, անանկ որ այս հովիտը ծով մը ձևացեր էր, և այն տափարակ բլուրն ուր որ խրճիթներն էին՝ պզտի կղզի մը եղեր, ձորին մուտքն ալ՝ դուռ մը, ուսկից խառն իխուռն դուրս կ'ելլէին մունչող ջրերուն հետ մէկտեղ՝ հող, ծառեր ու ժայռեր :

Բովանդակ տնեցիքը ժողվուած դողալով աղօթք կ'ընէին Աստուծոյ Տըլադուր տիկնոջ տնակին մէջ, որուն յարկը ահաւոր կերպով մը կը ճըռճուար հովերուն սաստիկութենէն : Թէպէտ դուռն ու փեղկերը աղէկ դոցուած էին, այսու ամենայնիւ փայլակները անանկ լուսաւոր ու այն պէս ետևէ ետև կը յաջորդէին, որ դրսի ամէն առարկաները տախտակներուն ճեղ-

քուածքներէն որոշ կ'երևային : Կտրիճ Պօղը Դոմինիկոսի հետ մէկտեղ ան զայրագին փոթորկին ժամանակը մէկ տնակէն մէկալ տնակը կ'երթար , հոս պատմը կ'ամբըրներ նեցուկ մը դնելով , անդին ցից մը կը տնկէր . երբեմն տնակը կը մըտնար՝ ընտանիքը միտիթարելու համար միայն , յոյս տալով թէ օդը շուտով պիտի բացուի : Եւ իրօք՝ իրիկուան դէմ անձրևը դադրեցաւ , հարաւային արևելեան կանոնաւոր հովը սովորականին պէս փչել սկսաւ , մըրկալից ամպերը հիւսիսային արևմտեան կողմը քաշուեցան , ու արևը երևցաւ երկնքին եղերքը՝ իր մարը մտնելու ատեն :

Ա իրգինի նախ և առաջ ուզեց երթալ իր հանգստեան տեղը տեսնել . Պօղ քովը մօտեցաւ ու թևը հրամցուց անոր՝ որպէս զի օգնէ քալելուն . ժպտելով մը ընդունեցաւ , ու մէկտեղ ելան տնակէն : Օդը զով ու պարզ էր . ճերմակ մուխեր լերան գագաթանը վրայէն կ'ելլէին , ու հեղեղներէն տեղ տեղ մնացած փրփուրները

բոլորովին կը ցամփէին : Իսկ պարտեզը տակնուվրայ եղած էր ջրերուն բռնութենէն . պտղատու ծառերէն շափն արմատները բացուեր էին . աւազի մեծամեծ կոյտեր ծածկած էին մարգագետիններու եզերքները , ու լեցուցեր էին Վիրգինեայ աւազանը : Միայն երկու դոգոյի ծառերը անարատ մնացեր էին իրենց կանաչ տերևներովը . բայց բոլորտէրը ոչ դալարիք մնացեր էին , ոչ հովանոցք , ոչ ալ թռչուններ , բաց 'ի բանի մը ուէն իսկէն երէ , որոնք մերձակայ ժայռերուն գագաթը ժողվուած՝ ցաւագին երգերով կ'ողբային իրենց ձագերուն կորուստը :

Այս աւերումը տեսնելով Վիրգինի , ըսաւ Պօղի . « Թռչուններ բերած էիր հոս , փոթորիկը մեռուց զիրենք . այս պարտեզը տնկեր էիր , ահա ան ալ աւրուեր է : Ուրեմն ամէն բան կ'ոչնչանայ այս երկրիս վրայ . միայն երկինքն անփոփոխ է » : Պօղ պատասխանեց իրեն . « Ափսո՛ս որ քեզի երկնային պարգև մը չեմ կրնար տալ . բայց ես երկրիս վրայ ալ բան մը չունիմ » :

Վիրգինի կրկնեց ամօթխածու թեամբ .  
« Գովգ Ս . Պօղի կենդանագիրն ունիս » :  
Հաղիւ թէ ըսաւ այս խօսքը , Պօղ մօրը  
տնակը վազեց գնաց բերելու : Այս Պօղ  
անապատականին կենդանագիրը՝ պըղ-  
տի մանրանկար մըն էր . Մարգարիտա  
չատ ջերմեռանդ էր աս պատկերիս . օ-  
րիորդու թեան ժամանակն երկար ատեն  
վիզը կախած էր զանիկայ , բայց զաւկի  
տէր ըլլալէն ետքը՝ տղուն վիզն անցու-  
ցեր էր : Ասկէ զատ , իր ծոցօրու թեանն  
ատենը՝ որ ամենուն երեսէն ինկած էր ,  
այնչափ անգամ նայեր էր այս սուրբ ճըգ-  
նաւորին վրայ , որ իր զաւակն ալ քիչ մը  
անոր կը նմանէր : Եւ այս պատճառաւ ու-  
րօշեր էր նոյն անունը դնելու անոր , որ-  
պէս զի այնպիսի պաշտպան սուրբ մը ու-  
նենայ , որ կեանքը մարդիկներէ հեռու  
անցուցեր էր , որոնք զինքն ալ խաբեր ու-  
յետոյ երեսէ թողուցեր էին : Վիրգինի  
այս պզտի պատկերը Պօղի ձեռքէն առած  
ատենը՝ խռովեալ ձայնով մը ըսաւ անոր .  
« Եղբայր իմ , քանի որ ես ասպրիմ , ոչ եր-

բէք մէկը պիտի կարենայ ասիկայ ձեռքէս  
առնել, և ոչ երբէք պիտի մոռնամ որ  
այս աշխարհիս մէջ ունեցած մի միայն  
բանդ ինձի տուիր » : Այս մտերմութեան  
նշանը, այս անյուսալի ընտանութիւնն  
ու սէրը տեսնելով Պօղ, ուզեց հետը գրը-  
կուիլ. բայց Աիրգինի, որ թռչնոյ մը պէս  
թեթև էր, խոյս տուաւ, ու զարմանքի  
մէջ թողուց զինքը, որ չէր հասկընար ա-  
նոր այս արտաքոյ կարգի կերպը :

Սակայն Մարգարիտա կ'ըսէր Տըլա-  
գուր տիկնոջ. « Ինչո՞ւ չենք կարգեր մեր  
զաւկընէրը, որ իրարու վրայ սաստիկ սէր  
ունին, թէտէտ խմտղաս ամենևին չանդրա-  
դառնար : Երբոր բնութիւնը մէյ մը ար-  
թընցընէ զիրենք, ան ատեն սարասպ տեղ  
կը հսկենք վրանին, և ան ատեն ամէն բանէ  
վախնալու է » : — Տըլագուր տիկինը պա-  
տասխանեց. « Դեռ շատ մանկահասակ  
են, ու խիստ աղքատ. ի՛նչ մեծ ցաւ կ'ըլ-  
լայ մեր սրտին, թէ որ Աիրգինի թշուառ  
տղաքներ աշխարհ բերելու ըլլայ, որոնք  
մեծցընելու համար գուցէ բաւական ոյժ



ալ չունի: Քու գերիդ Դոմինիկոսը շատ  
ինկած է ուժէ, Մարիամն ալ ցաւադար  
է. ես, սիրելի բարեկամուհիս, տասնը-  
հինգ տարուան մէջ խիստ տկարացայ. •  
մարդս շուտով կը ծերանայ տաք երկիրնե-  
րու մէջ, ու ալ շուտ վշտաց մէջ. մեր մէկ  
հատիկ յոյսը Պօլն է. սպասենք որ տա-  
րիքը անոր մարմինը զօրացնէ, ու կարե-  
նայ իր աշխատութեամբն զմեզ կերա-  
կրել: Հիմակու հիմա դու ալ գիտես որ  
հազիւ թէ օրուան ասորուստնիս կը գըտ-  
նենք: Բայց թէ որ կարճ ժամանակի հա-  
մար զինքը Հնդկաստան խրկելու ըլլանք,  
առուտուրով կրնայ քիչ մը բան վաստը-  
կիլ ու քանի մը գերիներ գնել, և ՚ի դար-  
ձին՝ Վիրգինեայ հետ կը կարգենք. ես  
կարծեմ թէ ոչ ոք կրնայ իմ սիրելի աղ-  
ջկիս այնպէս երջանիկ ընել՝ ինչպէս քու  
տղադ Պօլ: Այս բանիս վրայով մէյ մը  
մեր դրացւոյն հետ ալ խօսինք »:

Եւ իրօք՝ աս տիկինները խորհուրդ  
հարցուցին ինձի. ես ալ նոյն կարծիքին  
հաւանեցայ: « Հնդկաց ծովերը հանդարտ

են, ըսի. թէ որ յաջող եղանակի մէջ  
ասկէց Հնդկաստան անցնելու ըլլայ, շատ  
շատ վեց շաբաթ կը քէ, նոյնչափ մըն ալ  
գառնալը: Մեր գրացիներուն ունեցած  
վաճառքներէն Պօլի համար պզտի բեռ  
մը կը կապենք. վասն զի ճանչուորներ  
ունիմ որ զինքը շատ կը սիրեն: Թէ որ  
իրեն տալու ըլլանք չմանած բամբակ՝ որ  
հոս մաքրելու համար գործիքներ չունե-  
նալով չենք գործածեր, եբնոսի փայտ  
որ այնքան հասարակ է հոս՝ որ ինչուան  
կրակի կը վառենք, ու քանի մը տեսակ  
խէժեր որ մեր անտառներուն մէջ երեսէ  
ձգուած են, բոլոր ասոնք ալէկ գնով կը  
ծախուին Հնդկաստան, ուր հոս տեղս  
ամենեկին հարկաւոր չեն մեզի»:

Ես յանձն առի Պ. Տըլապուրտոնէէն  
ճամբու հրամանագիր մը խնդրելու. բայց  
նախ և առաջ ուղեցի Պօլի միտքն իմանալ:  
Շատ ապշեցայ՝ երբոր պատանին դար-  
ձաւ ըսաւ ինձի այնպիսի հանճարով որ  
շատ վեր էր իր տարիքէն. « Ինչու կ'ու-  
ղէք որ ընտանիքս թողում. չեմ գիտեր

ինչ հարստութիւն մտքերնիդ դրեր էք : Աշխարհիս մէջ երկիր բանեցընելէն աւելի շահաւոր առուտուր կայ, որ երբեմն մէկին տեղը ինչուան յիսուն ու հարիւր կու տայ : Թէ որ առուտուր կ'ուզենք ընել, չենք կրնար մեր բերքերուն աւելորդն ասկէց քաղաքը տանիլ, առանց ստիպուելու ինչուան Հնդկաստան երթալ : Մեր մայրերը կ'ըսեն ինծի՝ Թէ Գոմինիկոսը ծեր է ու ինկած • բայց ես դեռ պատանի եմ ու օրէ օր ուժովնալու վըրայ եմ : Թէ որ յանկարծ հեռաւորութեանս ատեն իրենց չար դիպուած մը պատահի, մանաւանդ Ախրզինեայ, որ արդէն հիւանդ է : Ո՛հ, չէ, չէ • չեմ կրնար յանձն առնել ղերենք հոս թողլու » :

Այս պատասխանը զիս մեծ շփոթութեան մէջ ձգեց • որովհետև Տըլադուր տիկինը Ախրզինեայ վիճակն ինծի իմացուցեր էր, և կ'ուզէր որ կերպով մը այս երկու պատանիները քիչ մը ատեն իրարմէ հեռացընէ, որպէս զի տարիքնին ալ

բիչ մը մեծնայ, բայց ասոնք այնպիսի պատճառներ էին, որ Պօղի առջև չէի կրնար դնել:

Այս միջոցին Գաղղիայէն եկած նաև մը Տըլադուր տիկնոջ նամակ մը բերաւ իր հօրաքոյրէն: Մեռնելու վախը՝ առանց որոյ անգութ սրտերն զգայուն չէն ըլլար, զինքը պաշարեր էր. մեծ հիւանդութենէ մը ազատեր, բայց տարիքն առած ըլլալուն պատճառաւ՝ վրան տկարութիւն մը մնացեր է եղեր, որ բժշկուելու յոյս չկար: Կը պատուիրէր իր եղբօր աղջկանը որ Գաղղիա անցնի, կամ թէ որ այս երկայն ճամբորդութիւնն ընելու թոյլ չտայ իր առողջութիւնը՝ իր տեղը Վերգինին խրկէ, որուն համար որոշեր էր աղէկ դաստիարակութիւն մը, ու պալատականներէն փեսայ մը տալու, և բոլոր իր հարստութեանցը զանիկայ ժառանգ ընելու: Իմ այս հրամաններս կատարելով, կ'ըսէր, կրնաս դարձեալ իմ սէրս ստանալ:

Հազիւ թէ այս թուղթս կարդացուե-

ցաւ տնեցոց մէջ, տխրութիւնը տիրեց ամենուն վրայ: Դոմինիկոսն ու Մարիամը լալ սկսան: Պօղ ապշած մնաց, ու կարծես թէ բարկանալու վրայ էր: Ախրդինի աչքը մօրը վրայ դարձուցած, բան մըն ալ խօսելու չէր համարձակեր: « Կրնաս ուրեմն հիմա զմեզ թողուլ ու ելլել երթալ », ըսաւ Մարգարիտա Տըլադուր տիկնոջ: — « Չէ, բարեկամուհիս, չէ, զաւկրներս, պատասխանեց Տըլադուր տիկինը. ես զձեզ ոչ երբէք կը թողում. ձեզի հետ ապրեցայ, ձեզի հետ ալ կ'ուզեմ մեռնիլ: Երջանկութիւնը միայն ձեր բարեկամութեամբը ճանչցայ: Թէ որ քիչ մը հիւանդոտ ալ եմ՝ անոր պատճառը հին վիշտերս են. ծնողացս խստութիւնն ու սիրելի ընկերոջս մահը իմ սրտիս խորունկ վէրքեր եղան: Բայց անկէց ետքը այնչափ մտիթարութիւն ու երջանկութիւն վայելեցի ձեր հետը այս խեղճ խրըճիթներուս մէջ, որ չեմ կարծեր թէ ազգատոհմիս հարստութեամբն ասոնց հաւասարը իմ հայրենեացս մէջ վայելի »:

Այս խօսքերուն՝ ամենուն աչքէն ուրախութեան արցունքներ թափիլ սկըսաւ : Պօղ Տըլադուր տիկնոջ պլլուելով, ըսաւ . « Ես ալ պիտի չթողում զքեզ . չեմ երթար Հնդկաստան . ամէնքս ալ քեզի համար կ'աշխատինք, սիրելի մայրիկ . քանի որ մենք կանք, բանի մը կարօտութիւն չես ունենար » : Ամենէն աւելի Վիրգինի ուրախացաւ այս բանիս վրայ . և բոլոր օրը զուարթութեամբ անցընելով առջի անհանգստութիւնը մտացաւ, որով ամենուն սիրտը գոհ ըրաւ ու հանգչեցուց :

Երկրորդ օրը արևուն ելլելու ատենը, երբոր դեռ նոր լմնցուցեր էին իրենց առաւօտեան աղօթքը, որ ամէնքը մէկտեղ սովորութիւն ունէին ընելու, նախաճաշիկէն առաջ Դոմինիկոս իմաց տուաւ անոնց որ ձիաւոր պարոն մը, երկու գերի ալ ետէն, դէպ 'ի տնակը կու գար : Ասիկայ Պ . Տըլասուրտոնէն էր . այն միջոցին որ տնեցիք սեղանն էին, տնակը մտաւ : Վիրգինի երկրին սովորութեանն համե-



մատ՝ խահուէ ու ջրի մէջ եփած բրինձ  
դրած էր սեղան . նաև տաք գետնախնձոր  
ու թարմ պանեան . բոլոր սեղանին ա-  
նօթները քանի մը չոր, պարապ ու մէջ-  
տեղէն երկու կտրած դդումներ էին . իսկ  
սփռոցը պանեանի տերեւներէ շինուած  
էր : Քաղաքապետն առջի բերան քիչ մը  
զարմանք ցուցուց այս բնակարանին խեղ-  
ճութեանը վրայ . ետքը Տըլադուր տիկ-  
նոջ դառնալով, ըսաւ . « Ընդհանուր  
գործքերս երբեմն արգելք կ'ըլլան ինձի  
առանձնականաց վրայ հոգ տանելու .  
բայց դու ուրիշներէն աւելի իրաւունք  
ունիս իմ խնամոցս : Հօրաքոյր մը ունիս  
Բարիզ ազնուական ու շատ հարուստ, որ  
քեզի կ'ուղէ թողուլ իր բոլոր ստացուածքն  
ու կը սպասէ որ քովը երթաս » : — Տը-  
լադուր տիկինը պատասխանեց քաղաքա-  
պետին՝ թէ իր վատառողջութիւնը ձեռք  
չտար որ երկայն ճամբորդութիւն ընէ : —  
« Գէթ, կրկնեց Պ . Տըլապուրտոնէ,  
քու գեռահասակ ու սիրուն աղջիկդ խըր-  
կէ . անիրաւութիւն ըրած կ'ըլլաս՝ թէ

որ ասանկ մեծ ժառանգութենէ մը զրկես  
զանիկայ : Քեզմէ ծածուկ չեմ սպհեր  
որ հօրաքոյրդ տէրութեան հրամանովը  
զինքը կ'ուզէ կանչել : Տէրութեան կող-  
մանէ այս նիւթիս վրայով ինծի ալ դը-  
րուած է՝ որ եթէ պէտք ըլլայ, բոլոր կա-  
թողութիւնս 'ի գործ դնեմ : Բայց ես ու-  
րովհետեւ իմ իշխանութիւնս այս գաղ-  
թահանին բնակիչներն երջանիկ ընելու  
համար միայն կը բանեցընեմ, ուստի կը  
յուսամ որ քու կամքովք այս քանի մը  
տարուան զոհը ընես, ուսկից որ կը կա-  
խուի աղջկանդ տեղաւորուիլն ու ձեր բո-  
վանգակ կենացն հանգստութիւնը : Ի՞նչ  
վախճանի համար եւրոպացիք կողինները  
կու գան . միթէ հարստանալու համար  
չէ : Ա՛լ աւելի զուարճալի չէ հայրենիքն  
երթալ, ու հարստութիւնը հոն տեղք  
սրտորաստ դռնել » :

Այս խօսքերս ըսելով, դրաւ սեղանին  
վրայ մեծ սարկով մը դրամ, զոր իր սեւ-  
րէն մէկը կը կրէր . « Ահաւասիկ, ըսաւ,  
աղջկանդ ճամբու սրտորաստութեանը

Համար հօրաքեռդ կողմանէ տրուածը » :  
Ետքը անուշու-թեամբ մը յանդիմանեց  
Տըլադուր տիկինն՝ որ կարօտու-թեանն ա-  
տեն իրեն չէր դիմած , միանգամայն գո-  
վելով անոր աղնուական քաջասրտու-  
թիւնը : Պօղ մէկէն խօսիլ սկսաւ , ու ը-  
սաւ քաղաքապետին . « Պարոն , մայրս  
հրամանքիդ դիմեց , բայց զինքը գէշ կեր-  
պով մը ընդունեցար : — Ուրիշ տղայ ալ  
ունի՞ս , տիկին , ըսաւ Պ . Տըլապուրտու-  
նէ Տըլադուր տիկնոջ : — Չէ , սլարոն , ը-  
սաւ . ասիկայ բարեկամուհւոյս տղան է ,  
բայց ինքն ալ Վիրգինի ալ երկուքիս  
հաւասար կը սեպուին , և հաւասարապէս  
սիրելի են մեզի : — Պատանի , ըսաւ քա-  
ղաքապետը Պօղի , երբոր քիչ մը բանի  
մէջ մտնես ելլես՝ ան ատեն կը հասկընաս  
պաշտօն ունեցող մարդկանց թշուառու-  
թիւնը , կ'իմանաս թէ որչափ դիւրին է  
սղտորել անոնց միտքը , և թէ որչափ դիւ-  
րաւ հնարագէտ մոլիններու կու տան այն  
բանն՝ որ ծածկեալ արժանաւոր անձանց  
կը վայելէր տալ :

Տըլադուր տիկնոջ հրաւիրելովը Պ .  
Տըլապուրտոնէ սեղանի նստաւ անոր քո-  
վը . գռէօններու պէս խաշած բրնձի հետ  
խառնած խահուէով նախաճաշիկ ըրաւ :  
Շատ զարմացաւ այս պզտի տնակին կար-  
գաւորութենն ու մաքրութեանը , այս եր-  
կու սքանչելի գերդաստաններուն միու-  
թեանը , և իրենց ծեր սպասաւորներուն  
ունեցած փոյթին վրայ : « Յիրաւի , ը-  
սաւ , թէպէտ և ձեր կահկարասիքը փայ-  
տէ են , բայց զուարթ կերպարանքներ ու  
ոսկեղէն սրտեր կը բնակին հոս » : Պօղ  
ախորժեւով քաղաքապետին ընտանու-  
թենէն , ըսաւ անոր . « Կը փափաքիմ  
բարեկամդ ըլլալ , որովհետև ազնիւ անձ  
ես » : Պ . Տըլապուրտոնէ հաճութեամբ  
ընդունեցաւ աս կղզեցոյ բարեկամութե-  
ցոյցը . պլլուեցաւ Պօղին՝ ձեռքը սխմե-  
լով , ու ապահովցուց զինքը թէ կրնար  
վտահանալ իր բարեկամութեանը վրայ :  
Նախաճաշիկէն ետև առանձնացաւ Տը-  
լադուր տիկնոջ հետ , ու իմացուց անոր  
թէ յարմար առիթ մը կայ մօտ ատեն իր

աղջիկը Գաղղիա խրկելու պատրաստ նա-  
ւով մը, և թէ ինքը կը յանձնէ զանիկայ  
իր աղքական տիկիներէն մէկուն՝ որ նոյն  
նաւով ճամբորդութիւն պիտի ընէր, և  
կ'ըսէր թէ պէտք չէ ձեռքէ փախցընել  
ամբաւ հարստութիւն մը՝ քանի մը տա-  
րուան քաշելու կարօտին համար: « Քու  
հօրաքոյրդ, ըսաւ երթալու առեհը, եր-  
կու տարիէն աւելի չկրնար ապրիլ. իր  
բարեկամները իմացուցած են ինծի: Ա-  
ղէկ մտածէ՛. բաղդը ամէն օր չգար. դու  
քեզի խորհուրդ հարցուր, տես: Ամէն  
խեղք ունեցող մարդիկ պէտք է որ իմ  
կարծիքէս ըլլան»: Տըլադուր տիկինը պա-  
տասխանեց անոր՝ թէ աս աշխարհիս մէջ  
իր աղջկանը երջանկութենէն զատ ուրիշ  
բան չիսպասելուն համար, անոր Գաղ-  
ղիա երթալը բոլորովին անոր կամացը կը  
թողուր:

Այս տիկինը չէր տրտմեր այնպիսի ա-  
ռիթ մը գտնելուն՝ որ քիչ մը առեհուան  
համար Ա իրգինին ու Պօղը իրարմէ զա-  
տէ, և օր մը անոնց փոխադարձ երջան-

կութիւն չնորհէ: Ուստի մէկդի տարաւ  
իր աղջիկն ու ըսաւ անոր. « Դուստր իմ,  
մեր սպասաւորները ծերացած են, Պօղ  
գեռ տղայ է, Մարգարիտա տարիքն առ-  
նել սկսաւ, ես ալ արդէն ցաւագար եմ.  
Թէ որ մեռնելու ըլլամ, դուք առանց  
հարստութեան այս անապատներուս մէջ  
մինաւոր ինչ պիտի ընէք. այնպիսի մարդ  
մըն ալ չունիք՝ որ ձեզի պէտք եղածին  
չափ օգնութեան հասնի, ու հարկ կ'ըլ-  
լայ որ վարձուոր ծառայի մը պէս երկիր  
բանելով միշտ ապրիք: Այս բանը քանի  
որ միտքս կու գայ, սիրտս տրամութեամբ  
կը ճմլի »: — Ախրզինի պատասխանեց  
իրեն. « Աստուած մեզ աշխատելու դա-  
տասպարտած է. դու ինձի սորվեցուցիր  
աշխատիլ՝ ու ամէն օր զինքը օրհնել. ին-  
չուան հիմա զմեզ երեսէ չէ թողուցած,  
ասկէ ետքն ալ չթողուր. իր նախախնա-  
մութիւնը մասնաւորապէս պաշտպան կը  
կենայ թշուառներու: Դու ինձի շատ ան-  
գամ աս բաներս զուրցած ես, մայր իմ.  
անկարելի է որ յանձն առնուիմ քեզմէ



բաժնուհի) : Տըլադուր տիկինը խռովելով կրկնեց . « Վախճանս ուրիշ բան չէ՛ բայց եթէ զքեզ երջանիկ ընել, ու օր մը Պօղի հետ կարգել, որ քու եղբայրդ չէ՛ ուստի մտածէ հիմա որ անոր երջանկութիւնն ալ քեզմէ կը կախուի » :

Դեռահասակ աղջիկ մը երբոր սէր ունի մէկուն վրայ, կը կարծէ թէ ոչ ոք գիտէ իր սէրը : Սրտին վրայ ծածկած քօղը աչուրներն ալ կը ծածկէ . բայց երբոր բարեկամի մը ձեռքն այն քօղը վերցընելու ըլլայ, ան ատեն իր սիրոյ ծածուկ վիշտերը կը սկսին գուրս թափիլ իբր սատառուածքէ մը, և լուութեան ու գաղտնեաց քօղին տեղը՝ որոնցմով նախ ծածկուած էր, կը յաջորդեն մտերմութեան անոյշ զեղմունքները : Վերգինի իր մօրը բարեսիրութեան այս նոր նշաններէն շարժելով սիրտը բացաւ անոր, ու սլառմեց թէ ինչ պատերազմներ կրեր էր, զորոնք Աստուած միայն գիտէր . և թէ խանգակաթ մօր մը օգնականութիւնը՝ որ կը գովէր իր սէրը ու կրնար ուղղել իր խը-

րատներովը, աստուածային Նախախնա-  
մուլթեան կողմանէ եկած օգնութիւն կը  
ճանչնար, որ հիմա իրեն նեցուկ մը ըլլա-  
լով ինքը ամէն կողմանէ կը բռնադա-  
տուէր որ միշտ քովը կենայ, ներկայն  
չհոգալով ու ապագայէն չվախնալով:

Տըլադուր տիկինը տեսնելով որ իր մը-  
տերմուլթիւնը միտքը դրածին բոլորովին  
հակառակ տպաւորութիւնն ըրաւ, ըսաւ  
անոր. « Դուստր իմ, ես չեմ ուզեր ըզ-  
քեզ ստիպել. լաւ մտածէ, բայց ծածկէ  
Պօղէն քու սէրդ. վասն զի երբ աղջկան մը  
սիրտը յափշտակած է, իր սիրականն ալ  
ուրիշ բան չուզեր իրմէ »:

Իրիկուան դէմ Վիրգինեայ հետ մի-  
նակ եղած ատենը՝ մեծահասակ մարդ մը  
ներս մտաւ, որ կապոյտ զգեստ մը հա-  
գուած էր: Ասիկայ եկեղեցական մըն էր,  
կղզւոյն քարոզիչը, ու Տըլադուր տիկնոջ  
և Վիրգինեայ խոստովանահայրը, որ քա-  
ղաքապետին կողմանէ կու գար. « Որ-  
դեակք իմ, ըսաւ մտնելուն պէս, փառք  
Աստուծոյ, ահաւասիկ հարստացաք դուք:

Այսուհետև ձեր բարեսրտութեանը հե-  
տևելով կրնաք բարերարութիւն ընել  
աղքատներուն: Գիտեմ ինչ որ Պ. Տը-  
լապուրտոնէ ըսած է ձեզի, ու նաև ձեր  
տուած պատասխանը. բարի տիկին, քու  
տկարութիւնդ կը հարկադրէ զքեզ որ  
հոս մնաս. բայց դու, մանկահասակ օ-  
րիորդ, ամենևին արգելք մը չունիս: Պէտք  
է հնազանդիլ Աստուծոյ ու մեր ծեր ծնո-  
ղացը, թէ և իրաւունք ալ չունենան. ի-  
րաւ ասիկայ զոհ մըն է, բայց ինչ պիտի  
ընես, Աստուծոյ հրամանը այս է. ինքը  
մեզի համար զոհ եղաւ, պէտք է որ իրեն  
պէս մենք ալ զմեզ զոհենք մեր ազգա-  
տոհմին օգտին համար: Քու Գաղղիա եր-  
թալդ երջանիկ վերջ մը պիտի ունենայ.  
չէս ուզեր հոն երթալ, սիրելի աղջիկս »:

Վերդինի աչքերը վար առած՝ դողա-  
լով և արտասուօք ըսաւ. « Թէ որ Աս-  
տուծոյ հրամանն այս է, ամենևին չեմ  
ընդդիմանար. օրհնեալ ըլլայ իր կամքը »:

Քահանայն ելաւ դնաց քաղաքապետին  
աւետելու իր յանձն առած պաշտօնին

յաջողիլը: Բայց Տըլադուր տիկինը Դոմինիկոսն ինձի խրկեց, աղաչելով որ իրեն երթամ, որպէս զի խորհուրդ հարցընէ Վերգինեայ երթալուն վրայով: Ես ամենեկին չհաւանեցայ թողուլ որ երթայ երջանիկ ըլլալու համար իմ գլխաւոր սկզբունքս այս է՝ որ պէտք է բնութեան օգուտները բաղդին օգուտներէն աւելի ընտրել, և պէտք չէ որ երթանք մեր երկրէն դուրս փնտրուեց այն բանը՝ որ մեր տեղը կրնանք գտնել: այս սկզբունքս ես ամէն բանի մէջ ՚ի գործ կը դնեմ: Բայց ինչ կրնային ընել իմ խոհական խրատներս մեծ հարստութեան մը խաբէութիւններուն դէմ, ու բնական պատճառներս ընդդէմ աշխարհիս նախապաշարմունքներուն, ու այնպիսի իշխանութեան մը՝ որ Տըլադուր տիկինը սրբազան կըսէ պէր: Ուստի այս տիկինը քաղաքավարութեան համար միայն ինձի խորհուրդ հարցուց, և իր խոստովանահօրը որոշմունքէն ետև ալ չտարակուսեցաւ: Մարդաբիտա ալ, որ թէպէտ իր տղուն համար

մեծ օգուտներ կը յուսար Աիրգինեայ  
հարըստնալէն, այսու ամենայնիւ սաս-  
տիկ դէմ կեցեր էր. երթալուն, ալ անկէ  
ետքը դէմ չգրաւ: Իսկ Պօղ, որ չէր գի-  
տեր բանին ինչ ըլլալը, զարմանալով Տը-  
լադուր տիկնոջ ու անոր աղջկանը դադ-  
տուկ խօսակցուածիւններուն վրայ, խոր  
տրտմութեան մը մէջ ինկաւ: « Վ'երեւայ  
թէ, ըսաւ, ինծմէ ծածուկ մէջերնին բան  
մը կը մտածեն ինծի դէմ »:

Այս միջոցիս բովանդակ կողմոյն մէջ  
ձայն ելլելով թէ աս ժայռուտ տեղերը  
հարստութիւնն այց ելեր է, մէկէն ամէն  
տեսակ վաճառականներ սկսան դէսլ 'ի  
հոս վաղել սփռեցին այս աղքատ խրճը-  
թաց մէջ հնդկաստանի խիստ փառա-  
ւոր ու ծանր դիպակներ, Վուտլուրի աղ-  
նիւ կերպասներ, Բալիագադի ու Մաղիւ-  
լիբագանի թաշկինակներ, Տաքայի պարզ,  
գծաւոր, բանուած, լուսոյ պէս թափան-  
ցիկ բեհեզներ, Սուրադի գեղեցկափայլ  
ճերմակ կտաւներ, ծաղկենկար սակաւա-  
գիւտ այլ և այլ գունով պաստառներ՝ են-

Թակայն կիտանիշ կանաչ ոստերով: Դրին առջևնին Չինու փառաւոր մետաքսեայ դիպակներ, ծանրագին մետաքսեղէններ դիծ գիծ նկարած, դամասկեան ճերմակ ու փայլուն կերպաններ՝ որը կանաչագոյն, որը աչք առնող կարմիր, որը վարդագոյն ներկած. չուխայի պէս փափուկ բեռնէր, սպիտակ և դեղնագոյն նանփնէր, ու ինչուան Մատակասգարի տիաճանելիներ:

Տըլադուր տիկինը ուզեց որ աղջիկը ասոնց մէջէն հաւնածը ծախու առնէ. ինքը միայն գիներուն ու ապրանքներուն տեսակին ազնուութեանն ուշ դրաւ՝ վախնալով որ վաճառականները չխաբեն զանիկայ: Վիրգինի ընտրեց այն բաներն՝ որոնք որ իր մօրը, Մարգարիտայի և աւոր տղուն ախորժելի կ'երևային: «Մսիկայ՝ խիստ լաւ է, կ'ըսէր, կահկարասեայ համար. անիկայ՝ Մարիամին ու Դոմինիկոսին գործածութեանը համար»: Վերջապէս պարկին մէջի բոլոր ստակը հատաւ, և դեռ ինքը իր պիտոյքը չէր հո-



գացած : Ուստի հարկ եղաւ որ ուրիշները  
իրենց առած ընծաներէն անոր բաժին  
հանեն :

Պօղի սիրտը ցաւով ճմլուեցաւ տեսնե-  
լով այս առատ պարգևներն որ իրեն կ'ի-  
մացընէին Վ իրգինեայ երթալը : Քանի մը  
օրէն ետև ինծի եկաւ , ու տրտմութեամբ  
մը ըսաւ . « Քոյրս ահա կ'երթայ . արդէն  
իր ճամբու պատրաստութիւնները կ'ը-  
նէ . կ'աղաչեմ , եւ մեզի եկուր , և իմ ու  
անոր մօրը միաբը համոզէ որ չերթայ » :  
Պօղի խնդիրքը կատարեցի , թէպէտ ստոյգ  
գիտէի որ տալու յորդորներս անօգուտ  
պիտի ըլլային :

Թէ որ Վ իրգինի Պենկալայի կապոյտ  
կտաւ հագած ու գլուխը կարմիր թաշկի-  
նակով մը պատած ատենն ինծի գեղեցիկ  
կ'երևար , կարգէ դուրս աղուոր տեսնուե-  
ցաւ ինծի՝ երբոր զանիկայ այս երկրիս մե-  
ծամեծներու տիկիններուն պէս զարգա-  
րուած տեսայ . ճերմակ բեհեզով ու վար-  
դագոյն մետաքսով հիւսուած զգեստ մը  
հագեր էր . իր բարակ ու բարձր հասակը

բոլորովին գուրս կը ցատքէր իր բաճկոնակին տակէն, ու ոսկեթել մազերը կրկին հիւսքով հիւսուած՝ սքանչելապէս կը զարգարէին իր կուսական գլուխը: Աղուոր կապուտակ աչուրները անոյշ տրրամութեամբ մը լցուած էին. և սիրտն ալ խռոված ըլլալով այնպիսի կիրքէ մը, որուն հետ կը պատերազմէր, կենդանի գոյն մը կու տար դէմքին, ու ձայնին՝ սրտաշարժեղանակ մը: Իր փառաւոր զարդերն՝ որ կարծես թէ ահամայ հագեր էր, տրրամութիւնն աւելի զգալի կ'ընէին. ոչ ոք կրնար զանիկայ տեսնել առանց խռովելու: Ասով Պօղի տրամութիւնն ալ աւելցաւ:

Մարգարիտա վշտանալով իր զակին վիճակին վրայ, առանձինն ըսաւ անոր. « Որդեակ իմ, ինչո՞ւ դու զքեզ սուտ յոյսերով կը սնուցանես, որոնք աւելի դառն կ'ընեն զրկումը: Ա՛լ ատենն եկաւ որ պատմեմ քեզի իմ և քու կենացդ գաղտնիքը. Տըլագուր օրիորդը մօր կողմանէ հարուստ ու մեծատոհմ է. իսկ դու՝ աղ-

քատ գեղացի կնոջ մը զաւակ էս, և որ  
ալ աւելի գէշն է, անհարազատ զաւակ  
էս » :

Հատ զարմացաւ Պօղ այս անհարազատ  
բառին վրայ, զոր ոչ երբէք ըսած էր. հար-  
ցուց մօրն այս բառիս նշանակուածիւր. ան  
ալ սպասասխանեց. « Դու օրինաւոր հայր  
ունեցած չես. օրիորդուածեանս ատեն սե-  
րը սպասձառ եղաւ ինծի սխալելու, ուս-  
կից դու ծնար. իմ սխալանքս քեզ զուրկ  
ձգեց հայրական ազգականներէ, և զըզ-  
ջումս՝ մայրենի ազգականներէ: Ո՛վ դըժ-  
բաղդ զաւակ, դու այս աշխարհիս մէջ  
ինծմէ զատ ուրիշ ազգական չունիս » :  
Աս ըսելով սկսաւ արցունք թափել: Պօղ  
պլոււելով ըսաւ անոր. « Մայր իմ, ու-  
րովհետեւ քեզմէ զատ ազգական չունիս՝  
այս աշխարհիս մէջ, զքեզ ալ աւելի պի-  
տի սիրեմ: Բայց այդ ի՞նչ գաղտնիք էր որ  
ինծի յայտնեցիր. հիմա կ'իմանամ թէ  
ինչո՞ւ համար երկու ամսէ ՚ի վեր Տըլա-  
դուր օրիորդը ինծմէ կը փախչի, ու հիմա  
միտքը դրեր է որ ելլէ երթայ: Ա՛հ, ան-

շուշտ ինքը զիս անարժան կը սեպէ իրեն » :

Այս միջոցին ընթրիքի ատենը եկած ըլլալով, սեղան նստան. բայց ամէն մէկը այլ և այլ կիրքերով խոռոված ըլլալով, քիչ կերան ու ամենևին չխօսեցան : Վիրգինի ելլողներէն առջինն եղաւ, ու եկաւ նստաւ աս տեղս՝ ուր հիմա մենք նստեր ենք. ետևէն Պօլ ալ ելաւ ու եկաւ անոր քովը նստաւ : Երկուքն ալ քիչ մը ատեն լուռ կեցան :

Խիստ գեղեցիկ գիշեր մըն էր այն գիշերը, որ հասարակօրէն շատ կը պատահի արևադարձներուն տակը, և որուն ազուորութիւնը ճարտար պատկերահանն ալ չկրնար նկարել : Լուսինը երկնից մէջ տեղը կ'երևար, չորս գին ամպէ վարագուրով մը պատած, զոր իր ճառագայթները աստիճանաբար կը ցրուէին. իր լոյսը կամաց կամաց կը ծաւալէր կղզւոյն լեռներուն, ու անոնց բարձր գագաթանցը վրայ՝ որոնք արծաթափայլ կանաչութեամբ կը փայլէին : Հովերը լուռ էին, անառնե-

րուն, ձորերուն մէջ և ժայռերու գլու-  
խը՝ թռչնոց բարակ ձայներ ու անոյշ մըր-  
մունջներ կը լսուէին, որոնք բոյներնուն  
մէջ իրար կը գգուէին, ուրախանալով գի-  
շերուան պայծառութեանն ու օդուն հան-  
դարտութեանը վրայ: Բոլոր արարածք,  
ինչուան նաև ճճիները, կը բզզային դա-  
լարեաց մէջէն: Աստղերը կը փայլէին եր-  
կինքը, ու իրենց դողգոջուն պատկերը կը  
ցորանար ջրին մէջ: Ա իրգինի զարմացած  
կը պարտոյրներ աչուրներն ընդարձակ ու  
մութ հորիզոնին վրայ, որ կղզւոյն ա-  
փունքէն ձկնորսներուն վառած կարմրա-  
գոյն կրակովը կը տեսնուէր: Նաւահան-  
գըստին բերանը լցա մը ու ստուեր մը  
տեսաւ. ասիկայ էր հոն տեղի լապ-  
տերն, և ան նաւուն մթնագոյն կողը՝ ու-  
րով ինքը Եւրոպա պիտի երթար, և որ  
ճամբայ ելլելու պատրաստ ըլլալով էր-  
կաթ նետած կը սպասէր խաղաղ օդուն  
վերջանալուն: Աս տեսածին պէս՝ այլայ-  
լեցաւ, ու գլուխն անդին դարձուց, որ  
պէս զի Պօղ չտեսնէ իր լալը:

Տըլադուր տիկինը, Մարգարիտան ու  
Էս' իրենց մէքիջ մը հեռու նստած էինք  
պանեաններուն տակը, ու գիշերային լը-  
ռութեան ատեն որոշ լսեցինք իրենց խօ-  
սակցութիւնն, որ ինչուան հիմա դեռ  
մտքէս չեղեր: Պօղ կ'ըսէր անոր. « Ո՛վ  
օրիորդ, լսեցի թէ իրեք օրէն պիտի եր-  
թաս. չէս վախեր ինքզինքդ ծովուն վը-  
տանդներուն մէջ ձգելէն... ծովուն՝ ուս-  
կից այնչափ կը սարսափիս: — Պէտք է  
որ, ըսաւ Ախրզինի, հնազանդիմ ծնո-  
ղացս ու պարտքս կատարեմ: — Մեզ կը  
թողուս, կրկնեց Պօղ, հեռաւոր ազգա-  
կանի մը քով երթալու համար, զոր ա-  
մենեկն տեսած չես: — Ափսո՛ս, ըսաւ  
Ախրզինի, կ'ուզէի բոլոր կեանքս հոս ան-  
ցընել, բայց մայրս չհաւանեցաւ. խոստո-  
վանահայրս ըսաւ թէ Աստուծոյ կամբը  
այս է որ երթամ, և թէ կեանքը մէկ  
փորձ մըն է... բայց ո՛հ, խիստ ծանր  
փորձ: — Զարմանք, կրկնեց Պօղ, որ  
այսչափ պատճառներ զքեզ համոզեր են  
երթալու, ու ամենեկն պատճառ մը չէ



գտնուեր որ արգիլէ : Ա՛հ, գիտեմ. դեռ  
ուրիշ պատճառներ կան՝ որ ինծի չես  
զուրցեր : Հարստութիւնն զմարդ իրեն  
կը քաշէ : Շուտով օտար աշխարհի մը  
մէջ մէկը կը գտնես՝ որուն եղբայր անու-  
նը տաս, զոր ալ ինծի չես տար : Պիտի  
ընտրես ան եղբայրը այնպիսի անձանց  
մէջէն, որոնք արժանի են քեզի իրենց ազ-  
նուականութեամբն ու հարստութեամ-  
բը . իսկ ես ասոնք չունիմ որ քեզի ըն-  
ծայեմ : Բայց ո՛ւր կրնաս աւելի երջանիկ  
ըլլալ . ո՞ր երկիրը կրնաս երթալ, որ ծնըն-  
դեանդ երկրէն աւելի սիրելի ըլլայ քեզի .  
ո՛ւր կրնաս գտնել այնպիսի ընկերութիւն  
մը, որ քեզի աւելի ախորժելի ըլլայ քան  
զայն՝ որ զքեզ կը սիրէ : Ի՛նչպէս պիտի  
կարենաս ապրիլ առանց մօրդ գգուանա-  
ցը, որուն այնչափ վարժած ես : Ո՞վ գի-  
տէ թէ ի՛նչ կ'ըլլայ նաև խեղճ մայրդ, որ  
պառուընալ սկսեր է, երբօր զքեզ ալ  
քովը չտեսնէ թէ՛ սեղանը, թէ՛ տունը և  
թէ՛ ժուռ գալու ժամանակն՝ որ ատեն մը  
քեզի կը կռթռնէր : Ո՞վ գիտէ թէ ի՛նչ

կ'ըլլայ նաև իմ մայրս, որ քու մօրդ չափ  
գուլթ ունի վրադ : Ի՞նչ պիտի ըսեմ ես  
թէ՛ մէկին և թէ՛ մէկալին, երբոր տեսնեմ  
զանոնք որ քու հեռաւորուլթեանդ հա-  
մար կու լան : Ո՛վ անգուլթ, ամենեին  
չեմ խօսիր իմ վրայօքս . բայց նաև ես  
ի՞նչ պիտի ըլլամ, երբոր առաւօտը ալ  
զքեզ մեզի հետ չտեսնեմ, և գիշերը չկա-  
րենանք ամէնքս մէկտեղ ժողվուլիլ : Ի՞նչ  
պիտի ըլլամ, երբոր մեր ծննդեանն ատեն  
անկուած երկու արմաւենիներուն նայիմ,  
որ այնչափ ժամանակ վկայ եղան մեր ի-  
րարու ունեցած բարեկամուլթեանը : Ա՛հ,  
որովհետև մէկ նոր բաղդ մը քու սիրտդ  
աւելի կը շարժէ, որովհետև քու ծննդեան  
երկրէդ աւելի ուրիշ երկիրներ, և իմ աշ-  
խատուլթիւններէս աւելի ուրիշ հարստու-  
լթիւններ կը փնտրուես, ուրեմն թո՛ղ որ  
ես ալ հետդ գամ քու ճամբայ ելլելու  
նաւովդ : Քու սիրտդ կը հանդարտեցը-  
նեմ փոթորիկներու ատեն, որոնք այն-  
չափ վախ կու տան քեզի ցամաքի վրայ .  
զլուխդ գիրկս կը հանդէջընեմ, սիրտդ

կը տաքցընեմ՝ իմ սրտիս վրայ դնելով  
զանկիայ և ի Գաղղիա, ուր կ'երթաս հա-  
րըստութիւն և մեծութիւն փնտրուելու  
համար, հոն ես քեզի գերւոյ մը պէս կը  
ծառայեմ, ուրախանալով քու երջան-  
կութեանդ վրայ այն պալատներուն մէջ,  
ուր պիտի ծառայեն ու մեծարեն զքեզ,  
և կրնամ այնչափ հարուստ ու ազնուա-  
կան սեսպուիլ՝ որ կարող ըլլամ մեծա-  
գոյն զոհն ընելու քեզի, ստուըներուդ  
առջին մեանելով» :

Հեծկըլտալէն ձայնը մարեցաւ . ու  
նոյն միջոցին լսեցինք որ Ախրգինի հա-  
ռաչելով կ'ըսէր անոր այս խօսքերս . «Քե-  
զի համար է որ կ'երթամ . . . քեզի հա-  
մար, որ ամէն օր աշխատութենէ կ'ընկ-  
ճիս՝ երկու տկար ընտանիքներ կերակրե-  
լու համար : Թէ որ հարըստանալու առի-  
թը չեմ փախցընէր, մեղի ըրած բարեացդ  
հաղարապատիկ հատուցանելու համար  
է : Վայ այնպիսի հարստութիւն մը՝ որ  
քու բարեկամութեանդ հաւասարի : Ի՞նչ  
խօսք է այդ որ ըսիր ծննդեանդ վրայով :

ան, թէ որ աս ժամս կարելի ըլլար ինծի  
եղբայր մը ունենալ, քեզմէ զատ ուրիշը  
կ'ընտրէի: Ա՛լ Պօղ, ո՛վ Պօղ, դու ինծի  
եղբորմէ աւելի սիրելի ես: Ա՛րջափ ծանր  
էր ինծի՝ զքեզ քովէս մերժելը: Կ՛ուզէի  
որ օգնես ինծի՝ զիս բուն իսկ ինծմէ զա-  
տելու համար, ինչուան որ առենը հասնե-  
լով Աստուած օրհնէ մեր սլասկը: Հիմա  
կը կենամ, կ'երթամ, կ'ապրիմ, կը մեռ-  
նիմ, ինչպէս որ կ'ուզես՝ անանկ կ'ընեմ:  
Ա՛լ դուստր առանց առաքինութեան .  
կըցայ այնչափ ժամանակ քու գգուանք-  
ներուդ յաղթել, բայց հիմա ալ չեմ կըր-  
նար վշտացդ դէմ դնել »:

Այս խօսքերուն՝ Պօղ պլլուեցաւ ա-  
նոր, և ուժով մը գրկելով թևերուն մէջ՝  
բարձրաձայն կանչեց. « Ես ալ հետը կ'եր-  
թամ, ոչ ոք կրնայ զիս իրմէ բաժնել »:

Ամենքս ալ վաղեցինք հոն, ու Տըլա-  
դուր ատկինն ըսաւ անոր. « Որդեակ իմ,  
թէ որ զմեզ թողուս՝ մենք ի՞նչ կ'ըլլանք »:  
Իսկ անիկայ դողդըղալով կրկնեց այս խօս-  
քերը. « Որդեակ իմ . . . որդեակ իմ . . .

Դո՞ւ իմ մայրս, ըսաւ յետոյ, դո՞ւ որ կը  
բաժնես քոյրն եղբօրմէն : Երկուքս ալ  
քու կաթիգ ծծեր ենք . երկուքս ալ քու  
գիրկդ մեծնալով՝ զքեզ սիրել սորվե-  
ցանք . երկուքս ալ հազար անգամ իրա-  
րու զուրցած ենք նոյն բանը, ու հիմա  
դուն անիկայ ինծմէ կը հեռացընես : Եւ-  
րոպա՛ ան բարբարոսաց երկիրը կը խըր-  
կես, որ քեզի ապաստանելու աեղ մը  
չտուէին, ու այնպիսի անգուժ ազգական-  
ներու քով՝ որ նաև զքեզ երեսէ թողու-  
ցին : Սակայն ըսես պիտի . դու ամենեկին  
իշխանութիւն չունիս անոր վըայ, ան քու  
քոյրդ չէ : Բայց իմ ամէն բանս է, իմ  
հարստութիւնս, իմ գերգաստանս, իմ  
ազնուականութիւնս, վերջապէս՝ բոլոր  
իմ ստացուածքս . անկէ զատ ուրիշ ստա-  
ցուածք չունիմ : Երկուքս ալ մէկ յար-  
կի տակ ծնանք, մի և նոյն օրօրոցի մէջ  
պառկեցանք, ուստի գերեզմաննիս ալ  
մէկ պիտի ըլլայ . թէ որ երթայ, պէտք է  
որ ես ալ հետը երթամ : Թէ որ քաղա-  
քապետը չթողուր որ երթամ, կրնայ ար-

գիլէլ որ ծովը շնետուիմ. լողալով ետեւէն  
կ'երթամ. ծովը չկրնար ցամաքէն աւելի  
մահաբեր ըլլալ ինծի: Հոս անկարելի ըլ-  
լալով անոր հետ ապրիլ, դոնէ ձեզմէ հե-  
ռու անոր աչքին առջև մեռնիմ: Բարբարոս  
մայր, անգո՛ւթ կին, ո՛ւր էր թէ ովկիա-  
նոսն՝ որուն կը հաւտաս զանիկայ, ոչ եր-  
բէք դարձնէր քեզի. ո՛ւր էր որ իր ալիք-  
ները բերէին ձեզի իմ մարմինս անոր  
մարմնոյն հետ մէկտեղ, ու գլորարկելով  
այս ծովեզերքին խիճերուն վրայ, տային  
ձեզի յաւիտենական կսկիծ մը երկու  
զաւկրներնուդ կորստեամբը »:

Այս խօսքերս լսածիս պէս՝ գրկացս մէջ  
առի զինքը, որովհետեւ յուսահատութիւնը  
խելքը գլխէն տարեր էր: Աչուրներէն  
կրակ կը ցատքէր. բռնկած երեսէն կա-  
թիլ կաթիլ քրտինք կը վաղէր, ծնկուը-  
ները կը դողային, ու տաք կուրծքին վրայ  
կը զգայի անոր սրտին արագ արագ զար-  
նելը:

Վերգինի սոսկալով ըսաւ անոր. « Ո՛վ  
բարեկամ իմ, վկայ ըլլան մեր մանկու-



Թեան զբօսանքները, քու և իմ վիշտերս, ու նաև ան ամէն բանն որ իրարու պիտի կապէ մեզի պէս երկու դժբաղդները, որ եթէ հոս կենալու ըլլամ՝ միայն քեզի համար պիտի ապրիմ, իսկ թէ որ երթալու ըլլամ՝ դարձեալ օր մը պիտի դառնամ դամ քուկդ ըլլալու համար: Այլայ եղիք դուք ալ, որ հոգ տարիք մանկութեանս ու զիս մեծցուցիք, որ կենացս վրայ կարգադրութիւն ընելու տէր էք, և հիմա ալ թափած արցունքներս կը տեսնէք: Վ'երգնում այս երկնից վրայ՝ որ ըսածս կը լսէ, աս ծովուն վրայ՝ որ պիտի անցնիմ, և աս օդուս վրայ՝ որ կը շնչեմ, և զոր ոչ երբէք ստախօսութեամբ մը ապականեր եմ»:

Ինչպէս որ արևը Ապենեան լեռանց գլխէն հալեցընելով վար կը բերէ ժայռ ձևացած սառնամանիքը, այսպէս իջաւ աս պատանուոյս սաստիկ բարկութիւնը իր սիրելւոյն ձայնէն: Գոռողացեալ գլուխը խոնարհեցաւ, ու արցունքները հեղեղի պէս կը թափէին աչուրներէն: Մայ-

ըր իր արցունքն անոր արտասուացը հետ  
խառնելով առանց խօսելու անոր պլլուած  
կեցեր էր : Տըլադուր տիկինը բոլորովին  
այլայլած ըսաւ ինծի . « Ա՛լ չեմ կրնար  
գիմանալ, սիրտս կտոր կտոր կ'ըլլայ :  
Չեմ ուզեր որ այս թշուառ ճամբորդու  
թիւնն 'ի գործ գրուի : Բարեկամ իմ,  
ջանա հիմա տղաս հետդ տանելու . որով  
հետև ութ օրէն 'ի վեր է որ քուն չենք  
եղած » :

Ես ալ Պօլի ըսի . « Բարեկամ, քոյրդ  
հոս պիտի մնայ . վաղը քաղաքապետին  
հետ կը խօսինք այս բանիս վրայ . թող որ  
ընտանիքդ հանգչին, ու եկուր աս գիշեր  
իմ տնակս երթանք : Ատենը ուշ է, կէս  
գիշեր ենք . հարաւին խաչը շիտակ հորի-  
զոնին վրայ կը նայի » : Եկաւ հետս ա-  
ռանց խօսելու . ու գիշերը այլայլութեամբ  
անցընելէն վերջը, առաւօտը կանուխ ե-  
լաւ տուն դարձաւ :

Բայց ա՛լ ի՞նչ պէտք է առաջ տանիլ  
աս պատմութիւնս : Մարդկային կենաց  
մէջ լսելու արժանի ախորժելի կտորը մէկ

կողմն է միայն . նման մեր երկրագունտին՝ որուն հետ կը դառնանք, մեր երագ հոլովմունքը օրական շրջան մըն է, ու աս օրուան մէկ մասը չկրնար լոյս տեսնել թէ որ մէկալ մասը մթուածեան մէջ չըմնայ:

« Հայր իմ, ըսի իրեն, կ'աղաչեմ լմընցուր աս պատմութիւնը, որ այսպիսի սրտաշարժ կերպով սկսար: Երջանկութեան պատկերները մեզի ակորժելի են, բայց թշուառութեան պատկերները զմեզ կը խրատեն . կ'աղաչեմ զուրցէ, ինչ եղաւ դժբաղդ Պօղը »:

Առջի բանն որ տեսաւ Պօղ տուն դառնալու ատեն՝ Մարիամ աղախինն եղաւ, որ ժայռի մը վրայ ելած դէպ ՚ի խորս ծովուն կը նայէր: Պօղ հեռուանց Մարիամը տեսածին պէս՝ մէկէն կանչեց անոր. « Ո՞ր է Վիրգինի »: Անիկայ գլուխը դարձուց դէպ ՚ի նորահասակ ախրոջը, ու սկսաւ լալ: Պօղ ինքիրմէն դուրս ելած՝ ետ դար-

ձաւ ու նաւահանգիստը վազեց : Հոն ի մացաւ թէ Վիրգինի առաւօտանց կանուխ նաւ մտեր ու անմիջապէս ճամբայ ելէր էր, և թէ նաւը ալ աչքի չէր երևար : Գարձաւ նորէն իրենց բնակարանը, և անցաւ գնաց առանց մէկու մը հետ խօսելու :

Թէպէտ աս ժայռուտ լեռները մեր ետևի կողմէն գրեթէ շիտակ կտրուած կ'երևան, սակայն կանաչագեղ տափարակ բլուրներ աստիճաններու պէս անոնց բարձրութիւնը կտրելով, քանի մը դժուար ճամբաներով ինչուան ան ժայռերէ ձևացած անմատչելի ու կոր կոնը կը հանեն, որ Բոյթ կ'ըսուի : Աս ժայռին ստորոտը դաշտ մը կայ մեծամեծ ծառերով լեցուն, բայց դիրքը այնպէս բարձր ու սեպացեալ է՝ որ մեծ անտառի մը կը նմանի օդուն մէջ, չորս դին սոսկալի անդունդներով պատած : Այն ամպերէն՝ զորոնք Բութին գաղաթը անդադար իրեն կը քաշէ, հոն տեղը շատ վտակներ կը ձևան. և այս վտակները լերան մէկալ կող-

մը եղած ձորին մէջ այնչափ խորունկ կը  
Թափին, որ այն բարձր տեղէն ամենևին  
չսոււիր ջրին խնկուն ձայնը : Ան տեղէն  
կը տեսնուի կղզւոյն մեծ մասը իր սրա-  
ծայր լեւներովը, մասնաւորապէս Բիւ-  
դէր-Պուտհ ու Երեք Սափնք ըսուած լեւ-  
ները իրենց անտառալից ձորերովը, ետքը  
ընդարձակ ծովը, և Պուրպոնի կղզին, որ  
քառասուն փարսախ հեռու կ'իյնայ դէս  
'ի արեւմուտք :

Ահա աս բարձրութենէս տեսաւ Պող  
այն նաւն՝ որուն մէջն էր Ալիրգինի, որ  
տասը փարսախ հեռաւորութեամբ ու  
կիսմոսին մէջ սև կէտի մը սէս կ'երևար :  
Քանի մը ժամու չափ կեցաւ հոն դիտե-  
լով զայն . և աչքէ աներևութանալէն ետքն  
ալ դեռ ինքը կը կարծէր թէ կը տեսնէ .  
իսկ երբոր բոլորովին անհետ եղաւ հորի-  
զոնին մշուշին մէջ, ան ատեն նստաւ այդ  
ամայի ու հովերէ ծեծ ունած տեղը, ուր ար-  
մաւենիներու և թաթամաքի ծառերու  
կատարները անդադար կը տատանին : Ա-  
նոնց խուլ ու մռնչող շրշիւնը՝ երգէ հոն .

ներու հեռաւոր ձայնին կը նմանի, ու խորունկ մաղձոտութիւն մը կը բերէ մարդու վրայ:

Հոն գտայ զՊօղ գլուխը ժայռին կը թընցուցած ու աչուրները գետին տընկած: Արևուն ծագելէն սկսեալ զինքը փնտրուելու հետ էի շատ աշխատեցայ ինչուան որ համոզեցի զինքն որ իջնէ ու գայ իր ընտանիքը տեսնէ: Վերջապէս տարի իր բնակարանը: Երբոր զՏըլադուր տիկինը տեսաւ, դառնապէս դանգատեցաւ անոր՝ զինքը խաբելուն համար: Տըլադուր տիկինն ըսաւ մեզի՝ թէ առաւօտեան ժամը իրեքին յաջող հով ելլելով, նաև ալ առագաստ բանալու վրայ ըլլալով՝ քաղաքապետն իր պաշտօնակալաց մէկ մասը ու քահանայն հետը առած եկեր էր՝ դահաւորակով մը Ա իրգինին տանելու. և առանց մտիկ ընելու իր տուած պատճառներուն, նաև իր ու Մարգարիտայի թափած արցունքներուն, ամէնքը մէկ բերան կանչելով թէ « Ձեր ամենուն աղէկութեանն համար է », կիսամեռ տարեր



էին աղջիկը : — « Գոնէ թէ որ հրա-  
ժեշտի ողջոյնը տուած ըլլայի իրեն ,  
սիրտս հիմա հանգիստ կ'ըլլար , պա-  
տասխանեց Պօլ : Կ'ըսէի իրեն . Ով Վիր-  
գինի , քանի որ իրարու հետ ապրեր ենք՝  
թէ որ բերնէս կսկծեցուցիչ խօսք մը ե-  
լեր է , դեռ բողորովն չբաժնուած ինձ-  
մէ՝ ըսէ ինձի որ կը ներես : Կ'ըսէի իրեն .  
Որովհետև զքեզ մէյ մ'ալ պիտի չտես-  
նեմ , բարով երթաս , սիրեցեալդ իմ Վիր-  
գինի , երթաս բարով . գոհ սրտով ու եր-  
ջանկու թեամբ ապրէ ինձմէ հեռու » : Եւ  
տեսնելով որ իր մայրն ու Տըլադուր տի-  
կինը կու լային , « Փնտրուեցէք հիմա , ը-  
սաւ անոնց , ինձմէ զատ մէկը որ սրբէ  
ձեր արցունքները » : Ետքը հեռացաւ քո-  
վերնէն ողբալով , ու սկսաւ ասգիս անդին  
թափառիլ իրենց բնակութեանը մէջ :  
Կ'անցնէր այն ամէն տեղերէն՝ որ աւելի  
սիրելի էին Վիրգինեայ : Կ'ըսէր անոր այ-  
ծերուն և անոնց պզտի ուլերուն , որ մայ-  
րէն է տակէն կու գային . « Ի՞նչ կը խըն-  
դրէք ինձմէ . այսուհետև ա՛լ պիտի չտես-

նէք հետս զանիկայ՝ որ զձեզ ամուլը կը կերակրէր » : Գնաց Հանգիստ Վիրգի- նէայ տեղը, ու տեսնելով Թուշուհներն որ կը Թուշուհէին չորս զին, կանչեց . « Խեղճ Թուշուհներ, ա՛լ ընդ առաջ պի- տի չերթաք այսուհետև անոր՝ որ ձեր բարեգուժ գայեակն էր » : Հաւատարիմն որ տեսաւ, որ ասդիս անդին կը հոտուը- տար ու փնտրուելով առջևէն կ'երթար, հառաչեց ու ըսաւ անոր . « Ո՛հ, ոչ եր- բէք կարենաս պիտի գտնել զանիկայ » : Վերջապէս՝ գնաց նստաւ այն Ժայռին վը- րայ՝ ուր նախընթաց օրը խօսեր էր անոր հետը . ու երբ նշմարեց ծովն՝ որուն վը- րայէն Թուեր աներևութացեր էր զանի- կայ տանող նաւը, առատ արցունք թա- փեց :

Սակայն մենք միշտ ետևէն կը պտը- տէինք, վախնալով որ չըլլայ թէ մտքին այ- լայլութենէն աղէտալի հետևանք մը առաջ դայ: Մայրն ու Տըլադուր տիկինը խիստ ա- նոյշ խօսքերով կ'աղաչէին իրեն՝ որ իր յու- սահատութեամբը ցաւերնին չաւելցնէ :

Վերջապէս՝ Տըլադուր տիկինը կրցաւ հան-  
գարաեցընել զանիկայ այնպիսի անուն-  
ներ տալով, որոնք կրնային անոր յոյսերն  
արթնցընել. իր զաւակը կը կոչէր զանի-  
կայ, իր սիրական որդին, իր փեսան, և իր  
աղջիկը՝ անոր հարս: Ստիպեց զանիկայ  
որ տուն մանայ ու քիչ մը բան ուտէ:  
Մեզի հետ սեղան նստաւ այն տեղւոյն  
քով ուր կը նստէր իր մանկութեան ըն-  
կերը. ու իբր թէ Վիրգինին քովն ըլլար՝  
հետը կը խօսէր, ու անոր սիրած կերա-  
կուրներէն կը հրամցընէր. բայց իր սխալ  
մունքն իմացածին պէս՝ մէկէն լալ կը  
սկսէր:

Հետեւեալ օրերը ժողվեց ան ամէն բանն  
որ Վիրգինի կը գործածէր, մինչև ետքի  
շինած ծաղկի փունջերը, և գոգոյէ գա-  
լաթն՝ որով սովորաբար ջուր կը խմէր.  
ու իբր թէ իր բարեկամուհւոյն այս յի-  
շատակներն աշխարհիս ամենէն պատուա-  
կան բաներն ըլլային, կը պաղնէր զանոնք  
ու ծոցը կը դնէր: Յամպարն այնչափ ա-  
նոյշ հոտ չբուրեր, ինչպէս այն բաներն՝

որոնց սիրելի անձի մը ձեռք դպած է :  
Բայց վերջապէս տեսնելով որ իր կսկիծ-  
ները կ'աւելցընէին մօրն ու Տըլադուր  
տիկնոջ սրտին ցաւերը , և թէ տանը հար-  
կաւոր եղած բաները հոգալու համար՝  
անդադար պէտք է աշխատիլ , ուստի սկը-  
սաւ Գոմինիկոսի օգնականու թեամբը  
պարտէզը նորոգել :

Քիչ ատենէն այս պատանին՝ որ դրէօ-  
լի մը պէս անտարբեր էր աշխարհիս մէջ  
ամէն օր պատահած բաներուն , աղաչեց  
որ կարգաւ դրել սորվեցընեմ իրեն , որ-  
պէս զի կարենայ Ա իրգինեայ հետ թըղ-  
թակցութիւն ընել . ետքը աշխարհագրու-  
թիւն սորվիլ ուզեց , տեղեկութիւն մը  
ունենալու համար այն երկրին վրայ՝ ուր  
որ նաւը պիտի հանէր զանիկայ , ու նաև  
պատմութիւն՝ որպէս զի հասկընայ այն  
ժողովրդոց բարքն ու սովորութիւնն , ո-  
րոնց հետ պիտի կենակցէր անիկայ : Այս-  
պէս նոյն սիրոյն ազգելովն ինքզինքը կա-  
տարելագործեր էր երկրագործութեան ,  
ու խիստ խորտուբորս երկիր մը վայե-

լուչ ձևի բերելու արուեստին մէջ: Անշուշտ մարդիկ այս լախող ու անհանգարտ կրքին վայելքներուն յուսովն է՝ որ գիտութիւններուն ու արհեստներուն շատը գտեր են. և անկէ զրկուելէն ծնած է փիլիսոփայութիւնն, որ կը սորվեցընէ սփոփիլ ամէն բանի վրայ: Այսպէս ուրեմն բնութիւնն՝ որ մարդկանց մէջ իբրև կապ գրեր է սէրը, մեր առաջին շարժողն ըրեր է զանիկայ, և մեր տեղեկութեանցն ու զքօսանաց գրգռիչը:

Պօղ շատ չախորժեցաւ աշխարհագրական ուսմունքէն, որ մեզի ամէն երկրին յատկութիւններն ստորագրելու տեղ, միայն քաղաքական բաժանմունքները կը սորվեցընէ: Պատմութիւնն, և մանաւանդ նորն, անկէց աւելի ախորժելի չեղաւ իրեն. ընդհանուր ու անընդհատ թշուառութիւններէ զատ ուրիշ բան չզարկաւ աչքին, որոնց սլատճառները չէր հասկընար. սլատերազմներ առանց սլատճառի, գաղտնի հնարքներ, վատ բնաւորութեամբ ազգեր, ու անդութ թաղաւորներ: Աւե-

լի կ'ընտրէր վիպասանութիւններ կարգաւ, որոնք մարդկանց զգացմանցն ու շահերուն վրայ աւելի խօսելով, երբեմն կը գտնէր անոնց մէջ այնպիսի վիճակներ՝ որ իրենին նման էին : Ուստի գիրք մը չկար որ այնչափ ախորժեղի ըլլար իրեն՝ ինչպէս Տէւէ՛ստը, մէջի գիւղական կենաց ու նաև մարդու սրտին բնական եղած կիրքերուն նկարագրութեանցն համար : Մօրը ու Տըլադուր տիկնոջ առջև անոր այն հատուածները կը կարդար՝ որ իրեն աւելի ազդումն կ'ընէին, և ան ատեն գորովալի յիշատակներէ սիրաբ շարժելով ձայնը կը մարէր ու աչուրներէն արցունք կը վաղէր : Կը կարծէր թէ Վիրգիլեայ վրայ կը տեսնէ Անտիովպեայ ծանրութիւնն ու իմաստութիւնը, հանդերձ Եւքարիսին թշուառութիւններովն ու սիրովը : Միւս կողմանէ ալ բոլորովին խռովեցաւ հիմակուան նոր ոճով գրուած վիպասանութիւնները կարգալով, որոնք լինէն զեղծմամբ բարուց և իմաստներու . և երբ իմացաւ՝ որ այս վիպասանութեանց



մէջ եւրոպական ժողովրդոց վրայով եղած նկարագիրները ճշմարիտ են, ան առանձին իրաւամբ վախցաւ՝ որ չըլլայ թէ Վերգինի ալ գտցած տեղը աւրուի ու զինքը մոռնայ:

Եւ իրօք տարի ու կէսէն աւելի էր՝ որ Տըւադուր տիկինը լուր մը չէր առած իր հօրաքեռն ու աղջկանը վրայով. միայն օտար մարդու մը ձեռքով իմացեր էր աղջրկանը ողջ առողջ Գաղղիա հասնիլը: Վերջապէս Հնդկաստան գացող նաւ մը կապոց մը ու նամակ մը բերաւ իրեն, զոր Վերգինի իր ձեռօքը կը գրէր: Իր սիրելի ու ներողամիտ աղջիկն սրջափ ալ զգուշաւոր կերպով գրած էր, այսու ամենայնիւ մայրը մակաբերեց թէ խիստ խեղճութեան մէջ էր: Աս նամակը այնպէս աղէկ կը նկարագրէր իր վիճակն ու բնութիւնը, որ գրեթէ բառ առ բառ միտքս պահէր եմ:

ԳՈՐՈՎԱԳՈՒԹ ՈՒ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐ ԻՄ

« Ինչուան հիմա շատ նամակներ խորհակեցի ձեզի՝ բուն իմ ձեռօքս գրած, և որովհետև ամենևին պատասխան մը չառի, վախեմ թէ ձեռուրնիդ չեն հասած: Այս թղթիս վրայ աւելի յոյս ունիմ որ կը հասնի, որովհետև ամենայն զգուշութիւն բանեցուցի՝ որ իմ որպիսութիւնս իմացընեմ ձեզի, և ձերն ալ տեղեկանամ:

» Մեր բաժանմանէն ՚ի վեր շատ արցունք թափեցի, ես որ գրեթէ ոչ երբէք լացած էի՝ բայց միայն ուրիշի վտայը վերայ: Հոս որ հասայ, հօրաքոյրս շատ զարմացաւ՝ երբոր ուզելով հասկընալ ինչ ձիրքեր ունենալս, ըսի թէ ոչ կարդալ գիտեմ և ոչ գրել: Հարցուց ինծի՝ թէ ուրեմն ինչ սորված ես քանի որ աշխարհեկեր ես. ու երբոր ես ալ պատասխանեցի՝ թէ տան մը հոգ տանիլ ու մօրս կամացը հնազանդիլ, ան ատեն ըսաւ ինծի՝ թէ աղախնոյ մը կրթութիւն առեր ես:

Անմիջապէս երկրորդ օրը զիս Բարիզու  
մօտ գտուած մեծ կուսաստանի մը մէջ  
դրաւ, ուր ամէն տեսակ վարպետներ ու  
նիւմ. ուրիշ այլ և այլ բաներէն զատ՝ կը  
սորվեցընեն ինծի պատմութիւն, աշ-  
խարհագրութիւն, քերականութիւն, չա-  
փական գիտութիւններն ու ձի հեծնել-  
բայց ես այնչափ քիչ յարմարութիւն ու  
նիւմ բոլոր այս գիտութեանցս, որ շատ օ-  
գուտ պիտի չկարենամ քաղել այս վարժա-  
պետներուն տուած դասերէն. կ'իմանամ  
որ ես խեղճ ստեղծուած մըն եմ եղեր՝  
քիչ խելքով, ինչպէս որ իրենք ալ կ'ը-  
սեն : Այսու ամենայնիւ հօրաքեռս ե-  
րախտիքը ամենեկին չեն պակսիր վըայէս :  
Տարւոյն ամէն եղանակին նոր նոր հա-  
գուստներ կու տայ ինծի. քովս երկու ա-  
ղախիններ դրած է, որոնք մեծամեծնե-  
րու տիկիներուն պէս զարգարուած են :  
Կոմսուհի պատուանունը տուաւ ինծի.  
բայց Տըլադուր մականունը հանեց վը-  
րայէս, որ որչափ քեզի՝ նոյնչափ ինծի  
սիրելի էր, այն վիշտերուն պատճառաւ՝

որ հայրս քաշեր է հետդ պսակուելու համար, ինչպէս որ կը պատմէիր ինձի: Հօրս մականուանը տեղ քու մայրենի մականունդ դրաւ, որ նաև այն սիրելի է ինձի, որովհետև օրիորդութեանդ ատենին մականունն է: Զիս այսպիսի հարուստ վիճակի մէջ տեսնելով աղաչեցի իրեն որ քիչ մը օգնութիւն խրկէ քեզի: Ինչպէս զուրցեմ տուած պատասխանը. բայց ինձի ասլըսարած ես միշտ ճշմարտութիւնն ըսել քեզի: Արդ ըսաւ՝ թէ քիչը անոր օգուտ մը չընէր, շատն ալ շփոթութիւն կ'ըլլայ իրեն այն անպաճոյճ կենացը մէջ: Նախ ուղեցի օտարի ձեռքով տալ քեզի իմ լուրերս, անկարելի ըլլալով իմ ձեռօքս գրել. բայց հոս հասած ատենս մարդ մը չունէի՝ որուն վրայ կարենայի վստահանալ. ուստի գիշեր ցորեկ կարգաւ գրել սորվելու ետեւ եղայ, և Աստուծով քիչ ժամանակուան մէջ սորվեցայ: Առջի գրած թղթերս քովս եղող տիկիներուն յանձնեցի որ խրկեն. կարծեմ անոնք հօրաքեռս տուած պիտի

ըլլան. իսկ աս անգամ՝ բարեկամուհւոյ մը յանձնեցի, որ դպրոցի մը աշակերտ է. ուստի կ'աղաչեմ որ անոր հասցէովը՝ զոր թղթիս տակը դրած եմ՝ խրկես ինծի թղթերուս պատասխանները: Հօրաքոյրս արգիլած է ինծի՝ դրսի հետ թըղթակցութիւն ընելը, վասն զի կ'ըսէ թէ կրնայ արգելք ըլլալ այն մեծ դիտմունքներուն՝ որ ունի իմ վրաս: Իրմէ զատ ոչ ոք կրնայ հետս տեսնուիլ վանդակապատ պատուհանէն, և մէյ մ'ալ իր մէկ ծերունի ազնուատոհմ՝ բարեկամը՝ որուն համար կ'ըսէ թէ ինծի շատ հաւներ է. ճշմարիտն ըսելով ես իրեն չեմ հաւնիր, թէպէտ և կարենայի մէկու մը հաւնիլ:

» Մեծ հարստութեան մը մէջ կ'ապրիմ. այսու ամենայնիւ փող մը գործածելու իշխանութիւն չունիմ: Կ'ըսեն որ եթէ ստակ ունենամ քովս, անկէ շատ հեռանք կրնայ ծագիլ: Հագուստներս ալ գրեթէ աղախիններուս են, որ դեռ վրայէս չձգած, իրարմէ կը յափշտակեն. թէպէտ ճոխութեան մէջ եմ՝ բայց քովը

գանուած ատենէս աւելի աղքատ եմ, որովհետև ուրիշի տալու բան մը չունիմ: Երբոր տեսայ որ սորված մեծամեծ գիտութիւններովս փոքրագոյն բարիք մըն ալ չեմ կրնար ընել, ասեղս ձեռք առի՝ որուն բարեբաղդաբար վարժեցուցած ես դու զիս: Ահա կը խրկեմ խել մը զոյգ գուլպաներ իմ ձեռքովս գործուած՝ քեզի ու Մարգարիտայի համար, գիշերնոց մը՝ Գոմինիկոսի համար, ու կարմիր թաշկինակներէս մէկ հատ մը Մարիամին: Այս կապոցին հետ կը դնեմ նաև սրտուղներու կուտեր, որ նախաճաշիկներուս ատենը ժողված եմ, ու այլ և այլ տեսակ ծառերու հունտեր՝ որ հանգրտեանս ատեն կուսաստանին սլարտիզէն ժողվեր եմ: Ասոնց հետ դրի նաև մանուշակի, մարգրտի, հրանունկի, հարսնուկի, մարգարէածաղկի և այրեծաղկի հունտեր, զորոնք դաշտերէն քաղեցի՝ վասն զի այս երկրիս մարգագեախններուն մէջ աւելի գեղեցիկ ծաղկըներ կը գտուին՝ քան թէ մերիններուն մէջ, բայց ոչ ոք



անոնց երեսը կը նայի : Անտարակոյս եւ որ դու և Մարգարիտա աւելի գոհ պիտի ըլլաք այս հունտերուս պարկին վրայ , քան թէ այն դրամոց պարկին , որ պատճառ եղաւ մեր իրարմէ բաժնուելուն ու իմ արցունքներուս : Ինծի մեծ ուրախու թիւն մը պիտի ըլլայ՝ թէ որ դուք օր մը կարենաք տեսնել խնձորենիներուն մեծնալը՝ մեր պանեաններուն քով , ու կաղնիներուն տերևներուն՝ մեր գոգոյի ծառերուն տերևոցն հետ խառնուիլը . ինքզինքդ Նորմանտիա պիտի կարծես , զոր այնչափ կը սիրես :

» Ինծի պատուիրեցիր որ քեզի իմացնեմ իմ ուրախութիւններս ու վիշտերս : Ամենակն ուրախութիւն չունիմ ձեզմէ հեռու ըլլալովս . իսկ վիշտերս կը չափաւորեմ մտածելով որ այնպիսի վեճակի մը մէջ եմ՝ ուր Աստուծոյ կամօքը դրիր զիս դու . բայց զգացած մեծագոյն վիշտս այն է՝ որ հետս մէկը չլսօսիր ձեր վրայօքը , և ոչ ալ ես կրնամ մէկուն հետ խօսիլ . երբոր ես կը ջանամ

խօսակցուԹիւնը ինձի շատ սիրելի եղած բաներուն վրայ դարձրնել, իմ աղախիններս, կամ մանուսանդ հօրաքեռս աղախինները (որովհետև աւելի անորն են՝ քան Թէ իմս) կը դառնան կ'ըսեն ինձի՝ Օրիորդդ, յիշէ որ դու գաղղիացի ես, և պէտք է մոռնաս վայրենեաց երկիրը: Ա՛հ, ես աւելի ինքզինքս կը մոռնամ քան Թէ ան տեղն ուր ծներ եմ, և ուր դուք կ'ապրէք: Աս երկիրս է ինձի համար վայրենեաց երկիր. վասն զի հոս մինաւոր կ'ապրիմ, ու մէկը չունիմ՝ որուն կարենամ իմացընել այն սէրը՝ որ ինչուան իր մահը ունենայ պիտի վըագ,

ԳորովագուԹ ու Սիրելի Մայր իմ,

Քու հնազանդ ու սիրելի գուստրդ

ՎԻՐԳԻՆԻ ՏԸԼՅԴՈՒՐ » :

« Ձեր բարերար խնամոցը կը յանձնեմ Մարիամն ու Դոմինիկոսը՝ որ այնչափ հոգ ունեցան իմ մանկուԹեանս վը-

րայ : Եղեցէք իմ կողմանէս Հաւատա-  
րիմը , որ անտառներու մէջ կորսուած  
ատենս գտաւ զիս » :

Պօղ խիստ ապշեցաւ որ Վիրգինի ամե-  
նեին իր վրայ բան մը գրած չէր , Վիրգի-  
նի՛ որ նաև տան շնիկը չէր մոռցած : Բայց  
չէր գիտեր որ կնկան մը նամակը որչափ  
ալ երկայն ըլլայ , միշտ իր ամենէն սիրե-  
լի մտածմունքը ամենէն ետքը կը սպահէ :

Յետ Գրութեան մէջ Վիրգինի մաս-  
նաւորապէս կը յանձնէր Պօղն երկու տե-  
սակ հունտեր՝ մանուշակի ու այրեծաղ-  
կի : Այս բոյսերուն յատկութիւններուն  
վրայօք , ու նաև զանոնք ցանելու յարմար  
եղած տեղերուն վրայ քանի մը տեղեկու-  
թիւններ կու տար անոր . « Մանուշակը ,  
կ'ըսէր , սղտի ծաղիկ մը կու տայ՝ մոլթ  
կապտագոյն , որ կ'ախորժի ինքզինքը  
թուփերու մէջ ծածկել . բայց իր անու-  
շահոտ բուրմունքը յայտնի կ'ընէ մէկէն  
զինքը » : Վը յանձնէր՝ որ ցանէ զայն աղ-  
բիւրին քովը , իր գոգոյի ծառին տակը :

« Իսկ այրեծաղիկը , կ'աւելցընէր , աղուոր  
ծաղիկ մը կու տայ բաց կապուտակ , մէ-  
ջը սև՝ ճերմակ բծերով : Կարծես թէ սու-  
գի մէջ է . այս պատճառաւ Այրեծաղիկ  
կը կոչեն : Կ'ախորժի քարուտ ու հովու  
դէմ տեղեր » : Կ'աղաչէր որ ցանէ նոյն  
հունտը այն ժայռին վրայ՝ ուր ետքի գի-  
շերը հետը խօսեր էր , ու նաև այն ժայ-  
ռին անունն իր սիրոյն համար ԺԱՅՌ ԶՐԱ-  
ԺԵՇՏԻ դնէ :

Այս հունտերը պզտի քսակի մը մէջ  
դրեր էր , որուն հիւսուածքը թէպէտ  
խիստ պարզ էր , բայց Պօղի համար ան-  
գին եղաւ , երբ տեսաւ վրան մէկ Պ ու մէկ  
Վ իրարու խառնուած . քսակը մազէ հիւ-  
սած էր , որուն գեղեցկու թենէն մէկէն  
խմացաւ Վ իրգինեայ մազէն ըլլալը :

Այս զգայուն և առաքինի օրիորդին  
թուղթը ամենուն աչքերէն արցունք թա-  
փել տուաւ : Մայրն ամենուն բերնէն  
պատասխան գրեց , որ իրեն կամօքը ուզէ  
մնայ , ուզէ դառնայ գայ . ապահովելով  
որ իր երթալէն ՚ի վեր ամէնն ալ իրենց

երջանկութեանը գեղեցկագոյն մասը կոր-  
սընցուցած էին, և թէ մասնաւորապէս  
ինքն անմխիթար էր:

ՌԶԿԷ

Պօղ Երկայն թուղթ մը գրեց անոր, ու  
րուն մէջ կը խոստանար թէ պիտի սկսէր  
պարտէզն անոր արժանաւոր պարտէզ մը  
պատրաստել, ու Եւրոպայի բոյսերը խառ-  
նել Աֆրիկէի բուսոցն հետ, ինչպէս որ  
անիկայ իր բանած ձեռագործին մէջ ի-  
րենց անուաններն իրարու հետ խառնե-  
ր էր: Խրկեց անոր իր աղբիւրին քովի գո-  
գոյի ծառերուն պտուղներէն որոնք ա-  
ղէկ հասած էին, ու կ'ըսէր. « Հետը չեմ  
գներ կողոյս ուրիշ հունտերէն, որպէս  
զի անոնց բերքերը տեսնելու փափաքը  
համոզէ զքեզ շուտով հոս դառնալու »:  
Ար պալատէր որ որչափ կարելի է փու-  
թայ շուտով դալ կատարել իր ընտա-  
նեացը փափաքներն և մասնաւորապէս  
իրենը, որովհետև իրմէ հեռու ուրախու-  
թիւն մը չէր կրնար վայելել:

Պօղ մեծ հոգով ցանեց Եւրոպայի  
հունտերն, և մանաւանդ մանուշակինն ու

այրեծաղկինը, որոնց ծաղկերնէրը կարծես  
թէ նմանութիւն մը ունէին Ախրզինեայ  
բնութեանն ու վիճակին հետ, որ մաս-  
նաւոր կերպով մը յանձներ էր իր խնա-  
մոցը: Բայց կամ ծովէ անցնելու միջոց  
աւրուելնուն, և կամ մանաւանդ Ափրի-  
կէի այս մասին օգը յարմար չըլլալով ա-  
նոնց, մէջերնէն խիստ քիչը ծլեցան ու  
չկրցան ինչպէս որ պէտք էր ծաղկիլ:

Սակայն նախանձն՝ որ մարդկանց եր-  
ջանկութեանն ընթացակից է, մանա-  
ւանդ գաղղիական գաղթականաց մէջ,  
այնպիսի ձայներ տարածեց կղզւոյն մէջ՝  
որ շատ մտմտուք տուին Պօղի. Ախրզի-  
նեայ թուղթը բերող նաւուն մարդիկը կը  
պնդէին թէ անիկայ կարգուելու վրայ էր.  
անունը կուտային այն պալատականին՝  
որ զանիկայ կնութեան պիտի առնուր.  
նաև մէջերնէն ոմանք կ'ըսէին թէ բանը  
եղեր լմընցեր էր, և թէ իրենք աչքովին  
տեսեր են: Առջի բերան Պօղ բանի տեղ  
չգրաւ վաճառականի նաւու մը բերած  
լուրերը, որ շատ անգամ սուտեր կը ծա-



ւալէ իր ճամբուն վրայ հանդիպած տեղերը: Բայց որովհետև կողզոյն բոլոր բնակիչները նենգաւոր գթութեամբ մը կը փութային կարեկից ըլլալ իրեն այս գիւղուածիս համար, ուստի սկսաւ քիչ մը հաւատալ անոնց ըսածներուն: Մանաւանդ որ կարգացած վիպասանութիւններուն մէկ քանիին մէջ կը տեսնէր՝ որ մատնութիւնը կատակի մը կերպով կ'ըլլար. և որովհետև գիտէր թէ այս գրքերը ճշմարիտ նկարագրութիւններ կը բովանդակեն Եւրոպայի բարուցը վրայով վախցաւ որ Տըլադուր տիկնոջ աղջիկն ալ չըլլայ թէ հոն գլխէ ելած ըլլայ ու մոռնայ իր առջի խոստմունքները: Իր ստացած լուսաւորութիւնը կը սկսէր զինքը թշուառ ընել: Բայց իր կասկածները աւելցրնողն ան եղաւ՝ որ շատ նաւեր եկան Եւրոպայէն այս գիւղուածէս ետքը վեց ամսուան մէջ ու վիրգինիէն բնաւ թուղթ մը չբերին:

Այս թշուառ պատանին իր սրտին խռովութիւններէն տանջուած՝ շատ հեղ

զիս տեսնելու կու գար, որպէս զի իմ աչ-  
խարհիս մէջ ունեցած փորձառութեամբս  
հաստատէ կամ ցրուէ իր վշտալի մըտ-  
մըտութիւնքը :

Ինչպէս որ ըսի՝ ես կը բնակիմ ասկէ  
փարսախ ու կէս հեռու, սղտի գետի մը  
եզերքը՝ որ Երկայն լեռան քովէն կ'անց-  
նի : Հոն կեանքս կ'անցընեմ մինաւոր ա-  
ռանց ամուսնոյ, տղոց ու գերիներու :

Այն սահաւագիւտ երջանկութենէն  
ետե՛ որ կ'ունենայ մարդ իրեն խիստ յար-  
մար կողակից մը գտնելով, անշուշտ ամե-  
նէն քիչ թշուառութիւն ունեցող վիճա-  
կը մինաւոր ասրիլն է : Այն ամէն մարդ  
որ շատ տժգոհութիւն ունեցեր է ուրիշի  
վրայ, միշտ առանձնութիւն կը փնտրուէ :  
Նաե գիտելու բան է՝ թէ այն ազգերուն  
մէջ որ խեղճ եղած են իրենց կարծիքնե-  
րովը, բարքովը կամ իրենց կառավարու-  
թեամբը, խել մը քաղաքացւոց խումբեր  
գացած իրենք զիրենք բոլորովին միայնու-  
թեան սուած են ու ամուսնութենէ հրա-  
ժարած . ասանկ եղած են Եգիպտացիք

իրենց անկման ժամանակը, և յետին արևելեան կայսերաց ժամանակի Յոյները ասանկ են մեր օրերը Հնդկաստանցիք, Չինք, հիմակուան Յոյները, Իտալացիք, ու Եւրոպայի արևելեան և հարաւային ժողովրդոց շատերը: Միայնութիւնը կէս մը բնական երջանկութիւն կը բերէ մարդուս, ընկերական թշուառութենէն հեռացնելով: Մեր ընկերութեանց մէջ՝ որ այնքան նախապաշարմունքներով իրարմէ բաժնուած են, մարդուս հոգին անդադար խռովութեան հետ է. ինքնիրեն միշտ հազարումէկ խռովայոյզ ու իրարու հակառակ կարծիքներ կ'որոճայ, որոնցմով փառասէր և ողորմելի ընկերութեան մը անդամները կը ջանան որ մեկզմէկ նըլաւեն: Բայց առանձնութեան մէջ մէկզի կը դնէ այս օտար խաբէութիւններն՝ որ տակնուվրայ կ'ընեն զինքը. նորէն ձեռք կ'առնէ այն պարզ զգացմունքն՝ որ ունի թէ իր վրայ և թէ բնութեան ու անոր արարչին վրայ: Այսպէս երկիրներ աւրըշարկող հեղեղի մը աղմուտ ջուրը երբ

գալու թափելու ըլլայ իր ընթացքէն հե-  
ռու եղած պզտի խորածորի մը մէջ, անոր  
յատակը կը թողու իր ցեխը, և ինքը նո-  
րէն իր առջի պայծառութիւնն ու թափ-  
անցկուծիւնը ստանալով, մէջը իբրև 'ի  
հայելոջ կ'երևան իր եզերքները, երկրին  
կանաչութիւնն ու լուսաւոր երկինքը: Ա-  
ռանձնութիւնը հոգւոյն շարժմունքնե-  
րուն պէս՝ մարդուս մարմնոյն շարժմունք-  
ներն ալ կարգի կը դնէ: Ամենէն երկար  
ապրողները միայնակեացներու մէջ կը  
գտնուին, ինչպէս Հնդկաստանի պրահ-  
մեսնք: Վերջապէս՝ առանձնութիւնն  
այնպիսի հարկաւոր բան կը կարծեմ այս  
աշխարհիս մէջ երջանիկ ըլլալու համար,  
որ անկարելի կ'երևայ ինծի ու և իցէ անու-  
ղական հաճոյք մը վայելել, կամ իր վար-  
քը հաստատուն սկզբան մը վրայ կանո-  
նաւորել, թէ որ մարդս այնպիսի ներքին  
առանձնութիւն մը չունենայ՝ ուսկից որ  
իւր կարծիքը խիստ քիչ էլէ և ուր ուրի-  
շինը ոչ երբէք մտնէ: Այսու ամենայնիւ  
չեմ ուզեր ըսել թէ պէտք է մարդս բո-

լորովին մինակ ապրի, որովհետև իր պիտոյքներովն ուրիշներու հետ կապուած է. ուստի իբրև ըտլոր արարածոց մասն՝ պէտք է մարդկանց համար աշխատի: Բայց ինչպէս որ Աստուած իւրաքանչիւր մարդու այնպիսի գործարաններ տուած է՝ որ խիստ աղէկ յարմարած են մեր բնական երկրագնտին տարեւըքներուն, զոր օրինակ թառւններ՝ գետնի համար, թփեր՝ օդու համար, աչոււններ՝ լոյսի համար, անանկ որ չենք կրնար այս զգայարանքներուն գործողութիւնը փոփոխել. այսպէս սիրտը, որ գլխաւոր գործարանն է, միայն իրեն համար պահած է մեր կենացն ստեղծողը:

Անոր համար իմ օրերս մարդիկներէ հետու կ'անցընեմ, որոնց ուզեցի ծառայել ու զիս հալածեցին: Եւրոպայի մեծ մասն ու նաև Ամերիկայի և Ափրիկէի քանի մը կողմերը պտրտելէն վերջը, այս սակաւ բնակ կղզւոյս մէջ հաստատեցի բնակութիւնս, քաղցր կլիմային ու առանձնութիւններուն հաւնելով: Անտառին մէջ

Ժառի մը տակ խրճիթ մը շինեցի, սղտի դաշտ մը իմ ձեռօքս կը մշակեմ, դրանս առջևէն ալ գետ մը կ'անցնի. ասոնք իմ պէտքերս ու զբօսանքներս կը լեցընեն : Այս զուարճութիւններէս զատ՝ ունիմ նաև քանի մը աղէկ դրքեր, որոնք կը սորվեցընեն ինձի լաւագոյն ըլլալ : Այն գրքերն իմ երջանկութեանս պատճառ կ'ընեն նաև նոյն իսկ թողուցած աշխարհս. կը նկարագրեն ինձի այն կիրքերն՝ որ այնչափ ողորմելի կ'ընեն անոր բնակիչները, ու անոնց և իմ վիճակիս մէջ ըրած բազմատուութեամբս՝ կ'ուրախանամ աղատ տեսնելով զիս անոնց թշուառութենէն : Ինչպէս ալէկոծութենէ խալը սած ու Ժայռի մը վրայ նստած մարդ մը, ես ալ իմ առանձնութեանս մէջէն կը դիտեմ փոթորիկներն՝ որ կը գողան բոլոր աշխարհի մէջ. նաև իմ հանգստութիւնս կրկնապատիկ կ'աւելնայ մրրկին հեռաւոր աղաղակաւը : Ան ատենէն ՚ի վեր որ մարդիկ իմ ճամբուս վրայ չեն գտուիր ու ես ալ իրենց ճամբուն վրայ չեմ, չեմ ատեր



զանոնք, միայն կը խղճամ վրանին : Թէ որ թշուառի մը հանդիպիմ, կը ջանամ անոր օգնութիւն ընել խրատներովս, ինչպէս հեղեղի մը եզերքէն անցնողը ձեռքը կ'երկնցընէ այն խեղճ մարդուն՝ որ խղզուելու վրայ է : Միայն անմեղութիւնը գտայ՝ որ ձայնիս մտիկ ընէ : Բնութիւնը փուճ տեղ իրեն կը կանչէ զմարդիկ . իւրաքանչիւր դք ըսա իր կրիցը կերպարանք մը կու տայ անոր իր մտացը մէջ, և այն ցնորքին՝ որ զինքը կը մոլորցընէ՝ բոլոր կենացը մէջ ետևէ ըլլալով, յետոյ երկնից գէմ կը տրտնջայ այն մոլորութեանն համար՝ որուն մէջ ինքը ձգեց զինքը : Անբաւ խեղճերուն մէջէն՝ որոնք կը ջանայի բնութեան ճամբան դարձընել, չգտայ մէկն որ գինովցած չըլլար իր թշուառութիւններովը . սկզբան ուշադրութեամբ մտիկ կը դնէին ինծի, յուսալով որ պիտի օգնեմ իրենց, որպէս զի փառք կամ հարստութիւն ստանան . բայց երբ կը տեսնէին որ այն բաներուն չկարօտելու դեղը կ'ուզէի սորվեցընել իրենց, ան ա-

տեն զիս ալ ողորմելի կը սեպէին որ իրենց թշուառ երջանկութեանն ետևէն չէի վազեր. կը մեղադրէին իմ առանձնասէր կեանքս, կարծէին թէ իրենք միայն մարդկանց պիտանի են, ու կը ջանային զիս ալ իրենց յորձանքներուն մէջը քաշել տանիլ: Բայց ես թէպէտ ամէն մարդու հետ կը կենակցիմ, բայց մէկուն ալ չեմ տար անձս: Շատ հեղ բաւական կ'ըլլայ ինծի իմ անձս՝ բուն իսկ ինծի օրինակ ըլլալու համար: Այսին զի հիմակուան ունեցած խաղաղութեանս մէջ՝ մտքէս կ'անցընեմ կենացս անցած խոռվութիւնները, զորոնք մեծ բանի մը տեղ կը դնէի ան ատենը. միտքս կը բերեմ ան պաշտպանութիւնները, հարստութիւնը, համբաւը, հեշտութիւնները, ու այն կարծիքներն որ իրարու ընդդիմամարտ են բոլոր երկրիս վրայ: Այն անթիւ մարդիկներն, որոնց այս ցնորքներուն համար իրարու հետ կատաղութեամբ վիճաբանելը տեսայ, և որոնք հիմա մեռած են, կը նմանցընեմ զանոնք իմ վտակիս ալիք-

ներուն, որ փրփրած կը փշրին մէջի ժայռերուն զարնուելով ու կ'աներևութանան՝ մէյ մ'ալ չեն դառնար: Իսկ ես խաղաղութեամբ կը թողում ինքզինքս ժամանակին գետին մէջ, որ զիս առած կը տանի ապագային անեղբ ովկիանոսը. ետեսնելով բնութեան հիմակուաններդաշնակութիւնները, կը բարձրանամ դէպ'ի անոր ստեղծողը, ու կը յուսամ ուրիշ աշխարհի մը մէջ աւելի երջանիկ բաղք մը ունենալ:

Թէպէտ իմ հիւղէս (որ անտառի մը մէջ շինուած է) չերևար այսչափ առարկաներ՝ որչափ այս մեր եղած տեղւոյն բարձրութենէն կը տեսնուին, այսուամենայնիւ կը գտուի հոն ախորժելի դիրքեր, մանաւանդ այնպիսի մարդու մը համար, որ ինծի պէս աւելի կը սիրէ իր վըայ անդրադարձութիւն ընել՝ քան թէ արտաքին բաներ մտածել: Դրանս առջևէն անցնող վտակը ուղիւ գծով անտառները կը կարէ, այնպէս որ ինծի երկայն ջրանցք մը կ'երևայ՝ տեսալ տեսալ

տերևներով ծառերու շուքին տակը • կայ  
անոնց մէջ Թաթամաքի ու եբենոսի ծա-  
ռեր, ու նաև հոս խնձորենիք, ձիթենիք  
և կինամոնենիք ըսուածները • տեղ տեղ  
ալ արմաւենեաց անտառիկներ, որոնց  
մերկ բուները աւելի քան զհարիւր ոտք  
կը բարձրանան սիւնաձև, կատարնին տե-  
րևազարդ փունջ մը ունենալով, և ուրիշ  
ծառերէն աւելի բարձր ըլլալնուն՝ անտառ  
անտառի վրայ բուսածի պէս կ'երևան :  
Ձանազան տերևով Լիանէր ալ կան, ո-  
րոնք մէկ ծառէն մէկալ ծառ պլլուելով  
հոս ծաղկրներէ կամարներ կը ձևացը-  
նեն, հոն կանաչներէ երկայն վարագոյր-  
ներ : Համեմային անոյշ հոտեր կը բու-  
րեն այս ծառերուն շատերէն, և այս բուր-  
մունքը այնչափ ազդեցութիւն ունի նաև  
լաթերու վրայ, որ քանի մը Ժամ առաջ  
այս անտառին մէջէն անցնող մարդուն  
վրայէն հոտը կու գայ : Ծաղկած ատեննին՝  
կէս մը ձեամբ ծածկուած կը կարծես զա-  
նոնք : Ամառուան վերջը՝ անծանօթ գա-  
լառներէ ընդարձակ ծովեր կտրելով շատ

տեսակ օտար [Թուջուններ կու գան բնածին  
անիմանալի ազգեցու [Թեամբ մը , այս կըղ-  
զւոյս բուսոցը հունտերէն ժողվելու հա-  
մար , ու իրենց գեղեցիկ գոյներն՝ արևէն  
[Թխացած ծառերուն կանաչու [Թեանը կը  
յաղ [Թեն : Ասոնց մէջ կը գտնուին նաև  
այլ և այլ տեսակ [Թու [Թախներ , ու կա-  
պոյտ աղանիներ , որ հոս հոլանտա-  
ցի աղանի կը կոչուին : Այս անտառնե-  
րուս մէջ բնակող կապիկները անոնց  
մու [Թ ճիւղերուն մէջ կը խաղան , ու  
րոնցմէ կը զանազանուին իրենց մոխրա-  
գոյն ու կանաչաներկ մազովն և սև կեր-  
պարանքովը . ոմանք պոչովնին կը կա-  
խուին անոնց վրայէն ու օդուն մէջ կ'ե-  
րերան . ուրիշները ձագերնին [Թևերնուն  
մէջ առած՝ ճիւղէ ճիւղ կը ցատքեն : Ոչ  
երբէք մահառի [Թ հրացանը վախցուցած  
է հոն բնու [Թեան այս խաղաղասէր որ-  
դիքը : Միայն ուրախու [Թեան ձայներ կը  
լսուին հոն , ու հարաւային երկրի քանի  
մը [Թուջոց ճուռողունն ու անծանօ [Թ եր-  
գը , որ այս անտառներուս արձագանքը

հեռուանց կը կրկնէ : Գետն որ պղպըջա-  
լով ծառերուն մէջէն ու ժայռերուն վը-  
րայէն կը վազէ, ասդիս անդին կը նկարէ  
իր յստակ ջրերուն մէջ անոնց կանաչնե-  
րուն ու շուքերուն պատկերը, նաև մէջի  
զուարթ բնակիչներուն խաղերը : Անկէ  
հազար քայլ հեռու՝ զանազան աստիճան  
բարձրութեամբ ժայռերու վրայէն վար  
կը թափի, ու թափած սեղը կը ձևանայ  
միակտուր բիւրեղի մը պէս ջրի սահանք  
մը, որ ինկածին պէս կը կոտորափ փըր-  
փուրէ պղպըջակներ հանելով : Հազար  
խառնաձայն աղաղակներ կ'ելլեն այս մուն-  
չող ջրերէն, զորոնք հովերն անտառին մէջ  
տարածելով երբեմն հեռուն կը տանին,  
և երբեմն բոլորը մէկէն կը մօտեցընեն՝  
մարդուս լսելիքը խցընելով, մայր եկե-  
ղեցոյ մը զանգակներուն ահեղ հնչմանը  
պէս : Օգը ջրերուն շարժմունքէն միշտ  
նորոգուելով այնպիսի կանաչներ կը բուս-  
ցընէ այս գետիս եզերքը՝ ամառնային տա-  
քութեան միջոց ալ, ու անանկ զովու-  
թիւն մը կու տայ, որ խիստ քիչ կը դը-



տուրի կղզւոյս շէններուն գազաթներուն վրայ ալ :

Քիչ մը անդին ժայռ մը կայ՝ որ ջրի սահանքէն ահանջ չյողնելու չափ հեռու է, բայց միանգամայն այնչափ մտա է՝ որ մարդ կրնայ վայելել անոր տեսքը, զովութիւնն ու խոխովանքին ձայնը : Երբեմն խիստ տաք ատեններ կ'երթայինք հոն կերակուր ուտելու այն ժայռին շուքին տակը՝ Տըլադուր տիկինը, Մարգարիտան, Վիրգինի, Պօլ և ես : Որովհետեւ Վիրգինի նաև իր հասարակ գործողութիւններն ալ միշտ ուրիշի աղէկութեանը համար կ'ընէր, ուստի բաց տեղ պտուղ մը չէր ուտեր առանց անոր կուտը հողուն մէջ թաղելու : « Ասոնցմէ ծառեր կը բուսնին, կ'ըսէր, ու իրենց պրտուղները կուտան Ճամբորդի կամ գոնէ թռչնոյ մը » : Ուստի օր մը որ այս ժայռիս ստորտը բաբէ) մը կերած էր, պրտղին սերմը հոն տնկեց. քիչ ատենէն ետքը խել մը բաբէ)ի ծառեր բուսան՝ որոնց մէջ մէկն ալ էգ էր, այսինքն պտուղ տուող :

Այս ծառը Աիրգինեայ ծունկէն բարձր  
չէր իր հոստեղէն գացած ժամանակը .  
բայց որովհետև խիստ շուտ կը մեծնայ ,  
երկու տարիէն քսան ոտք բարձրութիւն  
ունէր , ու իր բնոյն վերի կողմը սլափած  
էր կարգ կարգ հասուն ստուղներով : Պօղ  
սլափածամբ այս տեղս գալով ուրախու  
թեամբ լցուեցաւ տեսներուն այս սլափի  
հունտէ մը ելած մեծ ծառը , զոր տեսեր  
էր իր բարեկամուհւոյն անկած ատենը ,  
և միանգամայն սաստիկ տխրութիւն մը  
եկաւ վրան՝ անոր երկար բացակայու  
թեանը ծառին տուած վկայութենէն :  
Այն առարկաներն որ ստէպ կը տեսնենք ,  
չեն իմացըներ մեզի կեանքերնուս արա  
գութիւնը . անոնք ալ մեր հետը կը ծե  
րանան անզգալի ծերութեամբ մը . բայց  
այն բաներն որ քանի մը տարիէն ետքը  
յանկարծ նորէն կը տեսնենք , անոնք կը  
ցուցընեն մեզի թէ ինչ երագութեամբ  
կը վազէ կ'երթայ մեր կենաց գետը : Պօղ  
ասլէցաւ ու խռովեցաւ այս մեծ և սլափ  
ղալից Բեհայի ծառը տեսներով , ինչպէս

Ճամբորդ մը երկար ատեն իր քաղաքէն հեռանալէն ետքը, կը զարմանայ ու կը խոռովէ՝ երբ հոն չգտներ իր ժամանակակից մարդիկը, ու անոնց տեղը տղաքնին միայն կը տեսնէ, զորոնք ինքն օրօրոցի մէջ թողուցեր էր, և որոնք ընտանեաց գլուխ եղեր են: Երբեմն կարել կ'ուզեր այն ծառը, վասն զի չափէն աւելի կ'իմացընէր իրեն Ախրգինեայ երթալէն՝ ի վեր անցած ժամանակին երկարութիւնը. երբեմն ալ անոր բարեգործութեան մէկ յիշատակարանը սեպելով զայն՝ կը համբուրէր բունը, և սիրալիբ ու կսկծագին խօսքեր կը զուրցէր անոր: Ա՛վ ծառ, որուն սերունդը դեռ կայ մեր անտառներուն մէջ, ես ալ տեսայ զքեզ աւելի սիրով ու պատկառանօք՝ քան զհոովմայեցւոց յաղթական կամարները: Ա՛ր էր թէ բնութիւնն՝ որ ամէն օր կը կործանէ թագաւորաց ամբարտաւանութիւն յիշատակարանները, բազմացընէր մեր անտառներուն մէջ դեռահասակ ու աղքատ աղջկան մը բարեգործութեանն յիշատակները:

Երբոր Պօղ իմ բնակութիւնս կու գար, միշտ զինքն այդ Բաբելոնի ծառին տակը կը գտնէի: Օր մը հոն տեսայ զինքը սաստիկ մաղձոտութեան մէջ ընկղմած, ու հետը խօսակցութիւն մը ըրի, որ սպասմեմքեզի՝ թէ որ սպասութեանս մէջ ըրած երկար զարտուղութիւններս ձանձրալի չըլլանքեզի, որոնք տարիքիս ու յետին բարեկամներու համար կրնան ներուիլ: Խօսակցութեան ձևով սպասմեմքեզի, որպէս զի կարենաս իմանալ այս պատանշոյն ունեցած բնական խելքը. ու դիւրաւ խօսողներն իրարմէ կրնաս զանազանել անոր հարցմունքներուն ու իմ պատասխաններու իմաստէն: Աւտի ըսաւ ինձի.

« Մեծապէս տխուր եմ. երկու տարի ու երկու ամիս է՝ քանի որ Տըլադուր օրիորդը դացած է, և ութ ամիս ու կէս է որ թուղթ չէ գրած մեզի: Ինքը հարուստ է, ես աղքատ, անշուշտ մոռցաւ զիս: Փախաք ունիմ նաև մտնել ու երթալ Գաղղիա՝ թագաւորին ծառայու-

Թեան մէջ մտնել. Թէ որ հոն հարբատա-  
նամ ու մեծ մարդ ըլլամ, Տրլադուր օ-  
րիորդին հօրաքոյրն անշուշտ կնու-Թեան  
կու տայ ինծի իր եղբօրորդւոյն աղջիկը :

ԾԵՐԸ

Ո՛վ բարեկամ իմ, դու չէիր ինծի ըստ-  
ղը Թէ անաղզի ես :

ՊՕՂ

Մայրս զուրցեց ինծի. որովհետեւ ես  
չեմ գիտեր Թէ ինչ ըսել է անաղզի ըլ-  
լալը : Ոչ երբէք կրցեր եմ հասկընալ Թէ  
իմ ծնունդս ուրիշներէն ինչ տարբերու-  
Թիւն ունի, և ոչ ալ Թէ ուրիշներունն  
իմինէս ինչ առաւելու-Թիւն ունի :

ԾԵՐԸ

Անաղզի ըլլալուդ համար՝ Գաղղիոյ  
մէջ մեծ պաշտօններու չես կրնար հաս-

նիլ: Ա՛լ աւելին կայ, նաև ու և իցէ նշա-  
նաւոր ընկերութեան մէջ չեն ընդունիր  
զքեզ:

ՊՕԴ,

Հապա շատ հեղ ըսած ես ինձի՝ թէ  
Գաղղիոյ մեծութեան մէկ սրտաճառն ալ  
այն է, որ խիստ հասարակ մարդ մըն ալ  
կրնայ ամէն աստիճանի հասնիլ. և շատ  
երևելի մարդկանց անունը տուիլ ինձի,  
որոնք նուստ վիճակներէ առաջ եկած՝  
պատիւ ըրեր են իրենց հայրենեացը. ու-  
րեմն խաբէական խրախոյս մը կ'ուղէիր  
տալ ինձի:

ԾԵՐԸ

Որդեակ իմ, խօսքս ամենևին չեմ փո-  
խեր, ճշմարտութիւնն ըսի քեզի. բայց  
անցեալ ժամանակներու վրայ էր իմ ը-  
սածս, իսկ հիմա՝ բաները բոլորովին փո-  
խուած են, ամէն բան ստրկով կը վաճա-



ուռի Գաղղիա • այսօրուան օրս ամէն բան  
քանի մը տոհմերու հայրենական ժառանգ  
դուծիւն դարձած է, կամ՝ կուսակցու  
թեանց վրայ բաժնուած է: Թագաւորն  
արև մըն է, զոր մեծամեծներն ու կու  
սակցութիւնները ամպերու պէս կը պա  
տեն • գրեթէ անկարելի է որ իր ճառա  
գայթներէն մէկը քու վրադ ծագէ: Ատե  
նօք աւելի պարզ կառավարութեան մը  
տակ՝ այդ հրաշալիքները տեսնուեցան •  
ան ատեն տաղանդաւոր ու արդիւնաւոր  
մարդիկ դուրս ելան ամէն կողմէն, նոր  
երկիրներու պէս՝ որոնք հերկուելով կը  
սկսին բոլոր իրենց ուժովը պտղաբերել:  
Բայց այնպիսի մեծ թագաւորներ քիչ կը  
հանդիպին, որ մարդիկ ճանչնան ու ըն  
տրեն: Հասարակ թագաւորները՝ միայն  
իրենց բոլորախօս եղած մեծամեծներուն  
ու կուսակցութեանց զրգմանն համաձայն  
կը գործեն:

ՊՅԴ,

Բայց գուցէ այս մեծամեծներէն այն պիտի մէկը կը գտնեմ՝ որ ինծի պաշտպանութիւն ընէ :

ԾԵՐԸ

Մեծամեծներէ պաշտպանուելու համար՝ պէտք է անոնց փառասիրութեանը կամ հաճոյիցը ծառայել : Արդ ոչ երբէք կրնաս դու ընել այդ բանը , մէյ մը որ անազգի ես , երկրորդ որ երկիւղած ես :

ՊՅԴ,

Բայց այնպիսի կտրըճութեան գործեր կ'ընեմ , այնպէս հաւատարիմ կ'ըլլամ խօսքիս վրայ , անանկ մտադիր պարտքերուս , և անանկ եռանդուն ու հաստատ կ'ըլլամ բարեկամութեանս մէջ , որ վերջապէս արժանի կ'ըլլամ անոնցմէ մէկուն

որդեգիր ըլլալու • Ինչպէս որ ինծի կարգալ տուած պատմութիւններու գ մէջ տեսայ որ այս բանս կը հանդիպի եղեր հին ժամանակները :

ԾԵՐԸ

Ո՛վ բարեկամ, Յունաց և Հռովմայեցւոց մէջ, նաև իրենց անկման ժամանակը, մեծամեծք կը յարգէին առաքինութիւնը • Իսկ մեր մէջը շատ մարդիկ եղած են հասարակ ժողովրդեան մէջէն՝ որ տեսակ տեսակ բաներու մէջ երևելի եղած են, և անոնցմէ մէկն ալ չեմ գիտեր որ մեծ տոհմի մը որդեգրած ըլլայ : Թէ որ մենք Թագաւոր չունենայինք, առաքինութիւնը Գաղղիոյ մէջ յաւիտեան դատապարտուած կ'ըլլար ռամկաց ժառանգութիւն ըլլալու : Ինչպէս որ ըսի .քեզի, անոնք երբեմն կը մեծարեն զայն՝ Թէ որ տեսնեն • Իսկ այսօրուան օրս, այն պատիւներն որ առաքինութեան համար սահմանուած էին՝ ստրկով միայն կը տրուին :

ՊՅՂ,

Թէ որ մեծամեծներէն մէկը չգտնամ,  
կուսակցութեան մը հաճոյ ըլլալու կը  
ջանամ. կ'ընդունիմ բոլորովին անոր ու  
գին ու կարծիքները, և կը սիրցընեմ զիս :

ԾԵՐԸ

Ուրեմն դու ալ ուրիշ մարդկանց պէս  
պիտի ընես, պիտի հրաժարիս խղճմը  
տանքէդ հարըստնալու համար :

ՊՅՂ,

Քան լիցի . միայն ճշմարտութեան միշտ  
ետեւ պիտի ըլլամ :

ԾԵՐԸ

Քեզ սիրցընելու տեղ՝ կարելի է որ ա  
տել տաս : Կուսակցութիւնները ճշմար

սուլթեան ետևէ չեն ըլլար, որովհետև  
փառասէրներու համար ամէն կարծիք ան-  
տարբեր է, բաւական է որ ուրիշներու  
վրայ իշխեն :

ՊՕԴ.

Ո՛հ, ի՛նչպէս դժբաղդ եմ. ամէն կողմա-  
նէ արգելք : Անարգ աշխատութեամբ  
կեանքս անցընելու դատապարտուած եմ՝  
Վիրգինիէն հեռու, ըսելով խորունկ մը  
հառաչեց :

ԾԵՐԸ

Աստուած ըլլայ քու մէկ հատիկ սաշտ-  
պանդ, ու մարդկային ցեղը քու կուսա-  
կիցդ. ասոնց հետ մշտնջենաւոր սիրով  
կապուէ : Տոհմերը, կուսակցութիւնները,  
ժողովուրդներն ու թաղաւորները՝ ունին  
իրենց նախապաշարմունքներն ու կիրքե-  
րը. շատ հեղ պէտք կ'ըլլայ մոլութեամբ  
ծառայել անոնց . իսկ Աստուած ու մարդ.

կային ցեղը առաքինութենէ զատ ուրիշ  
բան չեն ուզեր մեզմէ :

Բայց ինչո՞ւ կ'ուզես դու տարբերիլ մէ-  
կալ մարդիկներէն: Ասիկայ բնական զգաց-  
մունք մը չէ • որովհետև թէ որ իւրաքան-  
չիւր մարդ նոյն զգացմունքն ունենար ,  
ամէնքն անընդհատ իրարու հետ պիտի  
պատերազմէին: Հերիք սեպէքու պարտքդ  
կատարել այն վիճակին մէջ՝ ուր Աստուած  
դրեր է զքեզ: Օրհնէք .քու բազդդ՝ որ քե-  
զի խղճմտանք տուեր է , ու չպարտաւո-  
րեր զքեզ մեծամեծաց պէս՝ երջանկու-  
թիւնդ հասարակ մարդկանց կարծեացը  
վրայ հաստատել, ու հասարակ մարդկանց  
պէս ալ ասրուստ ճարելու համար՝ մեծա-  
մեծաց քծնիլ: Դու այնպիսի երկրի ու  
այնպիսի վիճակի մէջ ես , յորում ասրե-  
լու համար ոչ սուտ զուրցելու հարկա-  
ւորեալ ես , ոչ շողոքորթելու , ոչ ալ ըզ-  
քեզ նուաստացնելու , ինչպէս որ կ'ը-  
նեն Եւրոպայի մէջ հարըստութիւն փրն-  
տըւողներէն շատը • քու վիճակդ չարգի-  
լեր քեզի ո և իցէ առաքինութիւն , և հա-



մարձակ կրնաս ըլլալ ազնիւ, ճշմարտա-  
խօս, անկեղծ, կիրթ, համբերող, ժուժ-  
կալ, զգաստ, ներողամիտ ու բարեպաշտ,  
և վախ չկայ որ օտարի մը հեգնութիւն-  
ները թուռեցնեն քու իմաստութիւնդ,  
որ դեռ նոր ծաղկած է: Աստուած սուեր  
է քեզի ազատութիւն, առողջութիւն, բա-  
րի խղճմտանք մը ու բարեկամներ. թա-  
գաւորներն, որոնց աչքը մտնել կը բաղ-  
ձաս, այդչափ երջանիկ չեն:

ՊՅԴ.

Ա՛հ, Վերգինի կը պակսի ինձի. առանց  
անոր բան մը չունիմ, իսկ ան որ ըլլայ՝  
ամէն բան կ'ունենամ. ինքն է միայն իմ  
ազնուականութիւնս, իմ փառքս ու իմ  
հարըստութիւնս: Բայց որովհետեւ իր  
ազգականը կ'ուզէ անուանի մարդ մը ա-  
նոր ամուսին տալ, ուսմամբ ու գրքե-  
րով մարդս իմաստուն և հռչակաւոր կըր-  
նայ ըլլալ. ուստի ես ալ սորվիլ սկսիմ,  
գիտութիւն ստանամ, հայրենեացս օգ-

տակար կերպով ծառայեմ ունեցած տե-  
ղեկութիւններովս, ոչ մարդու մը վնաս  
տալով՝ և ոչ մարդէ մը կախում ունենա-  
լով. ասանկով անուանի կ'ըլլամ ու փառ-  
քը միայն իմն կ'ըլլայ :

ԾԵՐԸ

Որդեակ, ազնուականութենէ ու հա-  
րըստութենէ շատ աւելի քիչ կը գտուին  
տաղանդները. և անտարակոյս անոնք ա-  
ւելի մեծ ստացուածներ են, որովհետեւ  
բան մը չկրնար զանոնք ձեռքէ հանել  
տալ, և ամէն տեղ անոնցմով ուրիշներէն  
յարգ կը ստանանք: Բայց շատ ծանրագնի  
են. մարդս չկրնար զանոնք ստանալ՝ բայց  
եթէ ամէն տեսակ զրկումով, ու փափուկ  
զգայունութեամբ մը՝ որ զմեզ թշուառ  
կ'ընէ թէ ներքուստ և թէ արտաքուստ,  
մեր ժամանակակիցներուն ըրած հալած-  
մունքներովը: Գաղղիոյ մէջ ատենակալը  
ոչ երբէք կը բաղձայ զինուորականաց  
փառքին, և ոչ ալ զինուորականը՝ նա-

ւաստեաց փառքին • բայց ամէնքը ճամբադ  
կը խափանեն , որովհետև ամէնքը կ'ու-  
զեն երևցնել թէ խելացի են : Մարդ-  
կանց կը ծառայեմ կ'ըսես • բայց այն անձն  
որ որայ մը ցորեն աւելի պտղաբերել կու-  
տայ երկրի մը , ա՛լ մեծ ծառայութիւն ը-  
րած կ'ըլլայ՝ քան թէ գիրք մը շինէր :

ՊՕԴ,

Ո՛հ , աս բաբէի ծառը տնկողը՝ հոս տե-  
ղի անտառներուն բնակչացն ա՛լ աւելի  
օգտակար ու անոյշ ընծայ մը ըրեր է ,  
քան թէ անոնց գրատուն մը տուած ըլ-  
լար՝ ըսաւ , ու գրկեց այդ ծառն ու պա-  
գաւ ուրախութեամբ :

ԾԵՐԸ

Լաւագոյն գիրքն՝ այսինքն Աւետարանն,  
որ կը քարոզէ հաւասարութիւն , բարե-  
կամութիւն , մարդասիրութիւն ու միա-  
բանութիւն , շատ դարերէ 'ի վեր Եւրո-

պացւոց կատարութեանը պատրուակ է զած է: Ո՛րքան բռնաւորութիւններ ընդհանուր և առանձին գեռ 'ի գործ կը դրուին իր անուամբն երկրիս վրայ: Այս ասանկ ըլլալէն վերջը՝ ո՞վ կրնայ յուսալ թէ գրքով մը պիտանի կ'ըլլայ մարդկանց: Յիշէ ան փիլիսոփաներուն շատին վիճակն՝ որ մարդկանց իմաստութիւն քարոզեցին: Հոմերոս, որ այնպիսի գեղեցիկ բանաստեղծութեամբ զարդարած է զայն, կենդանութեան ատենն ողորմութիւն կը մուրար: Սոկրատէս, որ Աթենացւոց այնպիսի գեղեցիկ խրատներ տուաւ խօսքով ու վարքովը, անոնցմէ դատապարտուելով թունաւորուեցաւ: Իր վէհ աշակերտը Պղատոն՝ գերութեան մատնուեցաւ նոյն իսկ այն իշխանին հրամանովն, որ զինքը կը պաշտպանէր. և ասոնցմէ առաջ Պիւթագորաս, որ ինչուան կենդանեաց վրայ ալ կը տարածէր իր գթութիւնը, Կրոտոնացւոցմէ ողջ ողջ էրուեցաւ: Ա՛լ ի՞նչ ըսեմ. այն երևելի մարդկանց անուններուն շատն ալ՝ երգի-

Ծաբանական նկարագրութեամբ մը խան-  
գարեալ հասան մեզի, մարդկային սպե-  
րախտութիւնն ասով ուզելով ծանօթ ը-  
նել զանոնք • և թէ որ այն բազմութեան  
մէջէն մէկ քանիին անունն անեղծ ու ան-  
արատ ինչուան մեզի հասած է, պատճառն  
այն է՝ որ անոնք իրենց ժամանակակից-  
ներէն հեռու ապրեր են • նման այն ար-  
ձաններուն՝ որ ողջանդամ կը հանուին  
Յունաստանի ու Իտալիոյ դաշտերէն, և  
որոնք հողուն տակը ծածկուած ըլլալով  
ազատ մնացեր են բարբարոսաց մոլեգ-  
նութենէն :

Կը տեսնես ուրեմն՝ որ գրաւորական  
մրրկալից փառքն ստանալու համար ալ  
առաքինութիւն պէտք է, ու նաև պա-  
տրաստ ըլլալու է իր կեանքն ալ զոհելու :  
Բայց կը հաւտան որ այս փառքը Գաղ-  
ղիոյ հարուստ մարդկանց սիրտը շարժէ :  
Ամենեին բանի տեղ չեն դներ գրաւոր  
մարդիկները, որոնք դիտութեամբ ոչ պա-  
տիւններու կը հաննին իրենց հայրենական  
երկրին մէջ, ոչ մեծամեծ պաշտօններու,

և ոչ ալ արքունիք կրնան մտնել: Իրաւ այս դարուս մէջ, որ ամէն բանի անտարբեր է՝ բաց ՚ի հարըստութենէ ու հեշտութիւններէն, հալածանք խիստ քիչ կը հանդիպի. բայց գիտութիւններն ու անաքինութիւնը երևելի պաշտօնի մը չեն հասցըներ զմարդ, ինչու որ պետութեան մէջ ամէն բան արծաթով կ'ըլլայ: Ատենոք՝ անոնք իրենց ասպահով վարձք մը կը գտնէին եկեղեցական, ատենակալութեան և կառավարութեան զանազան պաշտօններու մէջ. իսկ հիմա գիրք շինելէն զատ ուրիշ բանի չեն դար:

Սակայն այս արդիւնքն՝ որուն յարգը լաւ մը չեն իմացեր աշխարհիս մարդիկը, միշտ արժանի է իր երկնային սկզբանը: Այս գրքերուն մասնաւոր յատկութիւնն է պայծառացընել զճաճեալ անաքինութիւնը, մխիթարել թշուառները, լուսաւորել ազգերը, և ինչուան թագաւորաց ալ ճշմարտութիւնն ըսելու: Տարակոյս չկայ որ ասիկայ վեհագոյն պաշտօնն է՝ որով կրնայ Աստուած բարձրացընել մահ-



կանացու մը այս երկրիս վրայ : Ո՞վ է այն մարդն որ չմխիթարուի մեծամեծներէն կրած անիրաւութիւններուն ու արհամարհանաց վրայ, երբ մտածէ թէ իր դըրուածքը դարուց դար՝ ազգէ ազգ երթալով՝ պատուար մը պիտի ըլլայ ծուռ կարծիքներու և բռնաւորներու դէմ, և թէ այն առանձնութե մէջէն՝ ուր իր կեանքն անցուցեր է, փառք մը սիտի ծագի՝ թաղաւորաց շատերուն փառքէն գերազանց, որոնց յիշատակարանները կ'ոչնչանան մոռացութեան մէջ, յիշատակարանք կանգնեալք և գովեալք շողջորթներէ :

ՊՕՂ

Ա՛հ, ես այն փառքին ուրիշ բանի համար չեմ բաղձար, բայց միայն Վերդինին փառաւորելու ու զինքը բոլոր աշխարհի առջև սիրելի ընելու համար : Բայց դու՛ որ այնքան տեղեկութիւններ ունիս, ըսէ ինձի՝ թէ արդեօք մեկտեղ պիտի կարգուինք : Վ՛ուղեմ գոնէ ասպական գիտնալու համար իմաստուն ըլլալ :

ԾԵՐԸ

Ո՞վ կ'ուզէր ասրիւլ, որդեակ իմ, թէ որ ասպագան գիտնալու ըլլար: Գուշակեալ թշուառութիւն մը որ այնչափ աւելորդ մտմտութենքներ կու տայ մեզի, հաւաստի թշուառութեան մը տեսութիւնը՝ կը թունաւորէր բոլոր իր նախընթաց օրերը: Նոյն խակներկային վրայ ալ պէտք չէ շատ խորհիլ. և Աստուած՝ որ մեզի մտաց անգրագարձութիւն տուած է՝ պիտոյքնիս առաջուց մտածելու համար, տուեր է մեզի պիտոյքներն ալ՝ որպէս զի մեր անգրագարձութեանը չափ դնէ:

ՊՕՂ

Կ'ըսես՝ թէ ստրկով Եւրոպա պաշտօններ ու պատիւներ կը ստացուի. ուրեմն երթամ Պենկալա հարըստնամ, որպէս զի ետքը երթամ Վիրգինեայ հետ կարգուիմ՝ ի Բարիզ: Հապա նաև մտնեմ:

ԾԵՐԸ

Ի՞նչ, կրնամ անոր մայրն ու քուկդ  
Թողուլ :

ՊՕՂ

Դու էիր ինձի խրատ առուղն որ Հընդ-  
կաստան երթամ :

ԾԵՐԸ

Վերդինի այն ժամանակն հոս էր • բայց  
հիմա դու ես միայն քու մօրդ և թէ անոր  
մօրը նեցուկը :

ՊՕՂ

Վերդինի անոնց բարեք կ'ընէ իր հա-  
րուստ ազգականին ձեռօքը :

ԾԵՐԸ

Հարուստները բարիք չեն ըներ, բայց միայն անոնց՝ որ աշխարհիս մէջ պատիւ կ'ընեն իրենց: Տըլագուր տիկինէն աւելի խղճալու ազգականներ ունին, որոնք օգնութիւն մը չտեսնելով անոնցմէ՝ իրենց ազատութիւնը կը զոհեն հաց գտնելու համար, ու կեանքերնին վանքերու մէջ փակուած կ'անցընեն:

ՊՅՂ

Աս ի՛նչ երկիր է եղեր Եւրոպա: Ո՛հ, պէտք է որ Վիրգինի դառնայ հոս գայ: Հարուստ ազգական ունենալէն ի՛նչ կ'ելլէ: Ի՛նչպէս գոհ էր այս խրճիթներուս մէջ. ի՛նչպէս գեղեցիկ ու զարգարուն կ'երևար կարմիր թաշկինակով մը, կամ դը՛լ խուն բոլորաիքը խոթած ծաղկըներովը: Դարձիր, Վիրգինի, ճգէ սրալասներդ, մեծութիւնդ, դարձիր աս ժայռերուս

մէջ՝ մեր գոգոյի ծառերուն շուքին տակը :  
Ափսոս, գուցէ դու հիմա թշուառ ես... :  
Աս զուրցելով սկսաւ լալ ու ըսել . Հայր  
խմ, բան մը մի պահէր ինձմէ . Թէ որ չես  
կրնար ըսել ինձի թէ արդեօք կարենամ  
պիտի ստակուիլ Վիրգինեայ հետ, գոնէ  
իմացուր ինձի թէ արդեօք հիմա ալ զիս  
կը սիրէ այն մեծամեծներուն մէջ՝ որ թա-  
գաւորին հետ կը խօսին, ու զինքն ալ  
տեսնելու կ'երթան :

ԾԵՐԸ

Ո՛վ բարեկամ, շատ պատճառներու  
համար անտարակոյս եմ որ զքեզ կը սի-  
րէ, բայց մանաւանդ առաքինի ըլլալուն  
համար : Աս խօսքիս, ուրախութենէն վեր  
ցատքելով՝ վիզս սլուեցաւ :

ՊՕԴ

Բայց իրաւցընէ Եւրոպայի կանայքն  
անհաւատարիմ են, ինչպէս որ կարգա-

լու համար ինձի տուած կատակերգու  
թեանցդ ու գրքերուդ մէջ նկարագրուած  
են :

ԾԵՐԸ

Կանայք անհաւատարիմ են այն եր-  
կիրներուն մէջ, ուր մարդիկ բռնաւոր են.  
որովհետեւ բռնութիւնն ամէն տեղ նեն-  
գութիւն կը ծնանի :

ՊՕԴ

Ի՞նչպէս կրնայ մէկը կանանց վրայ բռ-  
նանալ :

ԾԵՐԸ

Կարգելով զանոնք առանց յօժարու-  
թիւննին հարցընելու, երիտասարդ օրիորդ  
մը ծերու հետ, զգայուն կնիկ մը՝ անզգայ  
մարդու մը հետ :



ՊՕՂ.

Ինչո՞ւ իրարու յարմար եղածները մէկ-  
տեղ չեն կարգեր, երիտասարդն երիտա-  
սարգի և սիրելին սիրուհւոյն հետ :

ԾԵՐԸ

Պատճառն այն է՝ որ Գաղղիա երիտա-  
սարդներուն շատը բաւական հարըստու-  
թիւն չունին կարգուելու, և իրենց ծե-  
րութեան ատեննին կը հարըստնան : Ե-  
րիտասարգութեան ատեն՝ դրացիներնուն  
կանայքը գլխէ կը հանեն. իսկ երբ կը ծե-  
րանան՝ չեն կրնար սիրելի ըլլալ իրենց ա-  
մուսիններուն : Երիտասարգութեան ա-  
տեն իրենք զուրիշները խաբեր են, ծե-  
րութեան ատեննին ալ ուրիշները զի-  
րենք կը խաբեն : Ասիկայ այն ընդհանուր  
արգարութե՛ն փոխադարձ հատուցմունք-  
ներէն մէկն է, որով աշխարհս կը կառա-  
վարուի, ուր չարիք մը՝ միշտ հաւասա-

րակշիւ ունի իրեն ուրիշ չարիք մը : Ասանկ ահա Եւրոպացւոց շատն աս կրկին անկարգութեանց մէջ կ'անցընեն իրենց կեանքը . և այս անկարգութիւններն այնչափ կ'աւելնան ընկերութեան մը մէջ՝ որչափ որ հարստութիւնները քիչ մարդու վրայ կը դիզուին : Տէրութիւն մը պարտիզի կը նմանի, որուն մէջ պզտի ծառերը չեն կրնար մեծնալ՝ թէ որ խիստ մեծերը շուք ձգեն վրանին . բայց այս տարբերութիւնը կայ՝ որ պարտէզ մը կրնայ քանի մը մեծ ծառերով գեղեցկանալ, իսկ տէրութեան մը ծաղկիլը կը կախուի միշտ հպատակներուն շատութենէն ու հաւասարութենէն, չէ թէ սակաւաթիւ հարուստներէ :

ՊՅԳ,

Բայց կարգուելու համար ինչ պէտք է հարուստ ըլլալ :

ԾԵՐԸ

Որպէս զի կեանքերնին լիութեան մէջ  
անցրնեն՝ առանց աշխատելու :

ՊՕԴ

Բայց ի՞նչ պատճառաւ չաշխատին : Ա-  
հա ես ինչպէս որ պէտք է կ'աշխատիմ :

ԾԵՐԸ

Պատճառն այն է՝ որ Եւրոպա ձեռքի  
աշխատութիւնն անպատուութիւն կը սե-  
պուի, ու ծառայական աշխատութիւն կը  
կոչեն զայն : Նաև երկիր բանիլը հոն ա-  
մէն արուեստներէն աւելի անարգուածն  
է : Հոն արուեստաւորն աւելի յարգ ու-  
նի, քան թէ գեղացի մը :

ՊՕԴ

Ի՞նչ, այն արուեստն որ զմարդիկ կը  
կերակրէ՝ անարգութեամբ է Եւրոպա. չեմ  
հասկընար ըսածդ:

ԾԵՐԸ

Ո՛հ, բնութեան մէջ մեծցած մարդուն՝  
անկարելի է հասկընալ ընկերութեան ա-  
պականութիւնը: Կրնայ մէկը ճիշդ կեր-  
պով ըմբռնել բարեկարգութիւնը, բայց  
ոչ երբէք անկարգութիւնը: Գեղեցկու-  
թիւնն, առաքինութիւնն ու երջանկու-  
թիւնը համեմատութեան օրէնք մը ունին.  
Իսկ տգեղութիւնը, մոլութիւնն ու թը-  
շուառութիւնը ամենեւին չունին:

ՊՕԴ

Ուրեմն հարուստ մարդիկ խիստ եր-  
ջանիկ են. բնաւ բանի մը արդեւք չեն

դտներ, և կրնան իրենց սիրած բաներն  
ուզածնուն պէս վայելել:

ԾԵՐԸ

Բայց անոնցմէ շատը ձանձրացած են  
ամէն վայելքներէ, անոր համար իսկ՝ որ  
ամենեւին աշխատանք չեն քաշեր զանոնք  
ստանալու համար: Չէս փորձած որ հան-  
գրստութեան ախորժը՝ յոգնելով ձեռք  
կը բերուի, ուտելու վայելքը՝ անօթու-  
թեամբ, խմելունը՝ ծարաւով. այսպէս  
սիրելու և սիրուելու հաճոյքն ալ ուրիշ  
բանով չստացուիր՝ բայց եթէ անբաւ մա-  
հացուցմունքներով ու զրկումներով: Ճո-  
խութիւն կը զրկէ հարուստներն այս ամէն  
վայելքներէս, պէտք ունենալնէն առաջ  
պատրաստելով զանոնք: Ո՛ւր թողունք  
իրենց ձանձրութիւնն՝ որ յղփութենէն  
կը հետևի, ու իրենց հպարտութիւնն՝ որ  
ճոխութենէ առաջ կու գայ. պզտի զրր-  
կում մըն ալ զիրենք կը նեղէ, նոյն իսկ

այն ժամանակն որ մեծագոյն վայելքները  
չեն քաղցրանար իրենց : Հազար վարդի  
անուշահոտութիւնը վայրկեան մը միայն  
ախորժեւի կու գայ . բայց անոնց փուշերէն  
մէկ հատին տուած ցաւը՝ խայթուածքէն  
շատ ատեն ետքն ալ կը սնէ : Հաճոյից  
մէջ ցաւ մը՝ հարուստներու համար ծաղ-  
կանց մէջ գտուած փուշի մը կը նմանի .  
ընդ հակառակն վիշտերու մէջ հաճոյք  
մը՝ աղքատաց համար փուշերու մէջ ծա-  
ղիկ մըն է , անոր համար շատ ախորժ  
կ'առնեն անկէց : Ամենայն սպաւորու-  
թիւն կ'աւելնայ իրեն ներհակէն , որով-  
հետեւ բնութիւնն ամէն բան հաւասարա-  
կշիւ ըրած է : Աղէկ մտածելու որ ըլլաս ,  
ո՞ր վիճակն աւելի կ'ընտրես . գրեթէ ամե-  
նեկն յուսալու բան մը չունենալ ու ա-  
մէն բանէ վախնալ , թէ չէ՝ գրեթէ վախ-  
նալու բան մը չունենալ և ամէն բան յու-  
սալ : Առջի վիճակը ճոխերունք է , իսկ  
երկրորդն՝ աղքատաց : Բայց այս երկու  
ծայրերն ալ հաւասարապէս անտանելի  
են այն մարդոց համար , որոնց երջանկու-



Թիւնը միջակուծեան ու առաքինուծեան  
վրայ հաստատուած է :

ՊՅԴ,

Ի՞նչ կ'իմանաս առաքինուծիւն ըսե-  
լով :

ԾԵՐԸ

Որդեակ, դու որ աշխատանքովդ ծը-  
նողքդ կը հոգաս, հարկ չունիս որ քեզի  
ստորագրեմ՝ զանիկայ : Առաքինուծիւնը  
ջանք մըն է՝ որով մենք զմեզ կը բռնա-  
դատենք՝ ուրիշի օգտին համար, միայն  
Աստուծոյ հաճոյանալու գիտմամբ :

ՊՅԵ,

Ո՛հ, ի՞նչպէս ուրեմն առաքինի է Վեր-  
գինի : Առաքինուծեան համար է՝ որ  
հարուստ ըլլալ ուզեց, որպէս զի բարիք  
ընէ : Առաքինուծեան համար է՝ որ այս

կղզիէս ելաւ գնաց • նոյն առաքինութիւնը  
ղինքը դարձեալ հոս սլիտի բերէ » :

Վիրգիլնեայ մօտաւոր դարձին յոյսը  
միտքը գալով, պատանւոյն երևակայու-  
թիւնը բորբոքեցաւ, ու բոլոր կասկածա-  
լից մտմտութիւնները փարատեցան • կ'ըսէր  
թէ Վիրգիլնի անոր համար թուղթ չէր  
գրեր, որովհետև դառնալու վրայ էր • և թէ  
խիստ քիչ ատեն պէտք էր յաջող քա-  
միով մը Եւրոսպայէն հոս գալու : Ար համ-  
րէր այն նաւերն որ այս չորս հազար հինգ  
հարիւր փարոսախ հեռաւորութեամբ ճամ-  
բան ըրեր էին իրեք ամիս չտեսած : Ըստ  
իր կարծեացը՝ Վիրգիլնեայ մտած նաւն  
ալ երկու ամսէն աւելի չէր կրնար ուշա-  
նալ, արգի նաւ շինողները շատ վարպետ,  
ու նաւաստիներն ալ շատ հմուտ ըլլալով :  
Ար խօսէր իր զՎիրգիլնի ընդունելու պա-  
տրաստութիւններուն, շինելու բնակարա-  
նին, և այն զբօսանքներուն ու զարմանա-  
լի բաներուն վրայ՝ որ ամէն օր անոր հա-  
մար սլիտի ընէր՝ երբոր իր կիկնն ըլլար...

Այս մտածմունքը կը յափշտակէր զինքը : « Հայր իմ, կ'ըսէր ինծի, ա՛յլ անկէ ետքը բան մը ընելու չես, բայց եթէ քու հաճոյիցդ համար : Ախրգինի հարուստ ըլլալով շատ գերիներ կ'ուսնենանք, որ մեզի համար կ'աշխատին՝ դու միշտ հետերնիս պիտի ըլլաս՝ զբօսանքէ ու զուարճութենէ ուրիշ հոգ մը չունենալով. » . և ուրախութենէն ինքիրմէն դուրս ելած, կ'երթար իր սրտին ցնծութեանը մասնակից ընելու իր ընտանիքն ալ :

Քիչ ատենուան մէջ մեծ երկիւղներ կը յաջորդեն մեծ յոյսերու . սասանկ ուժգին կիրքերը միշտ մարդու հոգին հակառակ ծայրերը կը ձգեն : Շատ հեղանմիջապէս երկրորդ օրը Պօղ երեսը կախած զիս տեսնելու կու գար, ու կ'ըսէր . « Ախրգինի գիր չգրեր ինծի . թէ որ Եւրոպայէն ելած ըլլար, գալը կ'իմացընէր ինծի . ա՛հ, կարծեմ իր վրայ ելած խօսքերը շիտակ պիտի ըլլան, անշուշտ անոր հօրաքոյրը զինքը մեծատան մը չես կարգած է : Հարստութեան փափաքը

զինքը մոլորացուցած է, ինչպէս շատերը :  
Այն գրքերուն մէջ՝ ուր խիստ գեղեցիկ  
նկարուած են կանայք, առաքինութիւնը՝  
վիպասանութեան նիւթ մըն է միայն : Թէ  
որ Ալիբաբայի առաքինի ըլլար, իր և իմ  
մայրս չէր թողուր ու երթար : Ես կեանքս  
կ'անցընեմ իր վրայ մտածելով, իսկ ինքը  
զիս կը մոռնայ • ես կը վշտանամ, ու ինքը  
կը զբօսնու : Ա՛հ, այս մտածմունքս կը  
յուսահատցընէ զիս • ամէն աշխատու-  
թիւն ձանձրալի կու գայ ինծի, որ և իցէ  
ընկերութենէ կը նեղիմ : Աստուած տար  
որ Հնդկաստան պատերազմ բացուէր,  
կ'երթայի հոն մեռնելու :

— Որդեակ իմ, պատասխանեցի, այն  
կտրճութիւնն որ զմեզ մահուան գիրկը  
կը նետէ, անցաւոր կտրճութիւն է • շատ  
հեղ մարդկանց սնտոի ծախահարութիւն  
ներէն կը գրգռուի : Ուրիշ տեսակ կտր-  
ճութիւն մը կայ, որ աւելի սակաւագիւտ  
և աւելի հարկաւոր է, և որով կը տանինք  
մեր կենաց ձախորդութիւններուն առանց  
վկայի եւ առանց գովեստի • և ասիկայ է

համբերութիւնն, որ չէ թէ ուրիշի կարծիքին կամ մեր կրից դրդմանը վրայ հաստատուած է, հասպա Աստուծոյ կամացը վրայ: Համբերութիւնն առաքինութեան կտրճութիւնն է:

— Ա՛հ, կանչեց Պօղ, ուրեմն ամենեկին առաքինութիւն չունիմ: Ամէն բան կը տան ջէ ու կը յուսահատցնէ զիս:— Միշտ հաւասար, հաստատուն ու անփոփոխ առաքինի ըլլալը մարդուս տրուած չէ, կըրկնեցի իրեն: Այնչափ տեսակ կըքերէ ալեկոծեալ ըլլալով, խելքերնիս կը շփոթի ու կը մթըննայ. սակայն կան լսպտերներ՝ որոնցմէ կրնանք վառել անոր ջահը. և ասոնք գիտութիւնքն են:

Գիտութիւնքն, որգեակ իմ, երկնային օգնութիւն մըն են. այն իմաստութեան ճառագայթներն են՝ որ զաշխարհս կը կառավարէ, զորոնք մարդս երկնային ճարտարութեամբ մը շնչեալ՝ կրցաւ երկրիս վրայ հաստատել: Արևուն ճառագայթներուն նման, կը լուսաւորեն՝ կը զուարթացընեն՝ կը տաքցընեն: Գիտութիւնք

ասաուածային հօւր մըն են. հրոյ պէս բոլոր բնութիւնը մեր պիտոյիցը կը ծառայեցընեն: Անոնց ձեռքով աշխարհիս վրայի եղած բաները, տեղերը, մարդիկներն ու ժամանակները մեր քովը կը ժողվուին: Անոնք են որ զմեզ մարդկային կէնաց օրէնքներուն ճամբան կը դարձընեն, կիրքերնիս կը սանձեն, մոլութիւննիս կը զսպեն, բարեգործ մարդկանց երևելի օրինակներն անդադար պատմելով և անոնց յարգոյ կերպարանքը միշտ մեր աջքին առջև նկարելով զմեզ առաքինութեան կը յորդորեն: Երկնային հոգիներ են որ երկրիս վրայ կ'իջնեն մարդկանց վիշտերը սփոփելու համար: Այն երևելի մատենագիրները, զորս անոնք կը վառեն, միշտ երեցած են ընկերութեան խիստ անտանեղի եղած ժամանակներն, որ է բարբարոսութեան ու ապականութեան ատենները: Որդեակ, քեզմէ շատ աւելի թշուառ մարդիկներ՝ գիտութիւններով մխիթարուած են. ինչպէս Քսենոփոն, որ քշուեցաւ իր հայրենիքէն՝ տասը հա-



զար յոյն հոն դարձընելէն ետև • Սկիւ  
սկիոն Ախրիկեցին, որ Հռոմայեցւոց զըր  
պարտութիւններէն ընկճեր էր • Լու  
կուլլոս՝ անոնց չարանիւթ հնարքներէն,  
Գաղինա՝ արքունեաց ասերախտութե  
նէն : Յոյնք՝ որ այնչափ ճարտարամիտ  
էին, գիտութեանց վերատեսուչ Մուսա  
ներուն իւրաքանչիւրին բաժներ էին մեր  
իմացականութեան մէյմէկ մասը կառա  
վարելու համար : Ուրեմն պէտք է որ կիր  
քերնիս իրենց ձեռքը տանք՝ որ ուղղեն և  
լուծ ու սանձ դնեն անոնց : Մուսայք՝  
մեր հոգւոյն կարողութեանցը վրայ նոյն  
պաշտօնը պիտի կատարեն, ինչ որ ժա  
մերն՝ որոնք կը լծէին ու կը վարէին Ա  
րեգական ձիերը :

Կարգա ուրեմն, որդեակ իմ : Իմաս  
տուններն՝ որ մեզմէ առաջ մատենագրած  
են՝ մեր թշուառութեան ճանապարհին  
մէջ նասրնթաց ճամբորդներն են, որոնք  
ձեռուընին կ'երկընցընեն մեզի ու կը հրա  
ւիրեն որ իրենց ընկերութեանը միա  
նանք, երբ ամենայն ինչ զմեզ երեսէ կը

Թողու . ընտիր գիրքը , ընտիր բարեկամ մըն է :

— Ա՛հ , կը կանչէր Պօլ , Ա իրգինեայ հոս եղած ժամանակն՝ ես հարկաւորու թիւն չունէի կարգալ սորվելու : Ինքն ալ ինծի պէս տգէտ էր . բայց երբ ինծի կը նայէր բարեկամ կոչելով , անկարելի էր որ նոյն միջոցին տրամուլթիւն տիրէր վըրաս :

— Յիրաւի , կ'ըսէի իրեն , չկայ բարեկամ մը այնպէս ախորժեղի , ինչպէս սիրուհի մը . բաց ասկէ , կնկան վըայ նուրբ զուարթութիւն մը կայ՝ որ մարդուս տրամուլթիւնը կը հալածէ : Իր ազուրու թիւնը կը ցրուէ մեր սև մտմտութները . երեսին վըայ նկարուած է անոյշ գեղեցկութիւն ու մտերմութիւն . ո՞ր ուրախութիւն աւելի չջատնար անոր ուրախութեամբը . ո՞ր կնճաւած ճակատը չտկուիր անոր ժպտելովը . ո՞ր բարկութիւն դէմ կը կենայ անոր արտասուացը : Ա իրգինի քեզմէ աւելի իմաստասիրութեամբ ճոխացեալ պիտի դառնայ հոս : Շատ պիտի

զարմանայ տեսնելով որ սարտէզը բոլորովին շտկուած է, Վիրգինի՛ որ ուրիշ բան չմտածեր, բայց եթէ զայն զարդարել, թէ և իր ազգականէն ներուծիւն կը քաշէ, և իր ու քու մօրմէդ հեռու մնայած է » :

Վիրգինեայ մօտաւոր զարձը մտմտալով Պօղ, նորէն սիրտ կ'առնէր ու իր գիւղական զբաղմունքներուն հետ կ'ըլար : Իր այնչափ վշտացը մէջ՝ երջանիկ էր, աշխատանքին այնպիսի նպատակ մը սահմանելով որ իր կրիցն սփոփանք էր :

Առաւօտ մը արշալուսոյն ատենը ( որ էր 1744ին դեկտեմբերի 24ին ) Պօղ քունէն որ ելաւ, ճերմակ դրօշակ մը տեսաւ Գիւտ Բարեկամութեան ըսուած լերան վրայ կանգնած : Այս դրօշակը իմաց կուտար թէ ծովուն վրայ նաւ մը կը տեսուի : Պօղ քաղաք վազեց տեղեկանալու թէ արդեօք լուր մը կը բերէր Վիրգինեայ վրայօքը : Հոն սպասեց նաւահան գըստի վերատեսչին դառնալուն, որ ըստ սովորութեան նաւը քննելու դացեր էր :

Այս մարդս իրիկուան դէմ եկաւ . քաղաքապետին խմացուց թէ երեցած նաւը Սէն-Ճէրսի կ'ըսուէր, եօթը հարիւր տակառաչափ տանող . նաւապետին անունը Պ. Օպէն, և թէ չորս փարսախ հեռուն էր, ու թէ որ հովը յաջող ըլլար, երկրորդ օրը կէսօրուընէ ետքը երկաթ պիտի նետէր Բոր-Լուի : Աերատեսուչը յանձնեց քաղաքապետին ձեռքն այս նաւուն Գաղղիայէն բերած թղթերը, որոնց մէջը մէկ հատ մըն ալ Տըլադուր տիկնոջ համար կար Ա իրգինեայ գրովը : Պօղ մէկէն յափըշաակեց զայն, պազաւ ուրախութիւն, դրաւ ծոցն՝ ու աուն վաղեց : Հեռուանց տեսածին պէս իր ընտանիքն՝ որ կը սպասէին իրեն հրաժեշտի ժայսին վրայ, մէկէն նամակը դէպ 'ի վեր վերցուց օդուն մէջ առանց կարենալու խօսիլ . և խկոյն ամէնքն ալ Տըլադուր տիկնոջ անակը ժողվուեցան՝ թուղթը մտիկ ընելու համար : Ա իրգինի կը գրէր մօրը թէ շատ բան քաշեր էր իր մեծ հօրաքեռը ձեռքէն, որ զինքն ահամայ կարգել ուղեր էր, ետքը

ժառանգութենէն զրկելով՝ ճամբայ դրեր էր այնպիսի ժամանակ մը, որ անկարելի էր Գաղղիոյ Կղզին հասնիլ՝ բայց եթէ փութորիկներու եղանակին մէջ. և թէ պարսպ տեղ ջանացեր էր անոր միտքը փխելու, իմացընելով իրեն թէ ինքը մօրմէն կը կախուէր և առջևը դնելով մանկական հասակին վարժութենէն ստացած սէրը. թէ անմիտ աղջիկ կը կոչէր զինքը, վկայասանութեանց ընթերցմունքէն աւրուած. թէ հիմա միայն իր սիրելի ընտանիքը տեսնելու ու գրկելու կը փափաքէր, և թէ այս եռանդուն յօժարութիւնը նաև նոյն օրը կը կատարէր, թէ որ նաւապետը հրաման տուած ըլլար իրեն՝ վերատեսչին մահուկովը ցամաք ելլել. բայց չէր թողուցած որ երթայ, ցամաքին հեռւորութեանն՝ ու ծովուն համար, որ դէպ ՚ի բացը կը շարժէր, թէպէտ հով չկար:

Հազիւ թէ թուղթը կարգացուեցաւ, բոլոր տնեցիք ուրախութեամբ լցուած՝ սկսան կանչել. « Վիրգիլինի եկաւ »: Տէր և ծառայ, ամէնքն ալ իրարու պլլուէ.

ցան: Տըլադուր տիկինն ըսաւ Պօղի. « Որ  
դեակ իմ, գնա աւետելու մեր դրացւոյն  
Վիրգինեայ դալուստը »: Մէկէն Դոմի-  
նիկոսը ջահ մը վառեց, և Պօղն ու անիկայ  
ճամբայ ելան իմ բնակարանս գալու:

Ժամն երեկոյեան տասը կար. կան-  
թեղս նոր մարած ու անկողին մտած էի,  
մէյ մ'ալ խրճիթիս ցցապատ պատնէշին  
ծակերէն ըյս մը տեսայ անտառին մէջ:  
Քիչ մը ետքը Պօղի ձայնն առի՝ որ զիս  
կը կանչէր. մէկէն ոտք ելայ, ու հազիւ  
թէ հագուեր էի, Պօղ ինքիրմէն դուրս  
ելած ու հնալով վիզս պլուեցաւ ու ը-  
սաւ. « Երթանք, երթանք, Վիրգինի ե-  
կաւ. երթանք նաւահանգիստը, վաղը առ-  
տու կանուխ նաւը հոն երկաթ պիտի նե-  
տէ »:

Նոյն միջոցին ճամբայ ելանք, ու երբ  
Երկայն լերան անտառներէն կ'անցնէինք,  
և այն ճամբուն վրան էինք՝ որ Բամբը-  
մուսի նաւահանգիստը կը տանի, մէյ  
մ'ալ ետեւէս մարդու մը օտնաձայն լսեցի.  
սև հնգիկ մը արտօրալով կու գար: Եր-



բոր հասաւ մեզի, հարցուցի թէ ուսկից  
կու գայ և ո՛ւր կ'երթայ ասանկ արտորա-  
նօք: Պատասխանեց. « Կղզւոյս Բուարը-  
տ'Օր ըսուած թաղէն կու գամ. զիս նա-  
ւահանգիստը կը խրկեն՝ իմացընելու հա-  
մար քաղաքապետին՝ որ գաղղիացի նաւ  
մը Ամպրը կղզւոյն առջև երկաթ նետած  
է, և թնդանօթ կը պարպէ՝ օգնութիւն  
խնդրելու համար. վասն զի ծովը շատ  
դէշ է »: Այս մարդս այսպէս զուրցելէն  
վերջը՝ փութաց շարունակելու իր ճամ-  
բան:

Ան ատեն դարձայ ըսի Պօղի. « Երթանք  
Բուարը-տ'Օր թաղը Ախրպինեայ ընդ  
առաջ. միայն իրեք փարսախ տեղ է ասկէ  
հոն »: Խղզուկ տաքութիւն մը կը տիրէր.  
լուսինն ելած էր, իրեք մեծ ու սև բա-  
կերով պատած: Երկինքը ահաւոր մութ  
էր. փայլակներուն ստէպ ստէպ հանած  
լուսովը կը տեսնուէին՝ քիչ բարձրու-  
թեամբ երկայնաձիգ, թանձր ու թուխ  
ամպեր, որոնք կղզւոյն դէպ 'ի մէջտեղը  
կը ժողվուէին ու ծովու կողմէն սաստիկ

արագութեամբ կու գային, թէպէտ ամէն  
նեկն հով չկար ցամաքին վրայ : Ճամբան  
երթալու ատեն որոտման նման ձայն մը  
լսեցինք . բայց ազէկ մը մտիկ ընելով հաս-  
կըցանք թնդանօթի ձայնին արձագանգն  
ըլլալը : Այս հեռաւոր ձայները միանա-  
լով մըրկայոյզ երկնքի մը տեսարանին  
հետ, զիս դող հանեցին . ալ չէի կրնար  
տարակոյս ունենալ՝ թէ նաւի մը ընկըղ-  
մելու վտանգին նշաններն ըլլան ասոնք :  
Կէս ժամ ետքը թնդանօթի ձայնը դադրե-  
ցաւ . այս լռութիւնն ինծի աւելի ահա-  
ւոր երեցաւ, քան թէ այն տխուր ձայնն  
որ անկէ առաջ կը լսուէր :

Արտորալով առաջ կ'երթայինք առանց  
բան մը խօսելու, ու առանց համարձա-  
կելու իրարու հաղորդել սրտի տագնապ-  
նիս : Կէս դիշերուն արիւն քրտինքի մէջ՝  
հասանք ծովեզերքը Բուտրը-տ'Օր թա-  
ղը : Ալիքներն ահռելի աղաղակով մը հոն  
զարնուելով կը փշրէին և ժայռերն ու ա-  
փուհքը ձիւնափայլ փրփուրներով ու  
լուսաւոր կայծերով կը ծածկէին : Թէ-

պէտ մութ էր, սակայն փոսփորականութեան լուսովը կրցանք տեսնել ձկնորսաց մակոյկներն՝ որ ծովէն խել մը հեռու աւազին վրայ քաշեր էին :

Անկէ քիչ մը անդին՝ անտառին բերանը կրակ վառած տեսանք, որուն բոլոր տիբը տեղացոցմէ շատը ժողովուեր նստեր էին : Գացինք հոն հանդէլու, սպասելով օրուան լուսնալուսն : Երբ կրակին քով նստած էինք, բնակիչներէն մէկը պատմեց մեզի՝ թէ կէսօրուընէ ետքը նաև մը տեսեր էր ծովուն բացը, զոր յորձանքները դէպ ՚ի կղզին կը մղէին, բայց դիշերը վրայ հասնելով աչքէ ծածկուեր էր, և թէ արևուն մանեղն երկու ժամ ետքը՝ լսեր էր թնդանօթին ձայնն որ օգնութեան կը կանչէր : Սակայն ծովը այնպէս սաստիկ էր՝ որ չէին կրցած նաևակ մը իջեցրնել ու քովն երթալ. անկէ ետքն անմիջապէս իրեն երեցեր էր որ նաևուն լապտերները վառած էին : Այս պատճառաւ կը վախնար որ նաևը ծովեզերքին այսչափ մօտենալովը՝ չըլլայ թէ ցամաքին ու Ամ

պրը կղզեկին մէջէն անցած ըլլայ՝ Գօէն  
տը Միր կարծելով զայն, որուն մօտէն  
կ'անցնին Բօր-Նուի եկող նաւերը : « Թէ  
որ այս այսպէս է, զոր չեմ կրնար լաւ մը  
հաստատել, կ'ըսէր, այս նաւը խիստ մեծ  
վտանգի մէջ պիտի ըլլայ » : Ուրիշ մարդ  
մըն ալ խօսիլ սկսաւ, ու ըսաւ մեզի թէ  
նաւը շատ անգամ անցեր էր Ամպրը կըղ-  
զւոյն ու ցամաքին մէջտեղն եղած նե-  
ղուցէն . թէ չափեր էր խորութիւնը, և  
թէ այն տեղը նաւը կեցընելու ու եր-  
կաթ նետելու շատ յարմար էր, և նա-  
ւը հոն կատարեալ ապահովութեան մէջ  
է՛ իբր թէ լաւագոյն նաւահանգստին մէջ  
ըլլար : « Բոլոր հարստութիւնս կրնամ  
մէջը դնել, կ'ըսէր, ու այնպէս հան-  
գիստ քնանալ հոն՝ ինչպէս թէ ցա-  
մաքն ըլլայի » : Մէկ ուրիշ մըն ալ ըսաւ  
թէ անկարելի է որ աս նաւը կրցած ըլ-  
լայ մտնել նեղուցին մէջ, ուր հազիւ մա-  
կոյկները կրնային նաւարկել : Հաստա-  
տեց թէ տեսեր էր անոր երկաթ նետելը  
Ամպրը կղզեկէն անդին, անանկ որ եթէ

առաւօտը հով ելլէր, կրնար ուղածին  
պէս բացը զարնել կամ նաւահանգիստը  
մտնել: Ուրիշներն ալ այլ և այլ բաներ  
կ'ըսէին:

Երբ այսպէս մէջերնին կը վիճաբանէին՝  
ըստ սովորութեան պարսպորդ գրէօնե-  
րու, Պօղ և ես խոր լուութեան մէջ էինք:  
Կեցանք հոն ինչուան առաւօտեան մթըն-  
շաղ լուսին. բայց երկինքը մութ ըլլա-  
լուն՝ ամենևին բան մը չէր տեսնուեր մի-  
գապառ ծովուն վրայ. միայն բացը թուխ  
ամպի նման բան մը կ'երևար, որուն հա-  
մար ըսին մեզի թէ Ամպըը կղզին էր, ցա-  
մաքէն և ոչ միոն մը հեռու: Այս խա-  
ւարային լուսոյն մէջ ուրիշ բան չէր տես-  
նուեր, բայց միայն մեր կեցած ափուն-  
քին ծայրն ու կղզւոյն ներսերն եղած  
քանի մը լեռներու սուր կտաարները, ու-  
րոնք ատեն ատեն կը տեսնուէին իրենց  
բոլորաիքը պտըտող ամպերուն մէջէն:

Առաւօտեան ժամը եօթնին ատենը՝ ան-  
տառներու մէջէն թմբուկի ձայներ ըսե-  
ցինք. Պ. Տըլասպուրտոնէ քաղաքապետը

ձիով կու գար, ետեէն ալ խումբ մը հրացանաւոր զինուորներ, և խել մը ժողովուրդ ու խափշկներ: Շարեց զօրքը ծով եզերքին վրայ, ու հրամայեց որ ամէնքը մէկէն պարպեն հրացաննին: Հազիւ թէ ըմնցուցին այս գործողութիւնը, մէյ մ'ալ տեսանք ծովուն վրայ լոյս մը ու անմիջապէս ետեէն թնդանօթի մը պարպուիլը: Հասկըցանք թէ նաւը մեզմէ քիչ հեռու էր ու ամէնքս ալ վազեցինք գէպ 'ի այն կողմն՝ ուսկից նշան կը արուէր. ան ատեն մշուշին մէջէն տեսանք մեծ նաւու մը ողնափայտն ու կայմերը: Մ. յնքան մօտ էինք, որ ալիքներուն աղաղակին մէջէն լսեցինք նաւապետին սուլելն, որ հրամաններ կու տար, ու նաւաստիներուն ձայնն՝ որոնք իրեք հեղ աղաղակեցին *Կէրէ արտա*, ինչպէս որ սովորութիւնն է Գաղղիացւոց յետին վտանգներու, ինչպէս նաև մեծամեծ ուրախութեց մէջ. ասով իբրև թէ վտանգներու մէջ թագաւորնին իրենց օգնութեան կը կանչեն, կամ իբրև թէ այն միջոցին վկայել



կ'ուղեն թէ պատրաստ են իրեն համար մեռնելու :

Սէն-Ժէրան նաւը տեսնելով որ իրեն օգնութեան հասնելու եկեր եկք, ամէն իրեք վայրկենին թնդանօթ մը կը սլար-պէր : Պ . Տըլապուրտոնէ աւազին վրայ տեղ տեղ կրակ վառել տուաւ , ու մօտերն եղած բոլոր բնակիչներուն մարդ խրկեց՝ որ երթան ուտելիք , տախտակ , չուան ու դատարկ տակաւներ բերեն : Նայիս անոնք մէկէն բազմութեամբ խուտրը-տ'Օրի կողմերէն , Ֆլաք թաղէն ու Ռամբար գետէն եկան իրենց հնգիկներուն հետ՝ որ սրաշար ու նաւու հանդերձանքներ կը բերէին : Այս բնակչաց ծերագոյններէն մէկը մօտեցաւ քաղաքապետին ու ըսաւ . « Պարոն , բոլոր գիշերը լերան մէջ խորունկ ձայներ լսուեցան . անտառներուն մէջ ծառերուն տերևներն առանց հովի կը շարժին , ծովային թռուչունները ցամաքը կու գան ասպաւինելու . անշուշտ բոլոր այս նշաններս փոթորիկ մը կը ցուցնեն : — Քաջ է , բարեկամք ,

սլատասխանեց քաղաքապետը , մէնք սլատրաստուած ենք անոր , և անտարակոյս նաւն ալ սլատրաստուած սխտի ըլլայ » :

Եւ իրօք՝ ամէն բան մօտաւոր փոթորիկ մը կը գուշակէր . երկնից գապածն եղած ամպերուն կեդրոնը ահաւոր էր մըթուծեամբ և եզերքը սղնձագոյն . օդը կը հնչէր յարգափետրոց , ծաղրիկներու և ջրահերձներու ու տեսակ տեսակ ծովային թռչնոց կարկաչներէն , որոնք հորիզոնին ամէն կողմէն կու գային կղզւոյն մէջ ասպատանարան մը գանելու , թէ և մթնոլորտը մութ էր :

Առաւօտեան ժամն իննին տակնը՝ ծովու կողմէն ահաւոր ձայներ լսուեցան , իբրև թէ ջրի հեղեղներ կայծակներու հետ խառն՝ լեռներուն գապածներէն վար թափէին : Ամէնքը կանչեցին . « Ահաւասիկ փոթորիկը » . ու նոյն վայրկենին սոսկալի մըրկայոյզ հով մը փարատեց թանձր մըշուշն որ կը ծածկէր Ամպըրը կղզին և իր նեղուցը : Ան տակն Սէն-Ճէրան նաւն յայտնի երևցաւ . վրան մարդով լեցուած էր ,

առաջաստակալներն ու կայմերը տախտակամածին վրայ իջուցած էին ու դրօշակին ծալքերը կ'իմացընէին մեծ վտանգի մէջ ըլլալնին. չորս հաստ չուան առջևէն, ու մէկ հատ մ'ալ ետևէն կը բռնէին նաւն, որ Ամպրը կղզւոյն ու ցամաքին մէջ տեղն երկաթ նետած էր, ծովուն մէջի ժայռերուն դօտիէն ասդիս՝ որ կը պատէ Գաղղիոյ Վղզին, ուր այնպիսի տեղէ մը անցեր էր, ուսկից ոչ երբէք նաւ մը կրցեր էր անցնիլ իրմէ առաջ: Իր առջևի կողմը ալքններուն տուած էր և բացէն եկող ամէն մէկ ալքններուն նեղուցը մտնելու ատենն՝ առաջքը բոլորովին վեր կ'ելէր, անանկ որ ողնափայտն օդուն մէջ կը տեսնուէր. բայց այս շարժման ատեն ետևի կողմը ալեաց մէջ սաստիկ թաղուելով, աչքէ կը կորսուէր ինչուան ծնօար՝ իբրև թէ ընկողմած ըլլար: Այս դիրքիս մէջ որ հոնն ու ծովը դէպ 'ի ցամաքը կը նետէին զինքը, ոչ կրնար եկած ճամբէն ետ դառնալ, և ոչ ալ չուանները կտրելով սփռնքին վրայ խրիլ, ուսկից կը բաժնէին զին-

քը խորք ժայռուտ : Ամէն մէկ ալիքն որ  
կու գար կը զարնուէր ծովեղերքին՝ մուն-  
չելով առաջ կ'երթար ինչուան խորչե-  
րուն մէջ, ու յիսուն ոտնաչափ հեռաւո-  
րութեամբ խիճեր կը նետեր ցամաքին  
վրայ . ետքը քաշուելու ատենը՝ խել  
մը տեղ ծովեղերքը ցամաք կը գործէր,  
կերկերաձայն ահեղ մանչմամբ մը մէկ-  
տեղ թաւալելով մանր քարերը : Ծովը  
հովէն զայրացած՝ երթալով կ'ուռէր, և  
այս կղզւոյս ու Ամսրը կղզւոյն մէջ տեղն  
եղած բոլոր նեղուցը՝ ճերմակ փրփուրէ  
ընդարձակ ծածկուծի մը կը նմանէր, սև  
ու խորունկ ալիքներու մէջ բացուած :  
Այս փրփուրները խորչերուն մէջ կը  
գիզուէին վեց ոտնաչափ բարձրութենէ  
աւելի, ու հովն անոնց վրայէն սահելով  
ծովեղերքին զառ ՚ի վերին վրայէն կ'առ-  
նէր ու ինչուան կէս փարսախէն աւելի  
հեռու ներսերը կը տանէր : Անոնց ճեր-  
մակ ու անթիւ ցայտերը տեսնելուգ՝ որ  
հորիզոնաբար կը մղուէին ինչուան լեռ-  
ներուն ստորոտը, կ'ըսէիր թէ ծովէ ե-

լած ձիւն է: Հորիզոնը երկար փոթորկի մը նշանները կը ցուցնէր. ծովը երկնքին հետ խառնուած կ'երևար. անգաղար այլանդակ ձևերով ամպեր կ'երևային, որոնք թռչնոյ արագութեամբ կ'անցնէին գլխնուս վրայէն, իսկ ուրիշ ամպեր ալ մեծամեծ ժայռերու պէս անշարժ կը տեսնուէին: Ամենևին երկնքին կապոյտը չէր երևար. մթնշաղ ու մոխրագոյն լոյս մը միայն կը լուսաւորէր երկիրը, ծովն ու երկնքը:

Ինչպէս որ կը վախնայինք՝ պատահեցաւ. նաևուն ճօճալու ատենն իր առջևի կողմի չուանները բրգան. և որովհետև աչմէկ չուանովմը միայն կապուած էր, ուստի ծովեզերքէն վաթսուն գրկաջափ հեռու ժայռերուն վրայ գնաց ինկաւ: Աս որ տեսանք՝ ամէնքս միաբերան տխուր աղաղակաւ գոչեցինք: Պօղ ծովը պիտի նետուէր. բայց ես թևէն բռնելով, « Որգեակ իմ, ըսի, խղզուի՛ւ կ'ուզես: — Երթամ՝ զան ազատելու, կանչեց, կամ մեռնիմ »: Երբ տեսայ որ յուսահատութեհէն խելքը

Թուուցեր էր, անոր մահուանն առջևն  
առնելու համար՝ Դոմինիկոսն ու ես եր-  
կայն չուան մը կապեցինք անոր գօտիին  
ու բոլոր ուժովնիս բռնեցինք մէկ ծայ-  
րէն: Ան ատեն Պօղ սկսաւ դէպ 'ի Սէ-  
ժերն նաւն երթալ երբեմն լողալով, եր-  
բեմն ցրցուած ժայռերուն վրայէն քալե-  
լով: Երբեմն յոյս կ'առնէր քովը մօտե-  
նալու, որովհետեւ ծովը իր զանազան  
շարժմունքներուն ատենը՝ յանկարծ ետ  
քաշուելով, նաւը գրեթէ ցամաքի վրայ  
կը թողուր, անանկ որ կրնար մարդոտքով  
բոլորաթիբը պտըտիլ. բայց առաւելագոյն  
կատաղութեամբ մը նորէն դառնալով՝ կը  
ծածկէր զայն մեծամեծ ջրեղէն կամար-  
ներով, որոնք վեր կը վերցընէին նաւուն  
առաջը, ու ծովեզերքէն ալ շատ անդին  
կը նեակէին Թշուառ Պօղն, որ սրունքները  
արիւնոտած, կուրծքը վերաւորած, ու  
կէս խղզուածի պէս էր: Հազիւ թէ պա-  
տանին կը զգաստանար, մէկէն ոտք կ'ել-  
լէր ու նոր եռանդով մը կը դառնար դէպ  
'ի նաւն, որ կը սկսէր երկու բացուիլ ծո-



վուն սոսկալի հարուածներէն : Բոլոր նա-  
ւաստիներն յուսահատելով նաւուն խա-  
լըսելուն վրայ, բազմութեամբ ծովը կը  
նետուէին, կայմերու՝ տախտակներու՝  
հաւու վանդակներու՝ ստոլներու ու տա-  
կառներու պլլուած :

Այս ատեն յաւիտենական կսկիծի ար-  
ժանի բան մը աչքերնուս զարկաւ . ման-  
կահասակ օրիորդ մը երեցաւ Սէն-Ճէր-  
մի խելացը վրայ թևերն երկնցուցած դէպ  
'ի անոր, որ այնչափ ջանք կ'ընէր քովը  
մօտենալու : Ասիկայ Վիրգինիին էր, որ  
էր սիրականը՝ ցուցուցած կտրըճութենէն  
ճանչցեր էր : Այս սիրելի աղջիկը տես-  
նելուս, որ ասանկ ահագին վտանգի մը  
մէջ կը գտուէր, կսկիծն ու յուսահա-  
տութիւնը տիրեց վրանիս . իսկ ինքն աղ-  
նուական ու անշփոթ դէմքով մը նշան  
կ'ընէր մեզի ձեռքովն իբր թէ յաւիտե-  
նական հրաժեշտի ողջոյնը տալով մեզի :  
Բոլոր նաւաստիքը ծովը նետուեր էին .  
միայն անոնցմէ մէկը դեռ նաւուն վրան  
էր՝ մերկ ու հերակլեսի պէս կորովի մարդ

մը : Պատկառանքով մտեցաւ Ախրզի-  
նեայ, ու տեսանք որ ոտքը իյնալով կ'ա-  
ղաչէր, ու կը ջանար հագուստները վը-  
րայէն հանել : Բայց անիկայ վսեմու-  
թեամբ վըրնտելով զանիկայ, երեսն ան-  
գին դարձուց : Նոյն ատեն ցամաքն եղող  
մարդիկները միաբերան աղաղակեցին •  
« Ազատէ զան, աղատէ • մի թողուր » :  
Բայց այս միջոցիս ահագին լեռնաձև ա-  
լիք մը Ամսրը կղզւոյն ու ցամաքին մէջ  
տեղը մտաւ, և մանչելով զնայ դէսլ 'ի  
նաւուն վըայ, և իր թուխ կողերովն ու  
փրփրադէղ գաղաթներովը կը սպառնար  
կլէլ զանիկայ : Այս սոսկալի տեսարա-  
նէս վախնալով նաւաստին, մինակ ծովը  
նետուեցաւ • Ախրզինի ալ տեսնելով որ  
ճար չկայ մահուընէ խալըսելու՝ մէկ ձեռ-  
քը զգեստին ու միւս ձեռքը սրտին վըայ  
գրաւ, և անմեղ աչուըները դէսլ 'ի վեր  
վերցընելով հրեշտակի մը կը նմանէր որ  
դէսլ 'ի երկինք թռչելու կը պատրաս-  
տուի :

Ո՛վ օր աղէտալի • ափսո՛ս, ամենայն ինչ

անդունդին մէջ թաղուեցաւ դնաց: Ալ լեքն հոն տեղ եղողներուն մէկ մասը՝ որոնք ՚ի գթոյ շարժեալ ընդ առաջ Վիրգինեայ դացեր էին ծովեզերքին վրայ, խել մը տեղ դէպ ՚ի ցամաքը նետեց, ու նաև այն նաւաստին՝ որ լողալով ազատել ուզեր էր էր զանիկայ: Աս մարդս հազիւ հազ մահուընէ խալըսելով՝ չոգեցաւ աւազին վրայ, ու ըսաւ. « Ո՛վ Աստուած իմ, դու ազատեցիր իմ կեանքս, բայց ես սիրով կու տայի զայն ան արժանաւոր օրիորդին համար՝ որ ամենևին չուզեց ինձի պէս զգեստներն հանել »: Գոմինիկոսն ու ես հանեցինք ալեքներուն մէջէն խեղճ Պօղն՝ որ խելքը դուրսը չէր և բերնէն ու ալանջներէն արիւն կու գար: Քաղաքապետը զան վերաբոյժներուն ձեռքը յանձնեց. իսկ մենք ալ փնտրուել սկսանք ծովափանց վրայ թէ արգեօք ծովը կը բերէ Վիրգինեայ մարմինը: Բայց ինչպէս որ փոթորիկներու ասէն կը պատահի, հովը յանկարծ փոխուեցաւ, ու կսկիծով մը մտածեցինք՝ թէ չկարենանք պիտի այս

դժբարդդ աղջկան նաև Թաղման հանդէսը  
կատարելու : Հեռացանք այս տեղէս սաս-  
տիկ տրտմած , ամէնքս ալ վշտահարեալ  
մէկու մը միայն կորստեանը վրայ , Թէպէտ  
այն նաւակոծութեան մէջ շատ անձինք  
կորսուեր էին . և շատերն ասանկ առաքի-  
նի աղջկան մը աղէտալի վախճանը տես-  
նելով՝ կը տարակուսէին Աստուծոյ նա-  
խախնամութեանը վրայ . որովհետև ա-  
նանկ ահաւոր Թշուառութիւններ կը հան-  
գիւլին անոնց արժանի չեղողներու , որ  
նաև իմաստնոց յոյսը կը խախտի :

Բայց Պօղ , որ զգաստանալ կը սկսէր ,  
մօտ տուն մը տարուած էր , սպասելով  
ինչուան որ իր տունը կարենայ տարուիլ :  
Իսկ ես Դոմինիկոսին հետ ետ դարձայ ,  
որպէս զի Վիրգինեայ մօրն ու անոր բա-  
րեկամուհւոյն կերպով մը իմացընեմ այս  
չարագոյժ փորձանքը : Երբոր Լադանիէ  
գետին հովտին բերանը հասանք , խափ-  
շիկներ ըսին մեզի Թէ ծովը նաւուն խել  
մը կտորուանքները դիմացի ծոցը կը նե-  
տէ : Ուստի հոն իջանք . ու ծովեզերքին

վրայ առջի տեսած բաներէս մէկը Վիր-  
պինեայ մարմինն եղաւ, որ կէս մը աւա-  
զով ծածկուեր էր, այն դիրքով ինչպէս  
որ տեսած էինք ընկղմելու ատենը. դէմ-  
քին գծագրութիւնն ամենևին չէր այլայ-  
լաճ. աչուրները գոց էր, բայց զուար-  
թուութիւնը դեռ ճակատին վրայ կենդանի  
էր. միայն մահուան տժգոյն մանուշակ-  
ներն անոր երեսին վրայ պարկէշտու-  
թեան վարդերուն հետ կը խառնուէին.  
մէկ ձեռքը զգեստներուն վրայ դրեր էր,  
մէկայն՝ որ սրտին վրայ հանգչեցուցած  
էր՝ սաստկապէս գոցուած ու բրտացած  
էր: Բացի զայն բռնութեամբ ու հանեցի  
մէջէն պզտի տուփ մը. բայց ինչպէս զար-  
մացայ երբ տեսայ որ Պօղի կենդանագիրն  
էր, որուն համար խոստացեր էր անոր  
մարդու մը չտալու քանի որ ապրի: Այս  
թշուառ աղջկան հաւատարմութեանն ու  
սիրոյն այս յետին ցոյցը տեսնելով, դառ-  
նապէս լացի: Իսկ Դոմինիկոս կուրծքը  
կը ծեծէր, ու ցաւագին ողբերով օղբ կը  
հնչեցընէր: Տարինք Վիրպինեայ մարմինը

ձկնորսաց խրճիթ մը, ու աղքատ մալա պար կանանց յանձնեցինք, որ խնամով լուացին զայն :

Երբ անոնք այս տխուր պաշտօնը կը կատարէին, մենք դողդըղալով տնակն ելանք • Տըլադուր տիկինն ու Մարգարիտա աղօթքի հետ էին, ու նաւուն վըայով լուր մը առնելու կը սպասէին : Տըլադուր տիկինը զիս տեսածին սէս կանչեց • « Ո՞ւր է աղջիկս, իմ սիրելի աղջիկս, իմ զաւակս » : Լռութենէս ու թափած արցունքներէս ալ չտարակուսելով անոր թշուառութեանը վըայ, յանկարծ շունչը բռնուեցաւ ու ցաւագին տազնապ եկաւ վրան • հառաչանքէ ու հեծկըլտանքէ զատ ուրիշ բան չէր հնչեցըներ իր ձայնը : Իսկ Մարգարիտա ալ աղաղակեց • « Ո՞ւր է որդեակս, չեմ տեսներ իմ զաւակս » ըսելով մէկէն մարեցաւ : Վազեցինք քովն ու խեղքը վրան բերելով ապահովցուցի զինքը թէ Պօլ ողջ էր և թէ քաղաքապետը հրամայեր էր որ զինքը դարմանեն : Զգաստացաւ, բայց կարծես որ ուրիշ



բանի համար չէր, բայց եթէ իր բարեկամութեան վրայ հոգ տանելու համար, որ ստէպ երկայն ատեն կը մնարէր: Տըլադուր տիկինը բոլոր գիշերը այսպիսի դառն տառապանօք անցուց, որոնց երկարութենէն իմացայ՝ թէ ոչ երբէք ուրիշ ցաւ մը հաւասար էր մայրական ցաւոց: Երբոր խելքը վրան կու գար, անշարժ ու ախուր աչօք երկինք կը նայէր. պարսպ տեղ իր բարեկամութիւնն ու ես՝ կը սխմէինք անոր ձեռուրները մեր ձեռացը մէջ. փուճ տեղը քաղցր ու սիրելի անուններով կը կանչէինք զինքը. մեր վաղեմի սիրոյն վկայութիւններուն անզգայ կ'երևար, ու ընկճեալ սրտէն խուլ հեծութիւններ միայն կ'ելլէին:

Աւաւօտը կանուխ բերին Պօղը պատգարակի մը մէջ պառկեցուցած. թէպէտ խելքը վրան եկած էր, բայց խօսք մը չէր կրնար զուրցել: Մօրն ու Տըլադուր տիկնոջ հետ ըրած տեսութիւնն՝ ուսկից առջև բերան կը վախնայի, աւելի աղէկ ազդումն ըրաւ իր վրայ՝ քան թէ ինչուան

ան ատեն իմ ըրած խնամքներս : Միև-  
թարուծեան ճառագայթ մը փայլիլ սկը-  
սաւ այս երկու թշուառ մայրերուն ճակ-  
տին վըայ . երկուքն ալ նստան անոր քո-  
վը , թևերնուն մէջ առին , համբուրեցին ,  
ու արցունքնին՝ որ ինչուան ան ատենը  
խափանուած էր ցաւին սաստկութենէն ,  
սկսաւ աղբիւրի պէս վազել . Պօղ ալ շու-  
տով խառնեց իրեն արցունքն անոնց ար-  
տասուացը հետ : Այս իրեք թշուառնե-  
րուն բնութիւնն այս կերպով սփոփուե-  
լէն ետքը , երկար թմրութիւն մը յաջոր-  
դեց անոնց դառնակակիծ ցաւերուն , որ  
խորունկ քուն մը տուաւ անոնց՝ յիրաւի  
նման մահուան քունին :

Պ . Տըլապուրտոնէն գաղտուկ ինծի  
մարդ խրկեց իմաց տալու համար որ Ա իր-  
գինեայ մարմինն իր հրամանովը քաղաք  
բերուած էր , և թէ անկէ Բամբըլմուսի  
եկեղեցին պիտի տարուէր : Ուստի շու-  
տով Բոր-Ղուի իջայ , ուր ամէն թաղե-  
րու բնակիչներէն ժողովուած էին անոր  
յուզարկաւորութեան հանդիսին գլտ-

նուեղու համար, իբր թէ կղզին զանիկայ  
կորսընցընելովն՝ իր խիստ սիրելի բանը  
կորսընցուցած ըլլար: Նաւահանգստին  
մէջ նաւերն իրենց առագաստակալները  
խաչաձև դրեր էին, դրօշները սուգի ձևով,  
ու ատեն ատեն թնդանօթ կը պարպէին:  
Հանդեսին առջևէն հրազինեալ զինուոր-  
ներ կ'երթային հրացաննին վար ծռած,  
ու իրենց թմբուկներն երկայն քողերով  
ծածկուած՝ սգալի դափիւններ միայն կը  
հնչեցընէին. ցաւը յայտնի նկարուած կը  
տեսնուէր այս կտրիճ պատերազմիկնե-  
րուն դէմքին վրայ, որոնք խիստ շատ ան-  
գամ պատերազմներու մէջ քամահեր  
էին մահն անայլայլ դիմօք: Ութ դեռա-  
հասակ աղջիկներ կղզւոյն երևելիներէն,  
ճերմակներ հագած ու ձեռուրնին արմա-  
ւենուոյ ճիւղեր առած կը տանէին իրենց  
առաքինի ընկերոջը մարմինն, որ ծաղկը-  
ներով ծածկած էր: Դաս մը սզտի տը-  
ղաքներ ետևէն կ'երթային օրհնութեան  
երգեր երգելով: Անոնց ետևէն կու գար  
որչափ որ կղզւոյն բնակչացն ու զինուո-

բականացը մէջ երևելիներ կային : Անկէց  
ետքն ալ քաղաքապետը՝ բովանդակ ժո-  
ղովուրդն ետևը ձգած :

Ասոնք էին ահա տերութեան կողմանէ  
հրամայուած կարգադրութիւնները՝ Վիր-  
գինեայ առաքինութիւնը սլատուելու հա-  
մար : Բայց երբ մեռելը այս լերան ստո-  
րոտն հասաւ, երբ երևցան այն խրճիթ-  
ներն՝ որոնց երջանկութեանն այնչափ ժա-  
մանակ սպառճառ եղեր էր, և զորոնք հի-  
մա իր մահը յուսահատութեամբ կը լե-  
ցնէր, յուզարկաւորութեան հանդէսը  
տակնուվըայ եղաւ, սաղմոսերգութիւն-  
ներն ու շարականները դադրեցան, դաշ-  
տին մէջ հառաչանքէ ու հեծկըլտանքէ  
զատ ուրիշ բան չէր լսուեր : Նոյն միջո-  
ցին բոլոր մերձակայ տնակներէն մանկա-  
հասակ աղջիկներ՝ բազմութեամբ վաղե-  
ցին Վիրգինեայ դագաղին դպցնելու հա-  
մար թաշկինակներ՝ վարդարաններ ու  
ծաղկէ սսակներ, օգնութիւն կանչելով  
զան սրբուհւոյ մը պէս : Մարք՝ կը խըն-  
դրէին Աստուծոյ անոր նման աղջիկ մը

ունենալ, մանչերն՝ անոր պէս հաւատա-  
րիմ սիրուհի մը, աղքատներն՝ անոր պէս  
ողորմած բարեկամ մը, ու գերիններն՝ ա-  
նանկ բարի տիրուհի մը :

Երբոր մարմինը թաղման տեղն հասաւ,  
մատակասպարցի սև աղախիններ ու Մո-  
ղամպիքի սև բնակիչներ՝ բերին դրին ա-  
նոր չորս կողմը կողովներով սլաուղներ, ու  
մօտաւոր ծառերէն կերպասներու կտո-  
րուանք կախեցին, ինչպէս որ իրենց երկիր-  
ներուն սովորութիւնն էր : Պենկալայի և  
Մալապարի եզերքին հնդիկ կնիկները բե-  
րին թուջուններով լեցուն վանդակներ ու  
ազատութիւն տուին անոնց անոր մեռե-  
լին վրայ . որովհետև այսպիսի սիրելի անձի  
մը կորուստը չափէ աւելի ցաւ կու տայ  
ամէն ազգերուն, ու զժբալդ առաքինու-  
թեան զօրութիւնն այնչափ մեծ է՝ որ ա-  
մէն կրօնքէ մարդ կը ժողովէ իր գերեզմա-  
նին բոլորակը :

Հարկ եղաւ պահապաններ դնել գե-  
րեզմանին փոսին քովն, ու հեռացնել  
անկէց աղքատ բնակիչներու քանի մը

աղջիկներն՝ որոնք կ'ուզէին մէջը նետուիլ,  
ըսելով՝ թէ ալ աշխարհիս մէջ մխիթա-  
րուելու յոյս չունէին, և թէ միայն մեռ-  
նիլ կը մնար իրենց այն աղջկան հետ՝ զոր  
իրենց մէկ հասիկ բարերարը կը կոչէին :

Թագեցին զինքը Բամբըլմուսի եկե-  
ղեցոյն քով, անոր արևմտեան կողմը, քա-  
նի մը սլամպուկի ծառերու տակ՝ ուր երբ  
մօրն ու Մարգարիտայի հետ պատարագ  
տեսնելու կու գար՝ կ'ախորժէր հանգչիլ  
ու կը նստէր անոր քովն, որուն որ այն  
ատեն եղբայր կը կոչէր :

Այս տիրական հանդեսէն դառնալու  
ատենը՝ Պ. Տըլապուրտոնէ հոս ելաւ, ի-  
րեն ընկերողներուն բաղմուժեան մէկ  
մասը հետն առած, և Տըլադուր տիկնոջ  
ու անոր բարեկամուհւոյն ձեռքէն եկած  
ամէն օգնութիւնները խոստացաւ : Քիչ  
բայց բարկութեամբ խօսեցաւ անոր անո-  
ղորմ՝ հօրաքէռը վրայ . ու Պօղի մօտենա-  
լով, ըսաւ անոր՝ ինչ որ պատշաճ սեպեց  
զանիկայ մխիթարելու : « Կը վաժառքէի,  
ըսաւ, քու և ընտանեացդ երջանկութեա-



նը. Աստուած ալ վկայ է այդ բանին : Բարեկամ, պէտք է Գաղղիա երթալ. ես հոն քեզի սպաշտօն մը գտնել կու տամ. և քու հեռաւորութեանդ ատեն մօրդ վրայ խընամք կ'ունենամ իբր թէ իմս ըլլար » . ու ձեռքն երկնցուց անոր, բայց Պօղ քաշեց իրենն, ու գլուխը մեկդի դարձուց զանիկայ չտեսնելու համար :

Իսկ ես՝ կեցայ իմ դժբաղդ բարեկամուհիներուս տնակը, ձեռքէս եկած օգնութիւնն ընելու համար թէ անոնց և թէ Պօղի : Իրեք շաբաթէն ետքը Պօղ կարող եղաւ քալելու. բայց քանի որ մարմինն ոյժ կ'աւնէր, իր տրտմութիւնը կարծես թէ կ'աւելնար : Ամէն բանի անտարբեր էր. նայուածքը մարած էր, ու ամենևին չէր պատասխաներ իրեն եղած հարցմունքներուն : Տըլագուր տիկինն, որ սաստիկ ուժէ ինկած էր, ստէպ կ'ըսէր անոր. « Որդեակ իմ, քանի որ զքեզ տեսնեմ, պիտի կարծեմ թէ իմ սիրելի Վիրգինիս կը տեսնեմ » : Վիրգինեայ անունը լսելուն պէս՝ կը դողար ու կը հե-

աանար քովէն , մտիկ չդնելով մօրը ձայնին՝ որ կը կանչէր զանիկայ իր բարեկամուհւոյն քովը : Մինաւոր կ'երթար կը քաշուէր սարտիղին մէջ , ու կը նստէր վիրգինեայ դոգոյի ծառին տակը , աչուրներն անոր աղբւրին վրայ տնկած : Քաղաքապետին վերաբոյժն , որ շատ մեծ խնամք ցուցուցեր էր անոր և այս տիկիններուն վրայ , ըսաւ մեղի՝ թէ այս մեղամաղձտու թեւեւն ազատելու համար զանիկայ , սէտք էր թողուլ որ ուզածն ընէ , ու ամենեկին կամացը դէմ չկենալ , վասն զի ասկէ զատ ուրիշ ճար չկար յաղթելու իր յամառ լուծեանը :

Միտքս դրի անոր խորհրդոյն հետեիլ : Հաղիւ թէ Պօղ քիչ մը ձեռք ձգեց իր առջի ոյժը , անէն հեռացաւ : Ես որովհետև աչքիս առջևէն չէի կորսնցընէր զնորը , սկսայ ետեւէն երթալ , և սրտուիրեցի Դոմինիկոսի որ սաշար առնէ ու հետերնիս գայ : Քանի որ այս լեռնէն վար կ'իջնար սրտանին , այնչափ իր ուրախութիւնն և ոյժը կ'աւելնար : Նախ Բամբը-

մուտի ճամբան բռնեց, ու երբոր եկեղեցւոյն մօտ պամպուկներէ զարգարուած ճամբան հասաւ, մէկէն գնաց շիտակ այն տեղն՝ ուր գետինը նոր փխրած կ'երևար. հոն չոգեցաւ, ու աչուրներն երկինք վերցուցած՝ երկայն ատեն աղօթք ըրաւ : Իր այս գործողութիւնը խելքը գլուխը դառնալուն յոյս աուաւ ինծի . որովհետեւ այս վստահութեան ցոյցն առ Աստուած՝ կ'իմացընէր թէ անոր հոգին կը սկըսէր նորէն 'ի գործ գնել իր բնական պաշտօնները : Դոմինիկոսն ու ես ծունկ չոգեցանք մենք ալ անոր սէս ու աղօթեցինք հետը : Ետքը ոտք ելաւ ու ճամբայ ինկաւ կըղզւոյն գէպ 'ի հիւսիսային կողմը, մեր երեսը ջնայելով : Եւ որովհետեւ ապահով էի որ չէ թէ միայն Աիրգինեայ մարմնոյն ուր տեղ թաղուիլը չէր գիտեր, հասա նաև ծովէն հանելին, ուստի հարցուցի իրեն թէ ինչո՞ւ այս պամպուկի ծառերուն տակն աղօթքի նստաւ : Պատասխանեց .

« Ըստ անգամ հոն եկեր ենք » :

Ըարունակեց իր ճամբան ինչուան ան .

առաին բերանն, ուր գիշերը վրայ հա-  
սաւ : Հոն սախաբեցի զինքն որ հետս քիչ  
մը բան ուտէ . ետքը ծառի մը տակ՝ կա-  
նաչներուն վրայ պառկեցանք : Երկրորդ  
օրը, կարծեցի թէ պիտի ուզէ ետ դառ-  
նալ . և իրօք, նայեցաւ քիչ մը ատեն դաշ-  
տին մէջ Բամբլըմոսի եկեղեցւոյն պամ-  
պուի ծառերով զարդարուած երկայն  
ճամբաներուն վրայ ու շարժմունք մը ը-  
րաւ ետ դառնալու . բայց յանկարծ ան-  
տառին մէջ մտաւ ու միշտ ճամբան գէպ  
'ի հիւսիս առաջ կը տանէր : Հասկըցայ  
միտքը, ու փուճ սեղը ջանացի փոխել :  
Վէսօրուան մօտ հասանք Բուտըր-ա՛Օր  
Թաղը . վազելով իջաւ ծովեղերքն՝ այն  
տեղւոյն դիմացն, ուր ընկղմեր էր Սէ-  
ժէրան նաւը : Երբոր տեսաւ Ամպրը կըզ-  
զին ու անոր նեղուցն՝ որ հայլիս պէս  
հարթ էր ան ատենը, կանչեց . « Վիրգինի,  
ո՞վ սիրելիդ իմ Վիրգինի » . ու մեկէն մա-  
րեցաւ : Գոմինիկոսն ու ես առինք անտա-  
ռին ներսերը տարինք զինքը, ու շատ աշ-  
խատեցանք ինչուան որ զգաստացուցինք :

Երբ խեղքը վրան եկաւ, նորէն ծովե-  
զերքը դառնալ ուզեց • բայց ես աղաչեցի  
իրեն որ այսպիսի դառն յիշատակներով  
չնորոգէ իր և մեր ցաւը • ան ատեն ուրիշ  
ճամբայ մը բռնեց : Վերջապէս ութ օր  
միակերպ գնաց տեսնելու բոլոր այն տե-  
ղերն , ուր իր մանկութեան ընկերոջն հետ  
ատենօք գտնուէր էր : Անցաւ այն ճամ-  
բէն՝ ուսկից որ գացեր էր Վիրգինի՝ Սև  
գետին գերւոյն համար թողութիւն խընդ-  
րելու : Տեսաւ ետքը Երեք Ստեանց գե-  
տին եզերքն՝ ուր քալել չկրնալով նըս-  
տեր էր անիկայ , նաև անտառին այն մասն՝  
ուր մողորեր էր : Այն ամէն տեղերն , որ  
իրեն կը յիշեցընէին իր սիրելւոյն անհան-  
գըստութիւնները՝ խաղերը՝ կերակուրը՝  
բարեգործութիւնը , Երկայն լեռան գե-  
տը , իմ պզտի տունս , մօտաւոր ջրի սա-  
հանքը , անոր տնկած բաբէյի ծառը , այն  
մարդագետիկներն՝ ուր կը սիրէր վաղվը-  
ղել , այն անտառին ճամբու գլուխներն՝  
ուր կ'ախորժէր երգել , հետզհետէ ար-  
ցունք թափել տուին իր աչուրներէն •

նոյն իսկ արձագանքն ալ, որ այնչափ անգամ հնչեր էր անոնց ուրախութեան միաբերան աղաղակները, հիմա միայն այս տխրագին բառերը կը կրկնէր. « Ախր գինի՛, ո՛վ սիրելիդ իմ Ախրգինի »:

Այսպիսի վայրենի ու թափառական կեանք անցընելովն՝ աչուրները խորունկցան, գոյնը դեղընցաւ, ու առողջութիւնը քանի գնաց տկարացաւ: Աղէկ գիտնալով որ վիշտերն իս կրկնապատիկ կ'աւելնայ մեր վայելքներուն յիշատակաւը, և թէ կիրքերն առանձնութեան մէջ կ'աճին, միտքս դրի հեռացընելու իմ թըշուառ բարեկամս ան տեղերէն՝ որ իրեն կը յիշեցընէին ըրած կորուստը, ու զինքը կղզւոյն այնպիսի մէկ կողմը փոխադրելու՝ ուր միտքս ցրուելու շատ բաներ ըլլան: Անոր համար տարի զինքը Ուիլէէմ թաղին բարձր ու բազմամարդ տեղուանքն՝ ուր բնաւ դացած չէր: Երկրագործութիւնն ու առուտուրը՝ կղզւոյս սս մասին մէջ շատ շարժումն ու փոփոխութիւն խոթեր էր: Բազմութիւն ատաղձագոր-



ծաց կային որ ծառոց բուները տաշելով  
գերան կը շինէին, ոմանք ալ կը սղոցէին  
զանոնք տախտակ ձևացընելու համար .  
կառքեր կ'երթային կու գային ճամբանե-  
րուն մէջէն, կովերու ու ձիերու մեծ խում-  
բեր կ'արածուէին ընդարձակ արօտներու  
մէջ, ու դաշտը տեղ տեղ բնակութիւն-  
ներով զարդարուած էր : Գետնին բար-  
ձրութիւնը կ'օգնէր Եւրոպայի զանազան  
տեսակ տնկոց մշակութեանը շատ տե-  
ղուանք յաջողելուն : Ար տեսնուէր աս-  
դիս անդին ցորենի հունձեր գաշտին մէջ,  
էլակներուն անտառաց բացավայրքը ձևա-  
ցուցած գորգերը, ու վարդենիներէ ցան-  
կեր ճամբաներուն երկայնութեան վրայ :  
Օդուն զովութիւնը ջիղերը ձգտելով ճեր-  
մակներուն առողջութեանն ալ աղէկ կ'ը-  
նէր : Այս բարձր տեղուանքներէն որ  
դէպ'ի կղզւոյն մէջտեղը կ'իյնային ու մեծ  
անտառներով սլատած էին, ոչ ծովը կը  
տեսնուէր, ոչ Բոր-Լուի, ոչ Բամբըմու-  
սի եկեղեցին, և ոչ ալ բան մը՝ որ Պօլի  
միտքը կարենար բերել Վիրգինին : Նաև

լեռներն որ Բոր-Նուխին կողմէն այլ և այլ ճիւղեր կ'երևան, Ուխլէէմի դաշտերէն նայելով ուրիշ բան չեն տեսնուիր, բայց եթէ երկայն և ուղղաբերձ բարձրաւան դակ մը, որուն վրայէն կը բարձրանան խել մը երկայն ժայռերէ բուրդեր ամպերով պատած :

Ուստի աս դաշտերը տարի Պօղը • միշտ գործողութիւն մը ընել կու տայի իրեն, հետը քալելով արևուն՝ անձրևին՝ ցորեկն ու գիշերը, կամօք մոլորցընելով զինքն անտառներու, անդաստանաց ու դաշտօրէից մէջ, միտքը ցրուելու համար մարմնոյն աշխատութեամբը, ու մտածմունքները փոխելու համար՝ եղած տեղերնուս ու կորսընցուցած ճամբաներնուս վրայով ունեցած ագիտութեամբը : Բայց սիրահարի մը սիրառ զոր կողմն երթայ՝ կը գրտնէ իր սիրելւոյն յիշատակը : Ոչ գիշերը, ոչ ցորեկը, ոչ առանձնութեան տեղերուն հանդարտութիւնն և ոչ բնակախիտ տեղերու աղաղակը, նաև և ոչ իսկ ժամանակն՝ որ այնչափ յիշատակներ կ'առ-

նէ կը տանի, բոլոր ասոնք չեն կրնար իր միտքն հեռացընել անկէ, մագնիսի դպած սըաքին նման, որ թէ և շարժի, դադրելուն պէս՝ նորէն կը դառնայ դէպ'ի բեւեռն՝ որ իրեն կը քաշէ զանիկայ: Երբոր կը հարցընէի Պօղի Ուիլէէմի դաշտերուն մէջ մօլորած ատենը, թէ « Ո՞ւր երթանք հիմա », դէպ'ի հիւսիս կը դառնար ու կ'ըսէր ինձի. « Ահաւասիկ մեր լեռները, հոն դառնանք »:

Աղէկ հասկըցայ որ անոր միտքը ցրուելու համար բանեցուցած բոլոր միջոցներս անօգուտ էին, և թէ ուրիշ ճամբայ չկար՝ բայց եթէ բուն իր կրիցն հետ պատերազմիլ՝ իմ ակար խելքիս բովանդակ ոյժը թափելով. ուստի պատասխանեցի իրեն. « Այո, ահա այն լեռներն՝ ուր կը բնակէր քու սիրելի Վիրգինիդ, ու ահաւասիկ այն կենդանագիրն՝ որ դու տուած էիր անոր, ու մեռնելու ատենը սրտին վրայ դրեր էր՝ իր յետին իղձերն ալ քեզի նուիրելով »: Այն ատեն ցուցուցի Պօղի պզտի կենդանագիրն՝ որ տուեր էր Վիրգինեայ՝

գողոյի ծառերուն աղբիւրին եղէլքը : Աստեանելուն՝ մահագոյժ ցնծութիւն մը երեցաւ իր աչքերուն մէջ . տենչանօք բռնեց տկար ձեռուըններովն այս կենդանագիրն ու համբուրեց : Ան միջոցին սիրտը ճրղմուեցաւ , ու արցունքները չկրնալով վազել՝ արիւնոտած աչքերուն մէջ մնացին :

Ըսի իրեն . « Որդեակ իմ , մտիկ ըրէ ինձի՝ որ քու բարեկամդ եմ , ինչպէս որ Ա իրգինեայ բարեկամն ալ էի , և քու յոսերուդ միջոց շատ հեղ ջանացի զօրացընել զքեզ այս կենաց յանկարծահաս ձախորդութիւններուն դէմ : Ի՞նչ բանի վրայ այսչափ դառնութեամբ կը սպաս . մի թէ քու թշուառութեանդ վրայ կը կսկըծաս՝ թէ Ա իրգինեայ :

» Թէ որ քու թշուառութեանդ վրայ , յիրաւի խիստ մեծ է այն : Օրիորդաց սառտուականագոյնը կորսընցուցիր , որ կանանց ամենէն դերազանցը կ'ըլլար : Իր օգուտը զոհեր էր քու օգտիդ համար , ու զքեզ մեծութենէ աւելի ընտրեր էր՝ իբրև մի միայն վարձ արժանի իր առաքինու-

Թեանը : Բայց ի՞նչ դիտես թէ ան՝ ուս-  
կից որ կը սպասէիր կատարեալ երջան-  
կու-թիւն մը ունենալ, չէր կրնար ըլլալ  
քեզի համար անբաւ վիշտերու պատճառ  
մը : Աղքատ էր ու ժառանգու-թենէ զըր-  
կուած, ուստի անոր հետ ապրելու հա-  
մար՝ միայն քու աշխատանքովդ կրնայիր  
ղանկիայ հոգալ : Իր առած կըթու-թեամբն  
աւելի փափկացեալ, ու թշուառու-թեամբն  
աւելի կարիճ ըլլալով, օրէ օր անոր տկա-  
րանալը պիտի տեսնէիր՝ քու աշխատանք-  
ներուդ մասնակից ըլլալու ջանալուն հա-  
մար : Իսկ թէ որ զաւկըներ ալ ծնանէր,  
թէ՛ իր և թէ քու վիշտերդ կ'աւելնային,  
որովհետև շատ դժուար կ'ըլլար ձեզի ծեր  
ծնողքնիդ ու միանգամայն նորածին ազ-  
գատոհմնիդ հոգալ :

» Պիտի ըսես՝ թէ քաղաքապետը մեզի  
կ'օգնէր : Ի՞նչ դիտես թէ գաղթականի  
մը մէջ՝ որուն քաղաքապետները ստէպ  
կը փոխուին, միշտ Տըլասպուրտոնէին պէս  
մարդիկ պիտի գտնես, ժանտ ու չար բար-  
քով մարդիկ չէ՞ն կրնար դալ, քու կի՞նդ

ալ անոնցմէ ոչինչ օգնութիւն մը դտնելու համար չէր կրնար պարտաւորիլ . քրծնելու անոնց : Ասմ' ան է որ իր պարտքին մէջ կը սլակտէր՝ ու դու թշուառ կ'ըլլայիր, կամ զգաստ կ'ըլլար՝ ու ան ժամանակն աղքատ կը մնայիր . և շատ բաղդաւոր կ'ըլլայիր թէ որ անոր գեղեցկութեանն ու առաքինութեանը համար չհալածուէիր նոյն իսկ անոնցմէ՝ որոնցմէ պաշտպանութեան յոյս ունէիր :

» Պիտի ըսես՝ թէ առանց իսկ հարստութեան կարօտ ըլլալու երջանկութիւն մը կը մնար ինծի, այն ինքն է պաշտպանել սիրելիս, որ իր տկարութեանը սրտաճառաւ առաւել ևս կը սիրէր զիս . կրնայի մխիթարել զանիկայ իմ մամառքներովս, իմ տրտմութեամբս ուրախացընել ու աճեցընել մեր սէրը մէկմէկու վիշաբով : Անշուշտ առաքինութիւնն ու սէրը կը վայելեն աս դառն հաճոյքները . բայց Ա իր գինի ողջ չէ . ու կը մնայ հիմա քեզի ինչ որ աւելի կը սիրէր քեզմէ ետքը, այսինքն իր մայրն ու քուկդ, զորոնք գերեզման



պիտի տանի քու անմխիթար սուգդ: Բո-  
լոր երջանկութիւնդ՝ անոնց օգնել ըլլայ,  
ինչպէս որ Վիրգինի ալ ասանկ կ'ընէր:  
Որդեակ իմ, բարեգործութիւնն առաքի-  
նութեան երջանկութիւնն է. չկայ երկրիս  
վրայ ասկէ աւելի հաստատուն ու մեծ  
երջանկութիւն մը: Հաճոյից, հանգըս-  
տութեան, հեշտութեանց, լիութեան ու  
փառքի դիտաւորութիւները, ահար՝ ճամ-  
բորդ ու անցաւոր մարդու համար չեն  
եղած: Տես որ դէպ 'ի հարստութիւն քայլ  
մը առնէնիս՝ մեզ ամէնքնիս ինչ անդունդ-  
ներու մէջ գլորեց: Յիրաւի դու աս բա-  
նիս դէմ կեցար. բայց ո՞վ չէր կարծեր  
որ Վիրգինեայ ճամբորդութիւնն՝ իր և  
քու երջանկութեանդ պատճառ պիտի  
ըլլայ: Տարեց ու հարուստ ազգականի մը  
հրաւերը, խելացի քաղաքապետի մը յոր-  
գորանքը, ամբողջ գաղթականի մը սիրտ  
տալու խօսքերը, քահանայի մը խրախու-  
սական յորդորները և իշխանութիւնն՝  
որոշեցին Վիրգինեայ թշուառութիւնը:  
Այսպէս ահա կը վազենք դէպ 'ի մահ,

խաբուելով նաև զմեզ կառավարող ան-  
ձանց խոհեմութենէն: Անտարակոյս ա-  
ւելի լաւ կ'ըլլար չհաւատալ անոնց, ու  
չվստահանալ խաբեբայ աշխարհի մը ձայ-  
նին ու յոյսերուն: Բայց բոլոր այն մար-  
դիկներուն մէջ՝ զորոնք այնչափ զբաղած  
կը տեսնենք այս դաշտավայրաց վրայ,  
ու անոնց որ հարստութիւն փնտռելու  
համար Հնդկաստան կ'երթան, և կամ  
առանց իրենց հայրենիքէն դուրս ելլելու՝  
Եւրոպայի մէջ հանգստութեամբ ասոնց  
աշխատանաց պտուղը կը վայելեն, մարդ  
մը չկայ՝ որ սահմանեալ չըլլայ օր մը իր  
ամենէն աւելի սիրած բաները թողու,  
պատիւներն, հարստութիւնը, կիներ, տը-  
ղաքն ու բարեկամքը: Շատն ալ իրենց  
կորստեանն հետ՝ նաև իրենց անխոհե-  
մութեան յիշատակը պիտի թողուն:  
Իսկ դու, թէ որ վրագ մտածելու ըլ-  
լաս, քեզ մեղադրելու բան մը չունիս.  
խոստմանդ հաւատարիմ կեցար, ծաղիկ  
հասակիդ մէջ իմաստնոյ մը խոհեմութիւն  
բանեցուցիր՝ չհեռանալով բնութեան ըզ-

գացմունքէն : Քու դիտմունքներդ օրինա-  
ւոր էին • վասն զի մաքուր , պարզ ու ան-  
շահասէր էին , և Վիրգիլեայ վրայ այն-  
պիսի սրբազան իրաւունքներ ունէիր , ո-  
րոնց ո՛ր և իցէ մեծութիւն չէր կրնար հա-  
ւասարիլ : Կորսընցուցիր զանիկայ • բայց  
ոչ քու անխոհեմութիւնդ , ոչ ազահու-  
թիւնդ և ոչ ալ սնոտի ճարտարմտու-  
թիւնդ կորսընցընէլ տուին զանիկայ • հա-  
պա միայն Աստուած , որ ուրիշ կերքերը  
բանեցուց՝ սիրոյդ առարկայն քեզմէ վեր-  
ցընելու համար • Աստուած՝ ուսկից է ա-  
մէն բանդ , որ գիտէ քու օգուտդ , և ո-  
րուն իմաստութիւնը քեզի ամենեկին թող  
չտար որ զզջաս ու յուսահատիս , ինչ-  
պէս որ կ'ընեն մարգիկ այն ճախորդու-  
թիւններուն համար՝ որոնց որ սլառճառն  
իրենք եղած են :

» Դուն քու թշուառութեանդ մէջ աս  
բանս միայն կրնաս ըսել • « Ես արժանի  
չէի անոր » : Միթէ Վիրգիլեայ տարա-  
բաղդութեանը , անոր մահուանը , թէ հի-  
մադուան վիճակի՞ն վրայ կու լաս : Ինքը

վճարեց այն պարտքը, ընդ որով ընկճեալ են ազնուատոհմութիւնը, դեղեցկութիւն և ինքնակալութիւնք իսկ: Մարդուս կեանքը, բոլոր իր դիտմունքներովը, սլզտի աշտարակի մը պէս կը բարձրանայ՝ որուն կատարը մահն է: Ծնած ատենէն դատապարտեալ էր մեռնելու: Երանի՛ անոր, որ կենաց կասպանքները քակեց իր մօրմէն՝ քու մօրմէդ ու քեզմէ առաջ, այսինքն ետքի մահուրնէն առաջ շատ անգամ չմեռաւ:

» Մահն, որդեակ իմ, բարիք մըն է բոլոր մարդկանց համար. այն բազմահոգ օրուան գիշերն է, զոր կեանք կը կոչենք. մահուան քնոյն մէջ կը դադրին բոլորովին հիւանդութիւնք, ցաւերը, վիշտերն ու վախերն՝ որ անդադար ողջ եզող թշուառները կը խռովեն: Դիտէ ամենէն երջանիկ երևցող մարդիկը, կը տեսնես որ շատ սուղ դներ են իրենց խաբեբայ երջանկութիւնը. հասարակաց յարգութիւնը՝ անական վիշտերով ստացեր են, հարըստութիւնն՝ առողջութիւնն ին կտրսընցը:

նելով, սիրելի ըլլալու հաճոյքն՝ որ շատ սակաւագիւտ է՝ անընդհատ զոհերով, ու շատ անգամ՝ կեանքերնին ուրիշի շահուն համար զոհելէն ետքը՝ մեռնելու ատեն, նին իրենց բոլորովն ուրիշ քան չեն տեսներ, բայց եթէ սուտ բարեկամներ ու ապերախտ ազգականներ: Բայց Վիրգիլի ինչուան կենաց ետքի կէտը երջանիկ եղաւ. նախ բնութեան բարիքներովը մեղի հետ երջանիկ ապրեցաւ, մեղմէ հեռու ալ՝ առաքինութեան բարիքներովը. նաև ան սարսափելի վայրկենին որ ընկղմիլը տեսանք, դեռ երջանիկ էր. վասն զի թէ ամբողջ գաղթականի մը վրայ աչքերը դարձուցած ատենը՝ որուն սուգ կը պատճառէր, և թէ քու վրագ՝ որ այնչափ կը տրոջութեամբ անոր օգնութեան կը վազէիր, տեսաւ իր որքան սիրելի ըլլալը մեղի ամենուս: Զինուեցաւ ապագային դէմ, անցուցած կեանքին անմեղութեանն յիշատակաւ. և ան ատեն առաւ այն վարձքն՝ որ Աստուած կու տայ առաքինեաց, այսինքն արիութիւն մը մեծ քան







զվտանգս . ասով է որ անխուով դէմք մը  
ցուցուց մահուան :

» Արդեակ իմ, Աստուած թող կու տայ  
որ առաքինիք մեր կեանքին բոլոր թշուա-  
ռութիւնները քաշեն, որպէս զի ցուցնէ  
թէ առաքինիները միայն կրնան զանոնք  
աղէկի գործածել, ու անով երջանկութիւն  
և փառք ստանալ: Երբոր երևելի անուն  
մը կ'ուզէ տալ անոնց, բարձր թատրոնի  
մը վրայ կը հանէ, ու մահուան հետ պա-  
տերազմել կու տայ . ան ատեն անոնց  
կտրըճութիւնն օրինակ կ'ըլլայ, ու ետ-  
քէն եկողներն որդուց որդի անոնց թը-  
շուառութեանցն յիշատակին վրայ ար-  
ցունք կը թափեն: Ահաւասիկ անմահ յի-  
շատակարան մըն է ասիկայ՝ որ անոնց  
պահուած է այս անցաւոր երկրիս վրայ,  
ուր որ թագաւորաց շատերուն յիշատակն  
ալ՝ շուտով մը կը թաղուի յաւիտենական  
մոռացութեան մը մէջ:

» Բայց Վերգիլի դեռ կենդանի է: Ար-  
դեակ իմ, տես որ ամէն բան կը փոխուի  
երկրիս վրայ, այլ բան մը չկորսուիր .

չկայ մարդկային արուեստ մը որ կարե-  
նայ ոչնչացընել նիւթին փոքրագոյն մաս-  
նիկները. ու ան որ բանական՝ զգայուն՝  
սիրող՝ առաքինի ու կրօնասէր էր, մի-  
թէ կ'ոչնչանայ, երբոր իր տարերքները  
անեղծանելի են : Ա՛հ, չէ. թէ որ Ախր-  
գինի մեր հեան երջանիկ էր, երջանկա-  
գոյն ևս է հիմա : Աստուած մը կայ, որ-  
դեակ իմ, և բոլոր արարածք կը ծանու-  
ցանեն զան. հարկ չկայ քեզի ասպացու-  
ցանելու. միայն մարդկանց գէշութիւնն  
է՝ որ ուրացընել կու տայ իրենց այն ար-  
դարութիւնն՝ ուսկից կը վախնան : Անոր  
զգացմունքը սրտիդ մէջն է, ինչպէս որ  
գործերն աչքիդ առջին են : Իսկ արդ կար-  
ծես որ Ախրգինին անվարձ կը թողու-  
կարծես թէ արարիչն՝ որ այն ազնուա-  
կան հոգւոյն այնպիսի գեղեցիկ մարմին  
մը հագուեցուցեր էր, որ աստուածային  
արուեստ մը կ'երևար վրան, չէր կրնար  
ազատել զանիկայ ալիքներուն մէջէն.  
կարծես թէ անիկայ որ մարդկանց արգի-  
բարեբաստութեանն համար այնպիսի օ.

ընկերներ դրեր է՝ որ դու չես հասկընար ,  
չըկընար ուրիշ բարեբաստութիւն մը չը-  
նորհել Վիրգինեայ այնպիսի օրէնքնե-  
րով որ անձանօթ ըլլան քեզի : Քանի որ  
մենք ոչնչութեան մէջն էինք , թէ որ կա-  
րենայինք մտածել , մեր գոյութեան կեր-  
պին վրայ կրնայինք գաղափար մը ստա-  
նալ : Եւ հիմա ալ որ այս խաւարային ու  
անցաւոր գոյութիւնն ունինք , կրնանք  
մահուընէ ետքը ըլլալիքները գուշակել :  
Միթէ Աստուած մարդուն պէս կարօտ է  
այս սղախի աշխարհիս՝ իր բարութիւնն  
ու իմաստութիւնը հանդիսացընելու հա-  
մար , և միթէ մահուան դաշտերո՞ւն մէջ  
միայն կրնայ կեանք բաշխել : Ովկիանոսին  
մէջ կաթիլ մը ջուր չկայ՝ որ լեցուն չը-  
լայ ողջ կենդանիներով որ մեր իշխանու-  
թեանը տակ չըլլան . ուրեմն բան մը պի-  
տի չգտուի մեզի համար այնքան աստղե-  
րուն մէջ՝ որ մեր գլխուն վրայ կը պտը-  
տին : Ի՞նչ , գերագոյն իմաստութիւնն ու  
երկնային բարութիւնը՝ միայն մեր եղած  
տեղը կը գտնուի , և այն ճառագայթար-

Ճակ ու անթիւ գունտերուն, և զանոնք  
պատող լուսոյ անհուն ասպարէզներուն  
մէջ, որ ոչ փոթորիկներն և ոչ գիշերներն  
երբէք կը մթնցընեն, գատարկութիւն  
ու յաւիտենական ոչնչութիւն միայն կայ :  
Եթէ մենք, որ յանձնէ բան մը չունինք,  
համարձակէինք սահման դնել այն ամե-  
նակալ զօրութեանն՝ ուսկից որ ամէն բան  
ընդունած ենք, կրնայինք ըսել թէ այս  
աշխարհիս մէջ իր ինքնակալութեան սահ-  
մանաց եզերքին վրայ ենք, ուր կեանքը  
մահուան հետ, ու անմեղութիւնը բռնա-  
ւորութեան հետ կը պատերազմի :

» Անտարակոյս կայ անանկ տեղ մը՝ ուր  
առաքինութիւնն իր վարձքը պիտի ընդու-  
նի : Վերգինի հիմա երջանիկ է : Ա՛հ, թէ  
որ հրեշտակաց բնակարանէն կարենար  
քեզի հետ խօսակցիլ, պիտի ըսէր քեզի,  
ինչպէս իր ետքի բարեր տալուն ատենը  
կ'ըսէր . « Ո՛վ Պօղ, կեանքը փորձ մըն է :  
Ես հաւատարիմ գտնուեցայ բնութեան,  
սիրոյ և առաքինութեան օրէնքներուն :  
Ծովէր կտրեցի անցայ ծնողացս հնազան-

գելու համար, հարստութիւններէ հրա-  
ժարեցայ խոստմունքս պահելու համար,  
ու ալ աւելի ընտրեցի կեանքս կորսըն-  
ցընել՝ քան թէ պարկէշտութեան գէմ  
մեղանչել: Աստուած իմ կեանքս բաւա-  
կան լցուած սեպեց: Բոլորովին ազատե-  
ցայ աղքատութենէ, զրպարտութենէ,  
փոթորիկներէ և ուրիշի ցաւերու տե-  
սարաններէն: Մարդս վախցընող ձա-  
խորդութիւններէն բնաւ մէկը այսուհե-  
տե չկրնար ինծի հասնիլ. ու դու դեռ  
կը խղճաս իմ վրաս: Առսոյ նշուելի մը  
պէս՝ մաքուր ու անփոփոխ եմ. ու դու  
կը հրաւիրես զիս կենաց գիշերը: Ո՛վ Պօլ,  
ո՛վ բարեկամ իմ, միտքդ բեր այն երջան-  
կութեան օրերն՝ ուր առաւօտանց սկը-  
սեալ կը վայելէինք երկնից զուարճութիւ-  
նը, արևուն հետ մեկտեղ ելլելով այս  
ժայռերուն կատարներուն վրայ, ու ա-  
նոր ճառագայթներուն հետ մտնելով մեր  
անտառներուն մէջ. զմայլմունք մը կը  
զգայինք, առանց պատճառն հասկընա-  
լու: Մեր անմեղ փափաքանօքը կը բաղ-



ձայինք՝ որ բոլոր մարմինն իս աչք ըլլար ,  
արշալուսոյն գեղեցիկ գոյները վայելու  
համար . բոլոր մարմինն իս հոտոտելք ըլ-  
լար , մեր բոյսերուն անուշահոտութիւնն  
առնելու համար . բոլոր մարմինն իս լսե-  
լք ըլլար , մեր թունոց գեղգեղը մտիկ  
ընելու համար . ու բոլորովին սիրտ ըլ-  
լայինք՝ այս բարերարութեանց երախտա-  
գէտ ըլլալու համար : Հիմա գեղեցիկու-  
թեան աղբիւրին քովն՝ ուստի կը բղխէ  
երկրիս վրայ գանուած բոլոր հաճոյական  
բաները , հոգիս կը տեսնէ՝ կը վայելէ՝ կը  
լսէ՝ կը շօշափէ մօտէն ինչ որ աւաջ միայն  
տկար գործարանքներով կը զգար : Ո՛հ ,  
ո՞ր լեզու կրնայ ստորագրել այս յաւի-  
տենական արևելքին ափունքներն՝ ուր  
յաւիտեան կը բնակիմ : Ինչ որ Աստուած  
իր անհուն կարողութեամբն ու երկնային  
բարութեամբը կրցեր է ստեղծել՝ թշուառ  
արարած մը մխիթարելու համար . ինչ  
ներգաշնակութիւն որնոյն երանութիւնը  
վայլող անթիւ արարածոց իրարու վրայ  
ունեցած սէրը կու տայ մէկմէկու վրայ





խանդաղանօք յափշտակուած ատեննին ,  
մենք կը ժառանգենք զայն լիուլի : Հան-  
դիսացիր ուրեմն քեզի տրուած փորձին  
մէջ , որպէս զի քու Վիրգինիիդ երջանկու-  
թիւնն աւելցնես անվերջանալի սիրով  
ու այնպիսի պսակով մը՝ որուն ջահերն  
ոչ երբէք պիտի մարին : Ան ատեն ցա-  
ւերդ պիտի դադրեցնեմ , ան ատեն ար-  
ցունքներդ պիտի սրբեմ : Ո՛վ բարեկամ  
իմ , ո՛վ իմ ծաղկահասակ ամուսինս ,  
բարձրացուր քու հոգիդ դէպ ՚ի անանցը ,  
վայրկենական վիշտերուն դիւրաւ տանե-  
լու համար » :

Սրտիս խռովութիւնը խօսքս կարեց .  
իսկ Պօղ ուշադրութեամբ նայելով ինծի՝  
կանչեց . « Ողջ չէ՛ , ողջ չէ՛ » . ու այս ցա-  
ւագին խօսքերն ըսելով ինկաւ մարեցաւ  
երկար ատեն : Ետքը ինքն իրեն գալով  
ըսաւ . « Թէ որ մահը բարեք մըն է , և  
Վիրգինի երջանիկ է , ես ալ մեռնիլ կ'ու-  
զեմ Վիրգինեայ քովն երթալու համար » :  
Այսպէս ահա իմ միսիթարութեան խօս-  
քերս պատճառ եղան անոր յուսահա-

տու թիւնը սաստկացնելու : Նման էի ան  
մարդուն՝ որ ազատել կ'ուզէ գետի մը  
մէջ ընկղմող՝ ու լողալ չուզող բարեկա-  
մը : Այսպէս Պօղ ալ ցաւոց մէջ ընկրղ-  
մեր էր : Ափսո՛ս որ անփորձ էր ինքն ին-  
չուան այն ատեն այն թշուառութիւննե-  
րուն՝ որ մանկութենէ սկսեալ կը սա-  
տրաստեն զմարդ կենաց մէջ մտնելու :

Գարձուցի զինքն իր բնակարանն . ու  
գտայ հոն իր մայրն ու Տըլադուր տիկինն  
առջինէն աւելի նուազեալ : Մարգարիտա  
ամենէն աւելի տկարացած էր . աշխոյժ  
բնաւորութիւններն՝ որ թեթև վշտերէ  
առանց փնասուելու կ'անցնին , մեծամեծ  
վշտաց ամենեկին չեն կրնար դիմանալ :

Մարգարիտա ըսաւ ինծի . « Ո՛վ իմ  
բարի գրացիս , այս գիշեր Ա իրգինին տե-  
սայ՝ որ ճերմակներ հագած անտառնե-  
րու և գեղեցիկ պարտէզներու մէջ կը  
պարտէր , ու կ'ըսէր ինծի . « Նախանձե-  
լի երջանկութիւն մը կը վայելեմ » : Ետ-  
քը խնտում երեսով Պօղի մօտեցաւ՝ ու  
յափշտակեց տարաւ հետը . և երբոր էս

կը ջանայի զաւակս թող չտալու, իմացայ որ ես ալ կը թողուի երկիրս՝ ու ետեկն կ'երթայի անպատմելի ուրախութեամբ մը : Ան միջոցին մնաս բարով ըսել ուղեցի բարեկամութեանս, ու տեսայ որ ան ալ Մարիամին ու Գոմինիկոսին հետ ետենէս կու գար : Բայց զարմանալին այն է՝ որ Տըլադուր տիկինն ալ այս գիշեր երազ մը տեսեր է մի և նոյն պարագաներով » :

Իսկ ես պատասխան տուի . « Սիրելիդ իմ, ես հաստատ միտքս դրած եմ՝ որ աշխարհիս մէջ բան մը չպատահիր առանց Աստուծոյ կամացը . երազներն իսկ երբեմն ճշմարտութիւնը կ'իմացընեն » :

Տըլադուր տիկինն ալ պատմեց ինծի ասոր բոլորովին նման երազ մը՝ որ նոյն գիշերը տեսեր էր : Ոչ երբէք այս տիկիններուն վրայ աւելորդապաշտութեան նըշան մը տեսած էի . ուստի խիստ ապշեցայ իրենց երազին նմանութեանը վրայ, ու մտքիս մէջէն ամենեկին չտարակուսեցայ ասոնց արդեանցն ստուգուելուն վը-



րայ : Այս կարծիքս՝ թէ ճշմարտութիւնն  
երբեմն կ'երևայ մեզի քուններնուս մէջ,  
ծաւալած է ամէն ազգաց մէջ : Հին Ժա-  
մանակի խիստ երևելի անձինքն ալ հա-  
ւատացեր են աս բանիս . ինչպէս են Ա-  
ղեքսանդր , Կեսար , Սկիպիոններ , եր-  
կու Կատոններն ու Բրուտոս , որոնք աը-  
կար խելքով մարդիկ չէին : Հին և Նոր  
Կտակարանը մեզի անբաւ օրինակներ կու  
տայ երազներու՝ որոնք եաքը ստոյգ ելեր  
են : Իսկ ինծի համար , միայն իմ փորձա-  
ռութիւնս բաւական է . շատ հեղ փոր-  
ձեցի տեսայ որ երազներն ազդեցութիւն  
ներ են՝ որ մեր վրայ խնամք տանող միտք  
մը մեզի կու տայ : Միայն թէ որ ուղէ մէ-  
կը վիճաբանութեամբ դէմ դնել կամ  
պաշտպանել այնպիսի բաներ՝ որոնք մարդ-  
կային խելքէն շատ վեր են , ասիկայ ան-  
կարելի բան է : Սակայն թէ որ մարդուս  
խելքն՝ աստուածային մտաց պատկերն  
է , որովհետև մարդս կարողութիւն ունի  
իր դիտմունքներն ինչուան աշխարհիս  
ծայրը հասցընելու գաղանի ու ծածուկ

միջոցներով, ինչո՞ւ համար հապա աշխարհս կառավարող իմացականութիւնն ասոնց նման միջոցներ պիտի չբանեցընէ՝ նոյն վախճանին համար: Բարեկամ՝ մը իր բարեկամը թղթով մը կը մխիթարէ, որ անբաւ թագաւորութիւններու մէջէն կ'անցնի, կը պտըտի իրար ատող ազգերու մէջ, ու կու գայ ուրախութիւն և յոյս բերելու մէկ մարդու մը միայն. ուրեմն ինչո՞ւ համար անմեղութեան գերագոյն պաշտպանը գաղտուկ ճամբով մը առաքինի հոգւոյ մը օգնութեանը պիտի չգայ, որ բոլորովին իրեն վրայ միայն վրատահացած է: Ի՞նչ հարկ կայ որ արտաքին նշան մը բանեցընէ իր կամբը կատարելու համար, ինքն որ իր ամէն գործոցը մէջ միշտ ներքին ազդեցութեամբ կը ներգործէ:

Ի՞նչ պէտք է տարակուսիլ երազներու վրայ. միթէ կեանքերնիս՝ որ այնչափ անցաւոր ու փուճ դիտմունքներով լցուած է՝ երազ չէ՞ արդեօք:

Ի՞նչ որ ալ ըլլայ, իմ թշուառ բարե-

կամուհիններուս տեսած երազը շուտով ստուգուեցաւ . Պօղ մեռաւ իր սիրելի Վիրգինիին մահուընէն երկու ամիս ետքը՝ որուն անունը միշտ բերանն էր : Մարգարիտան իր զաւկին մեռնելէն ութ օր ետքը տեսաւ իր վախճանին հասնիլը՝ այնպիսի ուրասուութեամբ մը, որ միայն առաքինութեան տրուած է . խիստ սրտաշարժ խօսքերով հրաժեշտի ողջոյնը սրլաւ Տըլադուր տիկնոջ, ըսելով թէ « Քապր ու յաւիտենական միութեան մը յուսով քեզմէ կը բաժնուիմ : Մահն ամենէն մեծ բարիքն է, աւելցուց, պէտք է փափաքինք անոր : Թէ որ կեանքը սատիժ մըն է, պէտք է անոր վախճանին բաղձալ . թէ որ փորձ մըն է, պէտք է ցանկալ որ կարճ ըլլայ » :

Տէրութիւնը հոգ ունեցաւ Դոմինիկոսին ու Մարիամին վրայ, որ ալ կարող չէին ծառայութիւն ընելու, և որոնք իրենց տիկիններուն մահուընէն ետքը շատ չապրեցան : Իսկ խեղճ հաւատարիմը վիշտէն մեռեր էր՝ դրեթէ իր տիրոջն հետ մէկտեղ :

Առի իմ՝ բնակարանս տարի Տըլադուր տիկինն, որ այսպիսի դասն կորուստներու անհաւատալի արիութեամբ մը կը համբերէր: Մխիթարեր էր ինքը Պօղն ու Մարգարիտան ինչուան անոնց ետքի շունչը, իբրև թէ իր կրելու վիշտը՝ միայն անոնց կրածն ըլլար: Երբ ալ չտեսաւ զիւրենք՝ ամէն օր կը խօսէր ինծի անոնց վըրայով, իբր սիրելի բարեկամներու վըրայ՝ որոնք մօտ տեղ էին: Այսու ամենայնիւ՝ ամիսի մը չափ միայն ապրեցաւ անոնցմէ ետքը: Իսկ հօրաքեռը համար՝ փոխանակ զանիկայ պատճառ բռնելու իր վիշտերուն, կ'աղօթէր Աստուծոյ որ ներէ անոր ու հանդարտեցընէ անոր մտքի ահաւոր խռովութիւններն՝ որոնցմով լսեցինք թէ Վիրգինին այնպիսի անգթութեամբ ճամբէլէն անմիջապէս ետքը կը տանջուի եղեր:

Այս անողորմ ազգականն իր խտասրտութեանը պատիժը շուտով քաշեց լսեցի հեղհետէ եկող նաւերէն թէ աստուծանքի հիւանդութենէն կը չարչա-

րուէր, որ իրեն անտանելի կ'ընէր թէ  
կեանքն և թէ մահը: Երբեմն կը մեղա-  
դրէր ինքզինքը իր սիրուն եղբօր թուանը  
կանխահաս մահուանն՝ ու հետևաբար ա-  
նոր մօրը վախճանելուն վրայ: Երբեմն ալ  
կ'ուրախանար քովէն վաւրնաւելուն համար  
երկու թշուառներ՝ որոնք վատահամբա-  
ւեցին, կ'ըսէր, իր ազգատոհմը իրենց  
ցած հակամիտութիւններովը: Երբեմն  
երբոր կը տեսնէր անթիւ ողորմելիներն՝  
որոնցմով լցուած է Բարիղ քաղաքը՝ զայ-  
րազին կը գոչէր. « Ինչո՞ւ համար չեն  
խրկեր այս անգործ մարդիկն՝ որ եր-  
թան վաճանան մեր գաղթականներուն  
մէջ »: Կ'աւելցընէր ըսելու թէ մարդա-  
սիրութեան՝ առաքինութեան՝ կրօնքի գա-  
ղափարներն՝ որ ամէն ազգերէ ընդու-  
նուած են, միայն անոնց իշխաններուն  
քաղաքագիտութեանը գիւտերն են: Եա-  
քը յանկարծ հակառակ ծայրն անցնե-  
լով՝ աւելորդապաշտական վախերով կը  
պաշարուէր, որոնք մահու սարսափով  
կը լեցընէին զինքը. կը վազէր առատ ո-



զորմութիւններ բաժնելու իրեն առաջ-  
նորդող կրօնաւորաց, աղաչելով անոնց՝  
որ իր հարստութեանը զոհերով Աստու-  
ծոյ բարկութիւնը հանդարտեցնեն. իբր  
թէ թշուառներու չառուած ինչքերը՝ կըր-  
նային հաճոյ ըլլալ մարդկանց հօրն՝ Աս-  
տուծոյ : Աստ հեղ երևակայութեանը  
մէջ կը տեսնէր կրակէ գաշտեր՝ բռնկած  
լեռներ, ուր զաղըատեսիլ ուրուականներ  
կը թափառէին բարձր աղաղակաւ զինքը  
կանչելով : Վ'իշխար ան ատեն իր առաջ-  
նորդաց ոտքն, և իր անձին դէմ տան-  
ջանքներ ու ապաշխարանքներ կը հնա-  
րէր. վասն զի Աստուած, արդարագատն  
Աստուած, անգութ հոգիներու վրայ սար-  
սափելի երկիւղածութիւններ կը խրկէ :

Այսպէս անցուց շատ տարիներ՝ եր-  
բեմն անաստուած, երբեմն աւելորդա-  
պաշտ, հաւասարապէս սոսկալով մա-  
հուրնէ ու կեանքէ : Եւ նոյն իսկ այն ա-  
ռիթը վերցուց իր աւաղելի կեանքը, ո-  
րուն համար որ զոհեր էր իր բնական ըզ-  
գացմունքները : Վասն զի տեսնելով որ



իր հարստութիւնն իրմէ ետքը պիտի անցնէր իր ատած ազգականներուն, ջանաց անոր մեծ մասն ուրիշի վրայ դարձրնել : Բայց անոնք՝ առիթ առնելով իր հիւանդութեան զայրանալուն միջոցները, իբրև խենթ յիմարանոց դնել տուին զինքը, ու ինչքերն ուրիշի կառավարութեանը յանձնեցին : Այսպէս ահա բուն իսկ իր հարստութիւնները պատճառ եղան իր կորստեանը. և ինչպէս որ խստացուցեր էին իրենց տիրոջը սիրտը, այսպէս զիրենք ձեռք ձգելու փափագողներուն սիրտն ալ կարծրացուցին : Մեռաւ վերջապէս, և որ թշուառութեան յետին ծայրն է՝ բաւական խելքը գլուխն էր ճանչնալու համար՝ որ կողոպտուած ու անարգուած էր նաև այն անձինքներէն՝ որոնց կարծիքովը կառավարուեր էր բոլոր կենացը մէջ :

Վերգինեայ քովը՝ նոյն եղէգներուն տակը թաղեցին իր բարեկամը Պօղն, ու անոնց բոլորովքը՝ սիրելի մայրերնին ու հաւատարիմ սպասաւորնին : Չկանգնե-

ցին մարմարինէ շիրիններ անոնց աղքատիկ գերեզմաններուն վրայ, ու չփորեցին տապանագիրներ անոնց առաքինութիւնք. բայց յիշատակին անշնչելի մնաց անոնց սրտին մէջ՝ որոնց երախտիք ըրեր էին: Անոնց ստուերները կարօտ չեն փառաւորութեան, ուսկից փախեր էին իրենց կենացը միջոց. բայց թէ որ դեռ մասնակից կ'ուզեն ըլլալ երկրիս վրայ եղած բաներուն, անշուշտ աւելի կը սիրեն թափառիլ խրճիթներու մէջ՝ ուր կը բնակի աշխատասէր առաքինութիւնը, մխիթարել իրենց վիճակէն աժգոհ աղքատներն, ու տածել երիտասարդ սիրահարներու սրբտին մէջ անշէջ բոց մը, բնութեան բարեքներուն փափաքը, աշխատութեան սէրն ու հարստութեան վախը:

Ժողովրդեան ձայնն՝ որ թագաւորներու փառացը համար կանգնուած յիշատակարաններուն առջև կը լռէ, այս կըզգույս քանի մը տեղերուն անուաններ դրած է, որոնք պիտի յաւերժացընեն Արիգինեայ մահը: Կը տեսնուի Ամսր կղզւոյն


մօտ՝ ժայռերու մէջ՝ տեղ մը կիրճ ՍԷՆ-  
ժէրԱՏԻ ըսուած, այն նաւուն անունէն՝  
որ զանիկայ Եւրոպայէն բերելու ատեն  
հոն խորտակեցաւ: Այն հրուանգանն՝ որ  
իրեք փարսախ հեռուն կը տեսնես ծո-  
վուն ալիքներէն կէս մը ծածկուած, ուս-  
կից փոթորկին նախընթաց օրը Սէն-ժէ-  
րան չկրցաւ դառնալ՝ նաւահանգիստ մըտ-  
նելու համար, կը կոչուի ՀՐՈՒՍՆԴԱՆ ԹԸ-  
ՇՈՒՍՈՒԹԵՍՆ. ու սհաւասիկ դիմացնիս  
այս հովտին ծայրն է ԾՈՅ ԳԵՐԵԶՄԱՏԻ Ը-  
սուածը, ուր Վիրգինի աւազին մէջ թա-  
ղուած գտնուեցաւ. իբրև թէ ծովն ու-  
ղած ըլլար բերել անոր մարմինն իր ըն-  
տանեացն, ու անոր պարկեշտութեանն  
յետին ծառայութիւնը մատուցանել այն  
ափունքներուն վրայ՝ զորոնք պատուեր  
էր իր անմեղութեամբը:


Ո՛վ սիրակցորդ պատանիք, ո՛վ դըժ-  
բաղդ մարք, ո՛վ սիրուն գերդաստան, այս  
անտառներն՝ որ ձեզի շուք կու տային,  
այս աղբիւրներն՝ որ ձեզի համար կը վա-  
զէին, այս բլուրներն՝ ուր մէկտեղ կը հանգ-

չէիք, դեռ կ'ողբան ձեր կորուստը: Ձեզ մէ ետքը ոչ ոք համարձակեցաւ մշակել այս լքեալ երկիրը, ու կանգնել այս անպաճոյճ հիւղերը: Այժմերնիդ վայրենացան, ստղատու ծառաստաննիդ փձացան, ձեր թռչունները փախան հեռացան, ու հիմա բաղէներու ձայնը միայն կը լսուի, որոնք սա ժայռերուն աւազանաձև ձորին վրայ բարձրէն ոլորտաձև կը թռչին: Իսկ ես այն ժամանակէն 'ի վեր՝ որ զձեզ չեմ տեսներ, կը նմանիմ բարեկամի մը՝ որ զբր կուած է իր բարեկամներէն, հօր մը՝ որ կորուսեր է իր զակերները, ճամբորդի մը՝ որ մոլորած կը շրջի երկրիս վրայ՝ ուր մինաւոր մնացի:

Այս խօսքերս զուրցելով բարի ծերունին՝ արցունք թափելով հեռացաւ ինծմէ. ինչպէս որ իմ արցունքներս ալ շատ անգամ վազեր էին այս աղէտալի պատմութիւնը լսելուս ատեն:









51

1111

1111

2956

П-2ЦЛ

П-2ЦЛ  
П-2ЦЛ

22013

